



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3681

1920

491.99-8

L-61

Y-4 2811

~~32-201526~~ 096 5/x132

AB 20 02

2010

491.542-82
L-62

ԼՈՒՍԱԲԵՐ



498
108-Lh

491.99-8

L-61

428
108-ԼԻ

ԼՈՒՍԱՐԵՐ

Բ. ՏԱՐԻ

Կ Ս. Զ Մ Ե Յ Ի Ն

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ, ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ [REDACTED]




ՏԱՄՆԵԻՉՈՐՏԵՐՈՐԴ ՏԻՊ
(Բարեփոխած)



Մեր ինքնուրոյն եւ փոխադրած յօդածների, ինչպէս եւ մեր նկարների արտատպութեան իրաւունքը վերապահւած է

ԹԻՖԼԻՍ
Տպարան «Աշխատուր», Դոլով. 39
1920

ԲԿԿ
8
1001



1. Լուսաբացին

—Ծուղրուղն.

աքլորը զիլ կանչեց թառին:

—Ճիկ—ճիկ, ճիկ—ճիկ.

զարթնեց մթնում ծիտը ծառին:

—Ծուղրուղն.

խօսեց ծէգին երկրորդ բերան:

—Հօ-հօ, հօ-հօ.

նախիրն արդէն հանդը տարան:

—Ծուղրուղն.

լոյսը բացւեց երրորդ կանչին:

—Վոլ, վոլ, վոլ, վոլ.

նստեց նանը տեղի միջին:

Ինչու է նանը վոլ-վոլ անում:

Ծէգ. — Լուսաբաց:

հանդ. — զաշտ, արօտառեղ:

1. Աքլորը խօսեց. ուրիշ ինչպէս կ'ապեմ միևնոյն բանը: Իսկ ինչպէս կ'ապեմ՝ նստեց նանը տեղի միջին:

2. Ինչ ասել է երկրորդ բերան կանչել, մի բերան ասել:

2. Աստու սեղանը

1.

Գարնանը բարի Աստուածն ասաւ.

—Սեղան բաց արէք փոքրիկ ճիճուների համար:

Եւ իսկոյն կեռասենին ծածկեց կանաչ տերևով:

Զարթնեց փոքրիկ ճիճուն, սկսեց կրծել թարմ տերևները

ու ասաւ.

—Ո՞վ է պատրաստել ինձ համար այս հրաշալի սեղանը:

2.

Բարի Աստուածը նորից ասաւ.

—Սեղան բաց արէք ժիր մեղի համար:

Եւ իսկոյն կեռասենին բաց արաւ իր սպիտակ ծաղիկները:



Մեղուն գարթնեց արշալոյսին ու արգարզալով թռաւ դէպի կեռասենին: Թռչում էր ծաղկից ծաղիկ ու ամենքից միմի կաթիլ ծծում:

—Ա՛խ, ինչ անուշ խմիչք է, — մտածում էր նա իր փեթակը շտապելով, — էս ո՞վ է պատրաստել ինձ համար:

3.

Եկաւ ամառը: Ու բարի Աստուածն ասաւ.

—Սեղան բաց արէք փոքրիկ թռչունների համար:

Եւ կեռասենուն վրա երևացին թարմ ու կարմիր պտուղները: Ուտում էին փոքրիկ թռչնակներն ու խաղում.

—Ա՛խ, ինչ լիքը սեղան է. էս ո՞վ է բաց արել մեզ համար:

4.

Աշնանը բարի Աստուածն ասաւ.

—Ամենքը լիացան. վեր քաղեցէք սեղանը:

Ու վեր կացաւ սառը քամին, թափեց, տարաւ դեղնած տերևները: Տկլոր կեռասենին դողում էր ցրտից:



—Ծածկեցէք դրան, որ չը մրսի, — ասաւ բարի Աստուածը: Ու եկաւ ձմեռը, փափուկ ձիւնով ծածկեց կեռասենուն մերկ ճիւղերը:

Պատմի՛ր կեռասենու կեանքը տարալ ընթացքում:

Գրի՛ր զրբին նայելով միայն կեռասենու մասին, թէ նա ինչ եղաւ զարնանը, ասառը, աշնանն եւ ձմեռը:

Շուտ ասելու է. — Մեր դռանը տաքը ծանր-ծանր տանձի ծառ, ձեր դռանն էլ տաքը ծանր-ծանր տանձի ծառ:

ճիճուն — որդի:

հրաշալի — շատ լաւ, շատ գեղեցիկ:

ժիր — աչքաբաց, շարժուն — աշխատասէր:

1. Սեղանը բաց անել: Ուրիշ ինչպէս կ'ասես միևնույն բանը: Իսկ սեղանը վեր քաղէ՞ր:

5. Ինչ ասել է կեռասենի: Ինչպէս կը լինի նոյնը տանձ, խնձոր, սալոր բառերից:

3. Ինչ բան է կրծելը. ինչ բան է ծծելը. հապա ծամելը:

4. Ուրիշ ինչպէս կ'ասես՝ թարմ, խմիչք, մերկ:

3. Հովիւի հրաժեշտը

Մնաք բարով, դուք, արօտներ սիրուն,
ամառն անց կացաւ, հօտն իջնում է տուն:

Մենք ետ կը գանք ձեզ նորեկ գարունքին,
երբ զարթնեն ուրախ երգերը կրկին,
երբ որ սարերը զուգեն կանաչով,
երբ որ ջրերը վազեն կարկաչով

Մնաք բարով, դուք, արօտներ սիրուն,
ամառն անց կացաւ, հօտն իջնում է տուն:

Հովիւը ինչո՞ւ է աշնանը սարից հեռանում:
Հօտը հրտեղ է անց կացնում ծմեռը:

հրաժեշտ—Մաս-բարով:

նորեկ—նոր-եկող:

կրկին—նորից:

արօտ—աղածելու տեղ, խոտաւէտ գետին:

1. Ի՞նչ առել է հօտ. իսկ նախիր: Ի՞նչ առել է հոտ (ո-ով):
2. Ուրիշ Բնչպէս կ'ասես սարերը զուգեն են:

4. Ծիծեռնակների չուն

1.

Սշուներ մօտենում էր:

Ծիծեռնակները ամեն իրիկուն հաւաքւում էին, շարւում
մի կառուրի ծայրին կամ հեռագորի թելերի վրա ու անհան-
գիստ ծըլւելում:

—Ինչպէս դեղնել է խոտը,—ասում էր մէկը,—Ամբողջ օրը
հազիւ մի բանի թիթեռ ճարեցի:

—Տերեւները թափւում են, եղէգները չորանում, մոլորակ-
ները էլ չեն երևում: Մնացել են միայն հատ-հատ ճանճեր,—
ասում է միւսը:

—Եւ օրը Բնչքան է կարճացել,—մէջ մտաւ երրորդը,—
Դեռ կշտացած չես լինում, մէկ էլ տեսար մթնեց: Գիշեր-
ներն էլ այնպէս ցնւրտ է:

Այսպէս հաւաքւում ու զանգատւում էին ծիծեռնակները:
2.

Մի իրիկուն էլ բոլոր ծիծեռնակները ժողովւեցին բարձր
զանգակատան գլխին: Այնքան շատ էին, որ զանգակատունը
սեին էր տալիս:

—Չէ՛ չէ,—ասում էին ջահելները.—էլ դիմանալու բան
չէ: Գիշ էլ որ մնանք, սովից կը կոտորւենք:

—Ժամանակ է որ չւենք,—յայտնեցին ծերերը:

Այդ գիշեր ծիծեռնակները բոլորը միասին անց կացին
եկեղեցու գմբէթին: Իսկ առաւօտը վաղ, լուսաբացին, ամ-
բողջ երամբ վեր կացաւ ու ճուղղելով սկսեց պտոյտներ ա-
նել տների գլխին:

—Մնաք բարով, մեր սիրունիկ բունիկներ,—կանչում էին
ծերերը:

—Մնաք բարով, մեր փափուկ օրօրաններ,—կանչում էին
ջահելները:

Ու բոլորը միասին սլացան դէպի վեր, բարձր, բարձր, ու
ձգւեցին դէպի հարաւ, դէպի տաք երկիրները:

Բարի ճանապարհ, բարի ծիծեռնակներ:

Էլ ի՞նչ չտող թռչուններ գիտէք: Ինչո՞ւ են չում թռչունները:

Տեսե՛ր նա որ եւ է թռչունի չելը: Տեսածդ պատմի՛ր:

Գրի՛ր՝ ո՞ր թռչունները ե՞րբ են չում մեր երկրից:

չու—մի տեղից միւս տեղ գնալը, քոչ:

գմբէթ—չէնքի, մասնաւորապէս եկեղեցու գլխի բարձր ու սուր
ծայրը:

սլանալ—արագ թռչել:

երամ—թռչունների խումբը:

1. Ի՞նչ առել է՝ —սեին էր տալիս, կարմրին էր տալիս, սպիտա-
կին էր տալիս:
2. Ուրիշ Բնչպէս կ'ասես՝ ճարեցի, հաւաքւեցին, զանգատ-
ւել, ճուղղել:
3. Երբ ենք ասում՝ մնաք բարով, երբ ենք ասում՝ բարի ճա-
նապարհ:

5. Ծիծեռնակ



Ծիծեռնակ, ծիծեռնակ,
դու գարնան սիրուն թռչնակ.
դէպի ուր, ինձ ասա,
թռչում ես այդպէս արագ:

6. Խելօք երեխաներ

1.

Քուրիկն ու Սուրիկը գնում էին տատիկի մօտ: Երբ հասան փոքրիկ գետակին, տեսան որ տախտակը չը կայ, որի վրայով միշտ գնում-գալիս էին:

Իսկ տատիկը խիստ արգելել էր՝ երբէք ջուրը չը մտնեն, որ կօշիկները թաց չանեն ու չը հիւանդանան:

Քուրիկն ու Սուրիկը նայեցին իրար:

— Ի՞նչ անենք, Սուրիկ, որ մեր կօշիկները թաց չը լինեն, — ասաւ քուրիկը:

— Ի՞նչ անենք, քուրիկ, — ասաւ Սուրիկը:

Ու սկսեցին միտք անել: Այնքան միտք արին, այնքան, որ իսկի այդքան միտք չէին արել:

2.

— Գտայ, Սուրիկ, — ասաւ յանկարծ քուրիկը: — Ես քեզ կը խորտեմ ու ջրի միջով կը տանեմ էն ափը. քո կօշիկները կը մնան չոր: Վերջն էլ դու կը գաս, ինձ կը տանես, իմ կօշիկներն էլ կը մնան չոր:

Սուրիկը շատ ուրախացաւ իր խելօք բռնջ ասածի վրա: Քուրիկը նրան գրկեց ու չլըմփ, չլըմփ, մտաւ ջուրը:

Ջրի կէս տեղը հասաւ թէ չէ, կանգ առաւ:


— Ինչո՞ւ չես գնում, — հարցրեց Սուրիկը:

— Սուրիկ, կօշիկներս կարծես թրջւում են, — ասաւ քուրիկը: — Լաւն էն է, ցած արի, դու էստեղ մի քիչ սպասի, մինչև ես գնամ ափը, կօշիկներս հանեմ, ետ գամ, քեզ տանեմ:

— Լաւ, — ասաւ Սուրիկը ու, չլըմփ, ցատկեց ջրի մէջ, կանգեց գետի մէջտեղը, մինչև քո քուրիկը գնաց ափը, որ կօշիկները հանի, ետ գայ, իրան տանի:

3.

Երբ քուրիկը կօշիկների կապերը արձակում էր, Սուրիկը ձայն տւաւ:




— Կօշիկներս կարծես թրջւում են. ի՞նչ անեմ, քուրիկ:

— Արի, դու էլ շուտով հանի կօշիկներդ:

Սուրիկն էլ չլըմփեց քեզնից և եկաւ, նստեց, հանեց կօշիկները: Յետոյ երկուսն էլ վերցրին իրենց կօշիկները, քուրիկը նորից գրկեց իր Սուրիկին ու անց կացրեց միւս ափը:

Ու երկուսն էլ շատ ուրախ էին, որ այսպէս խելօք կերպով անց կացան գետակը: Միայն վատն այն էր, որ կօշիկները ոչ միայն թրջւել էին, այլ և լցւել էին ջրով:

—Յիմար գետակը, էս բոլորը նա արաւ,—ասաւ քուրիկը:
—Յիմար գետակը,—ասաւ Սուրիկը:



Պատմի՛ր՝ խելօք երեխաները ինչ պիտի անէին, որ կօշիկները
չը թրջէին:

Գրի՛ր՝ քուրիկն ու Սուրիկը ինչո՞ւ էին ուրախ, միայն ինչն էր վատ:

արգելելի—հշտման չը տալ, թոյլ չը տալ

1. Ուրիշ ինչպէս կ'ասես՝ թաց անել, միտք անել, ձայն տալ,
կանգ առնել:

2. Խելօք երեխայ. ուրիշ կերպ. Կապերը արծակեց. ուրիշ կերպ:

7. Դպրոցի ճամփան

Զմեռայ բուքին, սառնամանիքին,

դպրոցի ճամփան

դժւար է, երկար՝ շատերի համար:

Զւարթ գարունքին, երգին ու ծաղկին,

դպրոցի ճամփան

կարճ է, դուրաւի, կարծես տւելի:

Իսկ ով սէր ունի, ինձ պէս, ուսումի,

դպրոցի ճամփան

միշտ կարճ է, սիրուն, ձրմեռ թէ գարուն:

բուք—ձիւնախառն բամբի:

դուրաւի—դուրեկան:

1. Ուսումի սէր ունի—ուրիշ ինչպէս կ'ասես:

2. Ո՞րն է զւարթ. հակառակը: Դուրաւի հակառակը: Իսկ կարճ,
դժ. ամր սիրուն, շատ. սրանց հակառակը:

8. Դասին

Ամբողջ դասարանը լուռ գրում էր. կսում էր միայն
գրիչների ճոճուցը, երբեմն էլ ուսուցչի ձայնը, որը մէկին
միւսին ուղղում էր:

Սեդրակը գրիչը մատների մէջ ամուր հուպ էր տալիս
ու շատ էր աշխատում, որ գծերը ուղիղ դուրս գան:

Բայց նրա գլուխը աւելի ու աւելի կռանում էր, մատնե-
րը աւելի զանգաղ էին շարժւում, ուսուցչի ձայնն էլ կամաց-
կամաց հեռանում էր, կարծես ուրիշ սենեակից՝ գալիս լինէր:

Ու Սեդրակին այնպէս թւաց, թէ ինքը տանն է ու ցոյց
է տալիս մայրիկին իր գրածը. «տես, ինչ գեղեցիկ է, ինչ ու-
ղիղ»: Մայրիկն էլ գովում է ու շոյում նրա գլուխը:

Յանկարծ աչքերը բաց արաւ, նայեց դէս ու դէն: Ընկեր-
ները դադարել էին գրելուց և բոլորն էլ ծիծաղելով իրեն էին
մտիկ տալիս:

Սեդրակը վախեցած վեր թռաւ, ուղղում էր լաց լինի, բայց
ուսուցիչը բաղցր ժպտում էր ու ասում.

—Քու՛նդ տարաւ, հա՛, յոգնեցի՛ր: Ոչինչ, այս րոպէիս զան-
գը կը տան: Կը վաղվգես, քունդ կը փախչի:

Սեդրակի քունը ինչո՞ւ տարաւ: Քունն ինչի՞ համար է:

Սեդրակը ինչո՞ւ երազում տեսաւ, որ մայրը շոյում է իր գլուխը:

Հա՛ն ել ու կ.—էն ինչ է ինչ՝ Սպիտակ դաշտ, սև սերմեր,

ձեռքով ցանեմ, աչքով հնձեմ:

1. Ուրիշ ինչպէս կ'ասես՝ լաց է լինում, բաց անել, քունը տա-
րաւ, հուպ էր տալիս, մտիկ էր տալիս:

2. Ի՞նչ ասել է շոյել, զանգաղ:

3. Ի՞նչով է տարբերւում ժպտալը ծիծաղելուց:

4. Կամաց-կամաց, շուտ-շուտ. ասա ուրիշ բառեր, որ այսպէս երկու
անգամ ենք կրկնում, և ինչո՞ւ համար ենք երկու անգամ կրկնում:

9. Գրիչ

«Ի՞նչ կը լինի, ասան, գրիչ,
ինձ էլ սիրես գոնէ մի քիչ:
ինչո՞ւ իմ մեծ քրոջ ձեռքին
գրում ես միշտ վարժ ու կարգին,
իսկ իմ ձեռքին խաղամբդում ես
սև ագռաւի ճանկերի պէս.
եւ քեզ վատ բան ի՞նչ եմ արել:
Ե՛կ, խնդրում եմ՝ ինձ համար էլ
գրի էնպէս արագ-արագ,
էնպէս ուղիղ, սիրուն, բարակ»:

Գրիչը լուռ լըսում, լըսում,
ճրճըռում է ու խաղամբդում,
բայց այս անգամ արդէն, կարծես,
փոքրիկ ծրար ճանկերի պէս:

վարժ արագ ու լաւ:

1. Ինչո՞վ է տարբերում ճանկը եղունգից:
2. Գրիչը ճոճոռում է, էլ ուրիշ ինչն է ճոճոռում:
3. Կարգին. ուրիշ բառով:



10. Երանի՛

1.

Ժամը ութն է զարկում. ես նեղ փողոցով դպրոց եմ գը-
նում:

Եւ ամեն օր պատահում եմ մանրուք ծախողին, որ կան-
չում է.

—Ուլունքներ, փայլուն ուլունքներ:

Նա ոչ մի տեղ չի շտապում, նրան ոչ մի տեղ չեն ու-
ղարկում, ոչ էլ պէտք է որ ոչ ժամին տուն վերադառնայ:

Ա՛խ, երանի մանրուք ծախող լինէի ու բոլոր օրերս փո-
ղոցում անց կացնէի ու կանչէի.

—Ուլունքներ, փայլուն ուլունքներ:

2.

Ժամը մէկին, երբ դպրոցից տուն եմ գալիս, դարպասից
տեսնում եմ, թէ ինչպէս է պարտիզպանը փորում հողը:

Ինչ ուզում է անում է իր բահով, կեղտոտում է իր հա-
գուստը, փոշոտում, և ոչ ոք նրան չի յանդիմանում, որ
այրւել է արևի տակ կամ թրջւել անձրևից:

Ա՛խ, երանի՛ պարտիզպան լինէի, հող փորէի ամբողջ օրը
և ոչ ոք չը խանգարէր ինձ:

Պատմի՛ր՝ ինչկասէր տղան, եթէ ծամփին մի կառասպան հան-
դիպէր, կամ անցնէր մի պտղավաճառի խանութի մօտով:

Գրի՛ր՝ ինչո՞ւ է երեսան երանի տալիս մանրավաճառին. կամ
ինչո՞ւ է երանի տալիս պարտիզպանին:

Երանի՛ — երնէկ, ինչ լաւ կը լինէր:

ուլունք — գոյնգոյն ապակուց կամ գունաւոր քարերից շինած
փոքրիկ գնդակիկներ, մէջը ծակ, թելի վրա շարելու համար:
դարպաս — բակի մեծ դուռը:

յանդիմանել — յանցանքը երեսովը տալ:

խանգարել — չը թողնել, արգելել ազատ մի բան անել:

1. Ի՞նչ է ծախում «մանրուք ծախողը» և ինչ ասել է մանրուք:
2. Ի՞նչ է անում պարտիզպանը. իսկ եթէ այդի՛ լինէր:

11. Կարդա՛ւ շուն



Կարդա՛, ա՛ շուն, կարգա տեսնեմ.
չե՞ս, կարող.
չէ՞ որ աշնքան բեզ կրկնել եմ
տողէ տող:
Ի՞նչ ես նայում յիմարի պէս
տետրակին.
պոչդ յամառ պինդ զարկում ես
յատակին:
Հերիք ինչքան դու յօրանջես.
յոգնե՞լ ես:
Չէ, ուսումի դու յարմար չես,
կը ներես:

Արտագրի՛ր վերջին ութը տողերը եւ ընդգծի՛ր յո՛ւմ սկսող բառերը:

12. Սուտասանը

1.

Լինում է, չի լինում՝ մի թագաւոր: Էս թագաւորը իր երկրումը յայտնում է.

«Ո՛վ էնպէս սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ թագաւորութեան կէսը կը տամ նրան»:

Գալիս է մի հովիւ: Ասում է.

—Թագաւորն ապրած կենայ, իմ հէրը մի դազանակ ունէր, որ էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում:

—Կը պատահի, — պատասխանում է թագաւորը: — Իմ պապըն էլ մի չիբուխ ունէր, մի ծէրը բերանին էր դնում, միւս ծէրը մեկնում, արեգակիցը վառում:

Ստախօսը գլուխը քորելով դուրս է գնում:

2.

Գալիս է մի դերձակ: Ասում է.

—Ներողութիւն, թագաւոր, ես վաղ պիտի գայի, ուշացայ: Երէկ շատ անձրև եկաւ, կայծակները տրաքեցին, երկինքը պատրուեց, գնացել էի կարկատելու:

—Հա, լաւ ես արել, — ասում է թագաւորը, — բայց լաւ չէիր կարկատել. էս առաւօտ էլ մի բիշ անձրև թափուեց:

Սա էլ է դուրս գնում:

3.

Ներս է մտնում մի աղքատ գիւղացի, կոտր կոնատակին:

—Դ՞հա ինչ ես ուզում, ա՛յ մարդ, — հարցնում է թագաւորը:

— Ինձ մի կոտ ոսկի ես պարտ, եկել եմ տանեմ:

—Մի կոտ ոսկի, — զարմանում է թագաւորը: — Սո՛ւտ ես ասում, ես բեզ ոսկի չեմ պարտ:

—Թէ որ սուտ եմ ասում, թագաւորութեանդ կէսը տուր:

—Չէ, չէ, ճշմարիտ ես ասում, — խօսքը փոխում է թագաւորը:

—Ճշմարիտ եմ ասում, մի կոտ ոսկին տուր:

Թագաւորն ի՞նչ արաւ:

Բանի՞ ստախօս կայ այս հերիաթում. ամենից մեծ ստախօսը ո՞րն է:

Գրի՛ր ի՞նչ ասաւ հովիւը եւ ի՞նչ պատասխանեց թագաւորը:

Հա՛ն ել ու կ.— Գողգը թափ տայ չի լինի, ոսկին համբել չի լինի:

մեկնել (ոտը, փայտը) — երկարեցնել:

կոտ — ցորեն չափելու փայտէ ամսն:


դազանակ — հաստ և երկար ձեռնափայտ:

1. Ե՞րբ ենք ասում՝ կարել, երբ ենք ասում՝ կարկատել:

2. Հայր հէր, ծայր — ծէր. ասա՛ ուրիշ բառեր, որ այսպէս երկու ձևով էլ գործ ենք ածում:



13. Փխօն



Փխօն, փխօն մլաւան,
Թաւրիգ թղեց, փախաւ Վան,
լեզուն թաթխան, երկար պոչ,
ինչ որ ուզեց, ասին՝ ոչ:

Փխօն գնաց գողէգող,
փորը դատարկ, սիրտը դող,
դունչը մեկնեց կովկթին,
շերեփն իջաւ ճակատին:

Ո՞վ էր խփողը. ինչի՞ց իմացար:

14. Փոքրիկ խանութպանը

—Տատիկ ջան, արի խաղանք,—խնդրում է փոքրիկ եր-
ւանդը:

—Լաւ, խաղանք,—համաձայնեց տատիկը:

—Խանութ խաղանք, հա՛ տատիկ:

—Լաւ, խանութ խաղանք:

Ու երւանդը վազեց, քաշ տաւ մի երկու աթոռ, շարեց
իրար կողքի:

—Էս սեղանը:

Վրան դարսեց տուփեր, գրքեր, լրագրներ, քրոջ տիկ
նիկը, իր հոլը, ուրիշ խաղալիքներ, էլի տուփեր, էլի գրքեր,
մի երկու հատ էլ շէշ, իր խնձորը, որ դեռ չէր կերել, յետոյ
իր փոքրիկ գրչահատը:

Խանութը պատրաստ էր:

Վազեց կողքի սենեակից բերաւ տատիկի մեծ գունաւոր
թաշկինակը, կապեց առաջը գոգնոցի պէս, մի մեծ մատիտ
անց կացրեց ականջի ետեւ ու կանգնեց խանութի առաջ:

—Էս կողմ համեցէք, էս կողմ համեցէք, ո՞վ է ուզում լաւ
խնձոր, Կախէթի գինի, կարմիր բոդկ, պան, պան, պան, պան:

—Շաքար ունե՞ս, խանութպան ախպէր,—հարցրեց տատիկը:
—Ինչքան քէֆ֊ ուզի, տիկին,—պատասխանեց խանութ-
պանը:


—Լաւ, մի հինգ արշին տո՛ւր:

Փոքրիկ խանութպանի ծիծաղն եկաւ:

—Ներեցէք, տիկին, մենք շաքարը արշինով չենք ծա-
խում,—ասաւ նա քաղաքավարի կերպով:

—Բա՛ս ինչո՞վ,—հարցրեց տատիկը:

—Ֆունտով:



—Ֆունտով: Հա, ճիշտ որ,—ասաւ տատիկը:—Դէհ, խնդ-
րեմ, ինձ հինգ ֆունտ շաքար տու՛ր, երկու ֆունտ էլ գինի:

—Ներեցէք, տիկին,—ժպտաց խանութպանը, մենք գինին
ֆունտով չենք ծախում:

—Բա՛ս ինչո՞վ,—հարցրեց տատիկը:

—Գինին ծախում ենք շիշով:

—Շիշով: Հա, ճիշտ որ: Դէհ, ինձ երկու շիշ գինի տու՛ր,
տասը շիշ էլ ձու:

Փոքրիկ խանութպանը էս անգամ արդէն փութկաց:




—Ներեցէք, տիկին, մենք ձուն շիշով չենք ծախում:
 —Բաս ինչո՞վ,—հարցրեց տատիկը:
 —Ձուն ծախում ենք հատով:
 —Հատով: Հա, ճիշտ որ: Դէհ, ինձ տասը հատ ձու տուր-
 երեք հատ էլ կաթ:
 —Ներեցէք, տիկին, կաթը մենք հատով չենք ծախում:
 —Բաս ինչո՞վ,—հարցրեց տատիկը:
 —Կաթը ծախում ենք բաժակով:
 —Բաժակով: Հա, ճիշտ որ: Դէհ, ինձ երեք բաժակ կաթ
 տուր, վեց բաժակ էլ լուցկի:
 Երևանդը ծիծաղու թուլանում էր:
 —Ներեցէք, տիկին, մենք լուցկին բաժակով չենք ծախում:
 —Բաս ինչո՞վ,—հարցրեց տատիկը:
 —Լուցկին ծախում ենք տուփով:
 —Տուփով: Հա, ճիշտ որ: Այսօր ինչքան բան սովորեցի:
 Դէհ, ինձ վեց տուփ լուցկի տուր, չորս տուփ էլ կարմիր բոդկ:
 —Ախար, տիկին,—ծիծաղում էր խանութպանը,—ո՞վ է
 լսել բոդկը տուփով ծախեն:
 —Բաս ինչո՞վ,—հարցրեց տատիկը:
 —Բո՞դկը, բո՞դկը...—կրճկումաց խանութպանը ու չիմացաւ
 թէ ինչով ծախի բոդկը:

- 1) Դուք գիտէ՞ք՝ ինչով են ծախում ըողկը:
- 2) Ուրիշ ինչն է ծախում արշինով, ի՞նչը ֆունտով, ի՞նչը շիշով,
 ի՞նչը բաժակով, ի՞նչը հատով, ի՞նչը տուփով, ի՞նչը կապուկով:

Ներկայացրու տատիկի ու երևանդի խօսակցութիւնը, միայն
 թէ տատիկը թող ուրիշ տեսակի ապրանքներ պահանջի:

Գրի՛ր ինչպէ՛ս երևանդը պատրաստեց իր խանութը:

1. Ի՞նչ ասել է գունաւոր, քաղաքավարի և ինչպէ՞ս կը լինի
 հակառակը:
2. Ի՞նչ տարբերութիւն՝ փոթկալ ու ծիծաղել:



15. Աշուն

Դեղնած դաշտերին
 իջել է աշուն,
 անտառը կրկին
 ներկել է նախշուն:
 Պաղ-պաղ մէզի հետ
 փրշում է քամին,

քշում է տանում
 տերեւ դեղին:
 Տըխուր հանդերից
 մարդ ու անասուն
 քաշում են կամաց
 իրենց տունն ու բուն:

Պատմի՛ր ձեզ մօտ ինչպէ՛ս է աշունը գալիս:

Հանելուկ.—Տասներկու մարդ մի ծառից քաշում են:

1. Իջնել—հակառակը: կամաց—հակառակը: պաղ-պաղ—հա-
 կառակը:
2. Ի՞նչի և ինչու ենք ասում անասուն:
3. Ինչ տարբերութիւն՝ նախշուն և սիրուն, քաշել և տանել:
4. Անասունի բուն—ուրիշ կերպ:



16. Խոհանոցում

Կէս գիշեր էր: Ամբողջ տունը ընած էր: Լուսնի շողեր պատուհանից ընկել էր խոհանոց: Մաքուր ամանները ու կլեկած պղինձները պսպղում էին:

Հանգցրած լամպը նախանձով էր նայում լուսնի պայծառ լոյսին, բայց լուսինը այնպէս մեղմ էր ժպտում

նրան, որ նա իսկոյն հանգստացաւ:

Պղինձները, տապակը, սամովարը, սրճամանը, բամիշը, շերեփը՝ բոլորն էլ փայլում էին ու հպարտ նայում իրար: Վիճում էին, թէ որն է իրենց մէջ ամենից փայլունը:

—Նո, բացականչեց ուռած սամովարը խռպոտ ձայնով:— Տեսէ՛ր, իմ ոսկի ճառագայթները ինչպէս են փառում:

—Ո՛հ, ես եմ փայլունը, —գրընգաց սպիտակ սրճամանը՝ սուր ու բարակ բիթը վեր բաշելով:

—Ապա մի գէսը նայեցէ՛ր, —այն կողմից բերանը լայն բաց արաւ ծանր պղինձը:

—Բա ես, —մէջ ընկաւ երկարապոչ շերեփը:



—Դո՛ւ ինչ ես ամեն բանի մէջ խառնում, —չորս կողմից ձայն տւին մեծ ու փոքր պղինձները իրենց դարակից:

Ծակբերան բամիշն էլ ուղղում էր մի բան ասի, որ մէկ էլ լուսինը մտաւ ամպի տակ, խոհանոցը մթնեց, ու ամենքը ձայները կտրեցին:

Ասան հնչի համար ենք զործածում՝ վերը յիշած ամանները ու խոհանոցի միւս պիտոյքները:

Ա. ու ա. ծ. —Ամեն բան իր տեղն ունի:

Հանելուկ. —Վերևը ծակ, ներքևը ծակ, մէջը լիքը ջուր ու կրակ:

Մեղմ —կամաց ու քնքուշ:

Խռպոտ —կոշտ, խռնալուծ ձայն:

1. Ինչ ասել է՝ բիթը վեր բաշել:

17. Զուրք փախաւ

Տանտիկինը ջուրը լցրեց կաթսայի մէջ, դրաւ կրակին:

Քանի կաթսան տաքացաւ, ջուրը սկսեց շոքել, անհանգրստանալ, շուռ ու մուռ եկաւ, տակն ու վրա եղաւ: Վեր-վեր էր թռչում, քլթքլթում էր, մըմըմըմում էր, փշտացնում էր:

Կուռում էր ամանի հետ, թքում էր, հրում, ժած էր տալիս, որ կրակի վրայից շուռ տայ նրան ու ինքն ազատուի: Չը կարողացաւ: Տեսաւ՝ կաթսան շատ պինդ է նստել կասկարային, աւելի բարկացաւ, փրփրեց, վեր կացաւ, սկսեց գոլորշի դառնալ ու փախչել գէպի վեր:

Հաւ է որ տանտիկինը վրա հասաւ:

Ինչ կը լիներ, եթէ տանտիկինը վրա չը հասներ:

Պատմիր ինչպէս սամովարը դրին եւ ինչպէս սամովարը եփ եկաւ:

1. Կաթսայ. ուրիշ ինչպէս ենք ասում. իսկ ինչ բան է՝ կասկարայ:

2. Ինչ ասել է՝ ժած գալ, ժած տալ, շուռ գալ, շուռ տալ, շուռ ու մուռ գալ, շուռ ու մուռ տալ:

18. Ամպի երեխաները

Ամպը ունի չորս երեխայ, չորսին էլ լաւ էք ճանաչում:

Մեծը նա է, որ գալիս ծեծում է մեր լուսամուտը և աղմուկ է բարձրացնում մեր տանիքի վրա: Երբեմն էլ գծւում է, թափւում, թափւում, գնում է լցնում գետերը, նրանք էլ վարարում են, ափերից գուրս գալիս ու ամեն ինչ տակով անում: Բայց ինքը չար չի. ընդհակառակը, այնպէս սիրում է ծառն ու կանաչը, իջնում գովացնում է ծառաւ ծագիկները, ջուր է տալիս չորացած հողին:

Չարը նրա եղբայրն է: Գալիս է միշտ մի անպիտան քամու հետ, իբրեւ թէ հանաք է անում, ջարդում, փշրում է ինչ որ պատահի՝ ապակի, ծառ ու ճիւղ, փչացնում է խոտ ու արտ:

Սրանց քուրիկը մի ճերմակ աղջիկ է: Յրտերը գալիս են թէ չէ, վրա է հասնում, փռում է իր փափուկ վերմակը մերկ անտառների ու մերկ գաշտերի վրա, որ չը մըսեն փոքրիկ սերմերը հողի տակ:

Ամենից փոքրիկը մի բնքոյշ աղջիկ է. նա, որ զարնանք ամեն գիշեր մարգարիտ է շարում ծառերի, ծագիկների ու խոտերի վրա. իսկ ձմեռը, ցրտին, գալիս է գեղեցիկ կաթնագոյն պատկերներ է քաշում մեր լուսամուտին սառած մառիկներով:

Ահա ձեզ ամպի չորս երեխաները— Անձրեկը, Կարկուտը, Չիւնը ու Յօղիկը:

Զէ՛ որ ես ասում էի՝ չորսին էլ լաւ էք ճանաչում:

Գատմիր թէ ինչպէս էին ծառն ու կանաչը տօթ օրին անձրեկից առաջ եւ անձրեկից յետոյ:


Գրիբ թէ ինչ է անում ձիւնը:

Ա. ա. ծ.—Ամպի գոռալը անձրեկի նշան է:

Վարարել—ջրի շատանալն ու բարձրանալը գետերի, առուների մէջ:

1. Ուրիշ ինչպէս ենք ասում՝ լուսամուտ, պատկեր, տանիք:
2. Կաթնագոյն ասել է կաթի գոյնով. ինչպէս կ'ասես շագանակի գոյնով, մանիշակի գոյնով, երկնի գոյնով: Ասա՛ դրանց նման և ուրիշ գոյն ունեցող բաներ:
3. Սառած ցօղին ինչպէս ենք ասում մէկ բառով:

19. Աշուն վերջը



Սարի լանջին,

մէզի միջում

խոխոջում է

ու տրտնջում:

Ջուրը բարակ,

Ջուրը տխուր:

—Վաշ-վիշ, վաշ-վիշ,

հւր կորան, հւր,

տերե ու խոտ,

վաղը շաղոտ,

սաբւորն ուրախ,

սրբինգ ու խաղ:

Շուրջս դատարկ,

շուրջս տըխուր...

վաշ-վիշ, վաշ-վիշ,

հւր կորան, հւր:

լանջ—կուրծք:

խոխոջել—թափւող ջրի հանած ձայնը:

տրտնջալ—դժգոհութիւն յայտնել, գանգաւել:

շաղ—ցօղ. շաղոտ—ցօղոտ:

20. Եկեղեցին կորել է

—Սա ի՞նչ է, հւր է մեր դիմացի եկեղեցին: Ո՛ւր է մեր եկեղեցին իր սուր գմբէթով: Մայրիկ, մայրիկ, մի տես, էս գիշեր քանդել են մեր եկեղեցին. եկեղեցին կորել է:

Ի՞նչ զարմանալի բան է: Մօտիկ տներն անգամ հա-

գիւ են երևում. ցածը, փողոցում, մարդիկ շտապ-շտապ իրենց գործին են վազ տալիս, բայց ճանաչել չի կարելի, կարծես ծխի միջով են գնում:

Աղջիկը էլ չը համբերեց ու վազեց խոհանոց:

— Մայրիկ, մայրիկ, մեր եկեղեցին այրել են:

— Ինչէր ես խօսում:

— Հապա, այրել են: Մեր եկեղեցին էլ չը կայ, իսկ փողոցը լիքը ծուխ է: Եկ տես:

Իսկ մայրիկը հանգիստ իր գործն է շարունակում ու սրտանց ծիծաղում:

— Ինչո՞ւ ես ծիծաղում, մայրիկ:

— Դու զեռ մառախուղ չե՞ս տեսել, աղջիկս. դա մառախուղ է:

— Մառախուղ:

Մառախուղը ամպից ինչո՞վ է զանազանում:

Եթէ տեսած ես մառախուղ՝ տեսածդ պատմիր:

1. Ուրիշ ինչպէս կ'ասես՝ հազիւ է երևում, քանդել են, դիմացի եկեղեցին:

2. Մառախուղ. ուրիշ ինչպէս ենք տեսում. ինչ տարբերութիւն ունի ամպից:

21. Եղեռնին

Աշուն է: Բոլոր

ծառերը տկուր

տխուր անտառում

դողում են, մրսում:

Մենակ եղևին

կանաչը հազին

գուգլած է, կանգնած

ցուրտ քամու դիմաց:

22. Կիկոսի մահը

1.

Մի աղքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են երեք աղջիկ:

Մի օր հայրը աշխատելիս է լինում, ծարաւում է, մեծ աղջկանը ջուրն է դրկում: Էս աղջիկը կուժն առնում է գրնում է աղբիւրը: Աղբրի գլխին մի բարձր ծառ է լինում: Էս ծառը որ տեսնում է՝ իրեն-իրեն միտք է անում:

— Հիմի որ ես մարդի գնամ ու մի որդի ունենամ, անունն էլ դնենք Կիկոս, Կիկոսը գայ էս ծառին բարձրանայ ու վէր ընկնի քարովը դիպչի մեռնի...

— Վայ, Կիկոս ջան, վայ...

Տեղն ու տեղը ծառի տակին նստում է ու սկսում է սուգ անել:

Գնացի մարդի,

ունեցայ որդի,

գզակը պոպոզ

անունը Կիկոս,

վեր ելաւ ծառին,

ցած ընկաւ քարին...

վայ, Կիկոս ջան,

վայ, որդի ջան...

2.

Մայրը սպասում է, սպասում, տեսնում է չեկաւ, միջնեկ աղջկանն է դրկում: Ասում է. — Գնա մի տես, քոյրդ ինչի՞ ուշացաւ:

Միջնեկ աղջիկն է գնում:

Մեծ քոյրը սրան որ հեռուից տեսնում է՝ ձայնը աւելի է բարձրացնում:

— Արի, արի, անբախտ մօրքուր, տես քո Կիկոսն ինչ եղաւ:

— Ինչ Կիկոս:

— Բա չես ասիլ՝

Գնացի մարդի,
ուռնեցայ որդի,
գգալը պոպոզ,
անուռնը Կիկոս.
վեր ելաւ ծառին,
ցած ընկաւ քարին...
վայ, Կիկոս ջան,
վայ, որդի ջան...

—Վայ, Կիկոս ջան, վայ,— գոռում է միջնեկ քոյրը, նրա-
տում է մեծ քրոջ կողքին ու սկսում են սիրասին սուգ անել:
3.

Մայրը սպասում է, սպասում, տեսնում է չեկան՝ պատիկ
աղջկանն է դրկում: Ասում է.

—Աղջի, մի գնա տես քոյրերդ ի՞նչ եղան: Գնացին ետ չեկան:
Հիմի պատիկ աղջիկն է գնում: Գնում է տեսնում երկու
քոյրն էլ աղբիւրի գլխին նստած լաց են լինում:

—Քա, ինչի՞ էք լաց լինում:

Մեծ քոյրը թէ՛ բա չես ասիլ.

Գնացի մարդի,
ուռնեցայ որդի,
գգալը պոպոզ,
անուռնը Կիկոս,
վեր ելաւ ծառին,
ցած ընկաւ քարին...
վայ, Կիկոս ջան,
վայ, որդի ջան...

—Վայ մօրքուրին, Կիկոս ջան, վայ.— սա էլ է գլխին տա-
լիս ու միւսներին կողքին նստում, ձայն ձայնի տալիս:

4.

Մայրը սպասում է, սպասում, տեսնում է աղջիկները
չը կան, ինքն է գնում:

Հեռուից իրենց մօրը տեսնում են թէ չէ՝ երեք աղջիկն էլ
կանչում են.

—Արի, արի, անբախտ տատի, տես թոռանդ գլուխը ի՞նչ
է եկել:

—Ի՞նչ թոռ, այ աղջկերք, ի՞նչ է պատահել:
Մեծ աղջիկը թէ՛ բա չես ասիլ, այ մայր.

Գնացի մարդի,
ուռնեցայ որդի,
գգալը պոպոզ,
անուռնը Կիկոս.
վեր ելաւ ծառին,
ցած ընկաւ քարին...
վայ, Կիկոս ջան,
վայ, որդի ջան...

—Վայ, բոռանան քու տատի աչքերը, Կիկոս ջան.— մայրն
էլ ծնկանը դարկում է, նստում է աղջիկների կողքին, սկսում
է նրանց հետ սուգ անել:

5.

Մարդը տեսնում է՝ կնիկն էլ գնաց աղջիկների ետևից ու
սա էլ չեկաւ, ասում է՝ մի գնամ տեսնեմ էս ի՞նչ պատահեց,
որ սրանք իրար ետևից գնացին, մնացին աղբրումը:

Վեր է կենում, գնում:

Կնիկն ու աղջկերքը հենց որ սրա գլուխը հեռուից տես-
նում են թէ չէ՝ ձայն են տալիս:

—Արի, արի, անբախտ պապի, արի տես քու Կիկոսի գլ-
ուխն ի՞նչ է եկել... վայ քու Կիկոսին...

—Ի՞նչ Կիկոս, ի՞նչ էք ասում.— զարմանում է մարդը:
Մեծ աղջիկը թէ՛ բա չես ասիլ, այ հայր.

Գնացի մարդի,
ուռնեցայ որդի,
գգալը պոպոզ,
անուռնը Կիկոս.

վեր ելաւ ծառին,
ցած ընկաւ քարին.
վայ, Կիկոս ջան,
վայ, որդի ջան...

—Վայ, Կիկոս ջան. — ծնկներին տալիս են ու սուգ են անում մայրն ու աղջկերքը:

Սրանց միջի խելօքը հայրն է լինում: Ասում է.

—Այ յիմարներ, ի՞նչ էր նստել էստեղ ու սուգ էր անում: Ինչքան էլ սուգ անէք, ինչքան էլ լաց լինէք, հօ Կիկոսն էլ չի կենդանանալու: Վեր կացէք, եկէք գնանք մեր տունը, ժողովուրդ կանչենք, ժամ ու պատարագ անենք, Կիկոսի քելեխը տանք. լացով ի՞նչ պէտք է անենք: Աշխարհքի կարգ է, ինչպէս եկել է, էնպէս էլ պէտք է գնայ:

Դու մի ասիւ սրանց ունեցած-չունեցածը չորսոտնանի մի եզն է լինում, ունեցած փոշին էլ մի քթոց ալիւր:

Գալիս են էս եզը մորթում, էս մի քթոց ալիւրն էլ հաց թրում, ժողովուրդ են կանչում, ժամ ու պատարագ են անում, Կիկոսի քելեխն ուտեցնում, որ նոր հանգստանում են:

Հան ել ու կ. — Մի մարագ, մէջը լիքը ուրագ:

պոպոզ — սրածայր:

քելեխ — մեռելահաց:

քթոց, կթոց — կողով, սովորաբար պտուղ կրելու համար:

1. Ի՞նչ ասել է՝ աղբրի գլխին, ձայն ձայնի տւին:

2. Երբ ենք ասում՝ բա չե՞ս ասիւ: Իսկ երբ ենք ծնկներին տալիս, ծնկներին զարկում, ծնկները ծեծում:

3. Ուրիշ ի՞նչպէս կասես՝ գնացի մարդի, տես գլուխը քնչ է եկել:

4. Ի՞նչ բան է գգակը, ինչով է տարբեր գլխարկից: Ի՞նչ ասել է ժողովուրդ:

5. Նստում է քրոջ կողքին. ուրիշ կերպ:

23. Այոն ու Ոչը

1.

Այոն մի պատիկ աղջիկ էր, աչքերը կրակոտ, շրթունքները ժպտուն, պայծառ: Երբ մայրիկն ասում էր առաւօտը. «Երեսդ լւա, շորերդ սրբի», աղջիկը պատասխանում էր «Այո, մայրիկ, իսկոյն»: Երեսը միշտ մաքուր էր, մազերը սանրած, շորերի վրա՝ ոչ մի բիծ:

Ոչը մի պատիկ դանդաղկոտ տղայ էր, յօնքերը կիտած, շրթունքները ուռցրած, քիթը կախ: Երբ մայրը ասում էր. «Երեսդ լւա, շորերդ սրբի», տղան պատասխանում էր. «Ոչ, չեմ ուզում, ոչ»: Երեսը մրտա էր, մազերը գրգռւած, շորերը փոշոտ:

Ճաշի ժամանակ, երբ մայրիկը ասում էր Այոն՝ «Անձեռոցիկ կապի, Նստի հացդ կեր», աղջիկը կանչում էր. «Այո, մայրիկ, իսկոյն»: Այս ի՞նչ համով կերակուր է»:

Երբ Ոչին ասում էին. «Անձեռոցիկը կապի, Նստի հացդ կեր, Նա կուպիտ աղաղակում էր. «Ոչ, չեմ կապի, ոչ: Այս ի՞նչ անհամ կերակուր է»:

2.

Երբ մթնում էր ու մայրիկը ձայն էր տալիս Այոն՝ «Ժամանակ է, հանւի ու պառկի», աղջիկը տեղից վեր էր թռչում. «Այո, մայրիկ, իսկոյն: Բարի գիշեր, հայրիկ, բարի գիշեր, մայրիկ»:

Ոչը երբէք ինքը չէր գնայ քնելու, ոտները գետնին էր զարնում, յամառում էր. «Ոչ, չեմ քնի, ոչ»: Զօրով պէտք է շորերը հանէին, անկողին պառկեցնէին:

Երբ Ոչը հիւր էր գնում մի տեղ ու զանգը տալիս, ամեն
ըրդ՝ գոհ էին լինում և մտածում. «Աւֆ, նորից եկաւ», ու
շատ անգամ նրա քթի/առջևը դուռը փակում:

Երբ Այոն զանգը տալիս էր, առաջն էին վազում, «Այ, բա-
րի ես եկել, հրամմէ ներս», ու դռները լայն բաց էին անում:
Ինչ ծիծաղ էր և ուրախութիւն այնտեղ, որտեղ Այոն էր:
Ինչ ձանձրոյթ ու լուռութիւն էր այնտեղ, որտեղ Ոչն էր:
Պատմիր՝ ինչպէս են լինելու Այոն եւ Ոչը, երբ աշակերտ դառնան:
Գրի՛ր՝ Այոի կամ Ոչի արտաքինը՝ զրբից հանելով:


պայծառ—զւարթ, լուսաւոր:
խիւղ—հիմա, անմիջապէս:
ձանձրոյթ—տաղտկութիւն, սրտի նեղանալը. ձանձրանալ—մի
բանից յոգնել, տաղտկանալ:

1. Ուրիշ ինչպէս կ'ասես՝ ձայն տալ, հանւել, շորերը սրբել,
հրամմէ:
2. Ինչի՞ նշան է՝ ոտքերը գետին զարնելը. ինչի՞ նշան է՝ ուն-
քերը կտտելը:
3. Ինչ ասել է՝ մէկի քթին դուռը փակել:
4. Կրակոտ, մրոտ, փոշոտ, վերջի ոտ—ը ինչ է ցոյց տալիս:

24. Քամին ու վարագոյր

Քամին վազեց արագ-արագ,
կանգնեց կանչեց. «Մարագ, մարագ,
հօ գիտես ինչ ուժի տէր եմ,
դուռը լայն բաց, դարման բերեմ»:

Մարագը թէ՛ «Դնա բանիդ,
ես կարօտ չեմ քո դարմանիդ.
քո դարմանը թող քեզ լինի,
իմ դարմանը դու մի տանի»:



25. Կացին ախպէր

1.

Մի մարդ գնաց հեռու երկիր աշխատանք անելու: Ընկաւ
մի գիւղ: Տեսաւ՝ այս գիւղի մարդիկ ձեռով են փայտ կոտ-
րատում:

—Ախպէր, ասաւ, ինչո՞ւ էք ձեռով փայտ անում, մի՞թէ
կացին չունէք:

—Կացինն ինչ բան է—հարցրեցին գիւղացիք:

Մարդը իր կացինը գօտկից հանեց, փայտը ջարդեց, ման-
րեց, դարսեց միւս կողմը: Գիւղացիք այս որ տեսան, վազե-
ցին գիւղամէջ, ձայն տւին իրար:

—Տօ, եկէք, տեսէք կացին ախպէրը ինչ արաւ:

Գիւղացիք հաւաքւեցին կացնի տիրոջ գլխին, խնդրեցին,
աղաչեցին, շատ ապրանք տւին ու կացինը ձեռիցն առան:

Կացինն առան, որ հերթով կոտորեն իրանց փայտը:

2.

Առաջին օրը տանուտէրը տարաւ. Կացինը վրա բերաւ
թէ չէ՝ ոտը կտրեց: Գոռալով ընկաւ գիւղամէջ:

—Տօ, եկէք, եկէք, կացին ախպէրը կատաղել է, ոտս կծեց:

Գիւղացիք եկան, հաւաքւեցին, փայտերն առան, սկսեցին
կացնին ձեռել: Ծեծեցին, տեսան՝ բան չը դառաւ, փայտերը
կիտեցին վրան, կրակեցին:

Բոցը բարձրացաւ, չորս կողմը բռնեց: Երբ կրակն իջաւ, եկան բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է:

—Վա՛յ, տղէք, կացին ախպէրը բարկացել է, տեսէք՝ ոնց է կարմրել. որտեղ որ է, մեր գլխին մի փորձանք կը բերի: Ի՞նչ անենք:

Մտածեցին, մտաճեցին ու վճռեցին տանեն բանտը գցեն: Տարան գցեցին տանգուտէրի մարագը: Մարագը լիքը դարման էր. գցեցին թէ չէ՝ կրակն առաւ, բոցը երկինք բարձրացաւ:

Գիւղացիք սարսափած վազեցին տիրոջ ետեւից՝ «Ե՛կ, Աստծու սիրուն, կացին ախպօրը բան հասկացրու»:

1) Կացնի տէրը որ եկաւ, ի՞նչ արաւ:

2) Ի՞նչ գործիքներ գիտես եւ ինչից են շինւած:

3) Մարդիկ միշտ ոնեցել են այդ գործիքները:

Գրիբ ուր գնաց մարդը, ի՞նչ տեսաւ եւ ի՞նչ արաւ գիւղացիների համար:

1. Ի՞նչ տեսել է գնացել է շխատանք անելու, գնացել է փայտ անելու:

Կացինը վրա բերաւ, գլխին փորձանք բերաւ:


Կրակը իջաւ, բարկութիւնը իջաւ:

2. Փայտը կտրոււ էն, կտրոււ էն, տաշոււ էն, մանրոււ էն. ուրիշ:


3. Ի՞նչ տարբերութիւն ունեն՝ ջարդել ու կտրել, կիտել ու դարսել, խնդրել ու ազաչել:

4. Ուրիշ ինչպէս կասենք՝ դարման, հերթով, ապրանք, միւս կողմը:

26. Ուրագ ու սղոց



Մի լինի ուրագի պէս,
միշտ դէպի քեզ, միշտ դէպի քեզ.
այլ եղիւր սղոցի պէս,
մին դէպի քեզ, մին դէպի մեզ:



27. Կրակը

Աշնան վերջին գիւղի մօտիկ անտառում փոքրիկ խաչօն եզներ էր արածեցնում: Յուրա էր ու քամի: Խաչօն վեց-եօթը տարեկան մի վտիտ ու նւազ երեխայ էր. նրա հագուստը... Էհ, ի՞նչ եմ ասում, հագուստ չը կար նրա հագին. մի ծւէն-ծւէն եղած արխալուխ էր միայն, որի պատուածքներից երևում էր նրա սառած ու կապտած մարմինը:

Նա դողում էր, առամբ ատամին խփում, ցրտից արտասուում էր և արցունքները մնում էին նրա սփրթնած այտերի վրա: Բոքիկ ոտքերը ցրտից կուչ էին եկել և նա հագիւ էր քայլում եզների ետեւից: Նա որը էր ու անտէր, ուրիշների եզներն էր արածացնում:

Եզներից այն կողմը, ծառերի ետեւ, մի ծուխ տեսաւ, հասկացաւ որ կրակ են վառել և իր փայտացած ոտքերով վազեց դէպի այն կողմը, մօտեցաւ խարոյկին ու իր կարկամած ձեռքերը մեկնելով համարեա գրկեց կրակը ու բացականչեց.

—Վա՛յ, կրակ ջան:

Պատմիք կրակը մեզ ի՞նչ օգուտներ է տալիս:

Վտիտ—նիհար, լղար:

Նւազ—թոյլ, տկաք:

Ծւէն-ծւէն—կտոր-կտոր, պատառ-պատառ:

արխալուխ (թուրքերէն)—բաճկոն:

այտ—թուշ:

խարոյկ—բաց տեղ վառած մեծ կրակ:

կարկամած—փայտացած. կարկամել—փայտանալ:

սփրթնել—գունատուել:

Ուրիշ կերպ ասա՝ հագուստ չը կար նրա հագին. ցրտից կուչ էր եկել. այնքան խղճալի էր. համարեա գրկեց:

28. Աւագ եղբայրը

Ախ, ինչ յիմար է բո փոքրիկ աղջիկը, մայրիկ:
Երբ մենք սուտ ճաշ ենք խաղում քարերով, նա կարծում է, թէ իսկական կերակուր է ու քարերը բերանն է առնում, որ ուտի:

Երբ ես բաց եմ անում գիրքը և ասում եմ, որ այբ ու բէն սովորի, նա թերթերը պատռում է ձեռներով ու չես իմանում ինչու ճշում է ուրախ լինի:

Երբ ես բարկանում եմ նրա վրա, թափահարում եմ գլուխ և յանդիմանում, ասում եմ «անպիտան աղջիկ», նա ծիծաղում է ու կարծում է, թէ դա շատ զարճալի է:

Բոլորը գիտեն, որ հայրիկը գնացել է, բայց երբ ես խաղի ժամանակ բարձր «հայրիկ» եմ կանչում, նա շփոթւած դէս ու դէն է նայում, կարծում է թէ հայրիկը այստեղ է:

Նա մինչև անգամ չի գանազանում աստղերը փողոցի ճրագներից և ձեռքով լուսինը բռնել է ուզում:

Բո փոքրիկ աղջիկը, մայրիկ, ճիշտ որ յիմար է:

Պատմիր քո կրտսեր քույրիկը կամ եղբայրը ինչ երեխայութիւններ է անում:

29. Զսեռ պապը

Առի, արի, ձմեռ պապի,
սիպտակ հագի, սիպտակ կապի,
սարում, ձորում սուլիր, երգիր,
հեքիաթ պատմիր հետաքրքիր:

Դաշտ ու անտառ, գետ ու գետակ,
էս ամէնը ան թնիդ տակ.
զցիր կամուրջ, փոքր կարպետ,
այ անուրագ, անձեռ վարպետ:

30. Շունն ու կատուն



1

Ժամանակով կատուն
ճոն էր,
շունն էլ գլխին գդակ
շունէր,
միայն գիտեմ ոչ որ-
դիանց որդի
ճանկել էր մի գառան
մորթի:
Եկաւ մի օր, ձմեռնա-
մրտին,
կառւի կուշար տարաւ
մորթին:
— Բարի աջողում, ուս-
տա Փիսո,

գլուխս մրսեց, ի սէր Աստծոյ,
ան էս մորթին ու ինձ համար
մի գդակ կարի գլխիս յարմար:
Վարձիդ համար միամիտ մընա,
համա-համա շատ չուշանայ:

— Աչքիս վրա, քեռի Քուշի.
մի գրդակ է, հօ մի քուրք չի.
բո թանկեզին խաթեր համար
ուրբաթ օրը համեցէք տար:
Փողի մասին աւելորդ է,
մեր մէջ խօսելն էլ ամօթ է.
Ինչ մեծ բան է, տօ, հէր օրհնած,
միայն-միայն մի գդակի վարձ:

Ուրբաթ օրը քեռի Քուշին
ուստից առաջ՝ բաց-բաց կուճին

Թափ Թափ տալով ծանր ու մեծ,
 ուստա Կատուի շէմքում կանգնեց:
 —Ուստէն ուրա, փափախս ուրա...
 «Մի բիշ կացի—հրէս կերեայ»:

2.

Ուստէն եկաւ բուրբը հագին,
 շանը տեսաւ բեխի տակին.
 Իրեն-իրեն բիշ փրնթրնթաց
 ու մուշտարու վրա թնդաց.

—Ցուրտը տարաւ...վահ, տընաշէն,
 չես թող անում մի շունչ քաշեն.
 հեշտ բան հօ չի, դեռ ես նոր եմ
 ցըրցամ տըւել, թէ որ կարեմ:

—Դէ, հէր օրհնած, էտենց ասա,
 էտ բարկանալդ էլ ինչիսա:
 Փող եմ տըւել՝ վախտին կարի,
 թէ չէ ասա՝ էգուց արի,
 չամ ասում ես, համ չես կարում,
 համ խօսում ես, վըրէս գոռում,
 համ, համ, համ, համ,
 բանի, ախպէր, գընամ ու գամ...

Ասաւ Գուշին ու նեղացած
 վերադարձաւ գլուխը բաց:

3.


Մին էլ եկաւ դարձեալ չը կար.
 էս անգամը դիպան իրար.
 էլ անպատիւ, անարգ խօսքեր,
 էլ հին ու նոր, էլ հէր ու մէր,
 էլ գող Փիսօ, էլ քաջալ Շուն...
 բանը հասաւ դիւանբաշուն:
 Շունը մինչև գընաց եկաւ,



ուստա Կատուն կոտորն ընկաւ,
 գլուխն առաւ ու մի գիշեր,
 հայդէ, կորաւ, էն կորչին էր...

4.

էն օրւանից մինչև օրս էլ
 Շունն էս բանը չի մոռացել.
 մըտքում հըլա դեռ պահում է,
 որտեղ Կատին պատահում է,
 վեր է թըռչում, վըրա վազում,
 իրեն մորթին ետ է ուզում.
 Իսկ սկերես Կատուն յանկարծ
 փըշտացնում է. մըթամ նոր եմ
 ցըրցամ տըւել, թէ որ կարեմ:



Պատմիր շան ու կատի կռիւներից ինչ որ տեսել ես:

Ճոն—գդակ կամ փափախ կարող?
 Խաթր (թուրք.)—յարգանք, սէր:
 Վարձ—աշխատանքի համար ստացած կամ ստանալիք փող. մի
 բանից (օր. բնակարանից) օգտուելու փոխարէն վճարելիք փող:
 Կուճի (գաւառական)—գլուխ:
 ցըրցամ տալ—ջուր ցանել, վրան ջուր սրսկել:
 անարգ—անպատիւ:
 կոտոր ընկնել—սնանկանալ. պարտքերը վճարել չը կարողանալ:

1. Ինչ են նշանակում հետեւեալ բառերը. ուստա, համա, քուրք, մուշտարի, համ, հըլա, մըթամ, վախտ, քաշալ, դիւանբաշուն:

2. Ե՞րբ ենք ասում «Բարի աշողում»:

3. Ինչ ասել է՝ աչքիս վրա, միամիտ մնա, ցուրտը տա-
րաւ, իրար դիբան, մտքումը պահում է, չեն թողնում որ
շունչ քաշեմ, էտ բարկանալդ ինչի՞ս է, մուշտարու վրա
թնդաց:

4. Ինչ ասել է՝ հրէս կ'երեւայ, էտէնց ասան, էգուց, որդեանց
որդի, թափ-թափ տալով, իսկ ծանր ու մեծ:

5. Սկերես կատու, սկերես մնացի, երեսդ սև: Սև բառը
այստեղ ինչ է ուզում ասել:

31. Վաճառականը

1.

Մայրիկ, երեակայի՛ր որ՝ դու մնացել ես տանը, իսկ ես
ճամբորդում եմ օտար աշխարհներ:

Երեակայի՛ր, որ նաւահանգստի մօտ կանգնած է արդէն
իմ նաւը կազմ ու պատրաստ:

Ասա, այն աշխարհներից ինչ բերեմ, մայրիկ:

Եղբօրս համար մի զոյգ թխաւոր ձի կը բերեմ, որ նա
հեծնի ու թռչի ամպերի մէջ:

Հայրիկիս համար մի կախարդական ինքնագիր գրիչ կը
բերեմ. և հայրիկը չի նկատի, որ գրիչը ինքն իրեն է գրում:

2.

Իսկ քեզ համար ինչ բերեմ, մայրիկ:

Գուցէ դու ոսկի ես ուզում, շատ ոսկի:

Այնտեղ ոսկի գետերի ափերին արտեր են փռւած ոսկի
հասկերով և այգիների սոււերախիտ ճամփին թափւած են
ոսկի խնձորներ: Կը հաւաքեմ քեզ համար բոլորը, հարիւրաւոր
զամբիւղների մէջ:

Գուցէ դու մարգարիտ ես ուզում, մարգարիտներ՝ աշնան
անձրևի կաթիլների չափ:

Ես նաւս կը մօտեցնեմ Մարգարտէ կղզուն. այնտեղ
արևի չողերի տակ մարգարիտներ են դողդողում դաշտի
ծաղիկների վրա, մարգարիտներ են թափւում խոտերի վրա,
մարգարիտներ են փռւում ծովի ալիքները աւազի վրա:

Մայրիկ, քեզ համար մի արկղ պիտի բերեմ լիքը թանկա-
գին իրերով, որ եօթ թագաւորի եօթ թագաւորութեանն արժէ:

Պատմի՛ր՝ դո՛ւ ինչ կը բերէիր ձերոնց օտար աշխարհներից:

Գրի՛ր՝ փոքրիկ վաճառականը ինչ է ուզում՝ բերել եղբօր, հօրը
ու մօրը:

Երեակայի՛ւ—մաքի մէջ պատկերացնել:

Նաւահանգիստ—ծովեզերքի այն մասը, ուր նաւերը կանգնում
են: սոււերախիտ—խիտ սոււեր ունեցող տեղ:


1. Ինչ տարբերութիւն ունեն՝ անդուկ, արկղ, տուփ:
2. Շնորհ ինչ է, շնորհ ինչ է:
3. Ինչ ասել է թանկագին, իսկ հակառակը:

32. Աւսյն ու սարը

Ամպը եկաւ
իջաւ սարին,
իջաւ սարի
սուր կատարին,
եկաւ, առաւ
բարձրիկ սարին.

«Ինչ ես, պապի,
անհոգ նստել.
էն որ անցաւ
լաւ օրերդ էր.
շուտով կը գան
բուք ու բորան
սաստիկ ցրտեր»:

Ասաւ, գնաց:
Սարը կամաց
բերել տւաւ



լայնատարած
իր ըսպիտակ
թաւ վերմակը,
մտաւ տակը:

33. Շալակտարը

Լինում է չի լինում մի աղքատ մարդ։ Էս աղքատ մարդը գնում է դառնում մի ձկնորսի շալակտար։ Օրական մի քանի ձուկն է աշխատում, տուն է բերում, ու նրանով ապրում են ինքն ու իր կինը։

Մի անգամ էլ ձկնորսը մի սիրուն ձուկն է բռնում, տալիս շալակտարին, որ պահի. ինքն էլ ետ ջուրն է մտնում։ Էս շալակտարը գետափին նստած՝ նայում է, նայում սիրուն ձկանն ու միտք է անում։



—Տէր Աստուած, սա էլ որ մեզ նման շունչ կենդանի է, դու ասա՝ սա էլ, մեզ նման, ծնող ունի, ընկեր ունի, աշխարհքից բան է հասկանում, ուրախութիւն կամ ցաւ է զգում՝ թէ չէ...

Հենց էս մտածելու ժամանակ ձուկը լեզու է առնում։

—Լսի, ասում է,—մարդ ախպէր։ Ընկերներս հետ ես խաղում էի գետի ալիքների մէջ։ Ուրախութիւնից ինձ մոռացայ ու անզգոյշ ընկայ ձկնորսի ուռկանը։ Հիմի, ով գիտի, իմ

ծնողը ինձ որոնում է ու լաց է լինում, հիմի ով գիտի ընկերներս տխրել են։ Ես էլ, տեսնում ես, ինչպէս եմ տանջւում, շունչս կտրւում է ջրից դուրս։ Ուզում եմ ետ գնամ, ապրեմ ու խաղ անեմ նրաց հետ էս պաղ ջրում։ Եկ խեղճ արի, ազատ արա ինձ, բաց թող գնամ...

Էսպէս էր ասում ցած, շատ ցած ձայնով, ցամաքած բերանը բաց ու խուփ անելով։

Չարմանում է աղքատ շալակտարը, մեղքը գալիս է, առնում է, ետ գցում գետը։

—Գնա, սիրուն ձկնիկ, թող լաց չըլինի քո ծնողը, թող չը տխրեն քո ընկերները։ Գնա ապրի ու խաղ արա նրանց հետ։ Ձկնորսը սաստիկ բարկանում է շալակտարի վրա։

—Տօ, ասում է, ես էստեղ ջրի մէջ թրջւելով ձուկն եմ բռնում, դու իմ աշխատանքն առնում ես՝ ետ ջուրը գցում... Դէ գնա կորիր, էլ իմ աչքին չերևաս, գնա սովից մեռի։

Տոպրակն էլ ձեռից խլում է ու ճամփու դնում։

Ա. ա. ծ. —Լաւութիւն արա ջուրը գցի,

ձուկը չիմանայ, Աստուած կիմանայ։

Տեսնլ ես ինչպէս են ծուկ բռնում. պատմի ք։

Գրիբ ինչպէս ընկաւ ծուկն ուռկանը եւ ինչ են անում՝ հիմի նրա ծնողները ու ընկերները։

Հանելուկներ. 1. Էս կողմը դար, էս կողմը դար, մէջն անդադար։
2. Ձին գնաց՝ թամբը մնաց։

Շալակտար—շալակով բեռը տանող։

Կենդանի—ապրող, նա որ ապրում է։

խլել—ուժով մէկի ձեռքից առնել։

1. Ի՞նչ ասել է՝ ձուկը լեզու է առնում։

2. Առա՛ մի բառով՝ խեղճ արի, ազատ արա, խաչ արա, մեղքը եկաւ։

3. Բաց ու խուփ, ներս ու դուրս, երթ ե եկ, ել ու մուտ, տակն ու վրա. սրանք ինչ աեսակ բառեր են իբար հետ կապւած։

34. Աղւեսը բաժանարար



Երկու ագռաւ մի կտոր պանիր էին գտել: Ուղղում էին իրենց մէջ բաժանեն: Մինն ասում էր—ես բաժանեմ, միւսը թէ՛ չէ, ես: Ու կուռում էին ծառի վրա: Ոչ մինը չէր համաձայնում, որ ընկերը բաժանի:

Մի աղւէս տեսաւ, եկաւ ծառի տակ կազնեց.

—Ինչո՞ւ էք կուռում, ասաւ, պանիրը ներքեւ գրցեցէք, էնպէս բաժնեմ, որ ոչ մէկիդ բաժինը աւել պակաս չը լինի:

Վէճը դադարեց. ագռաւները պանիրը գցեցին ծառի տակը:

Աղւէսը երկու կտոր արաւ, բռնեց երկու թաթերի մէջ, ծանր ու թեթեւ արաւ, որ ոչ մինը աւել պակաս չը լինի:

—Էս մինը ծանր է, ասաւ ու կծեց:

Դարձեալ թաթերով կշռեց, հիմի էլ մէկէլից կծեց: Կծելով, կծելով բոլորը կերաւ ու սուս ու փուս գնաց իր բանին:

Ագռաւները մնացին ետեւից նայելիս:

Ագռաւները որտեղից էին գտել պանիրը:

Գ ր ի ը՝ աղւէսը պանիրը ի՞նչպէս բաժանեց:

բաժանարար—բաժանող, բաժին անող:

դարձեալ—նորից, կրկին:

1. Ի՞նչ ասել է՝ ծանր ու թեթեւ արաւ:

2. Ուրիշ ինչպէ՞ս կ'ասես՝ ներքեւ գցեց. ինչպէ՞ս է հակառակը:

3. Սուս ու փուս. այսինքն:

35. Ինձ ո՞վ չի սիրում

1.

Գարունը ասում էր.

—Ես բերում եմ պայծառ արեւ ու տաք օրեր: Ես ծածկում եմ դաշտերը դալար խոտերով ու զարդարում եմ անտառները կանաչ տերեւերով: Ես սփռում եմ ամեն տեղ ծաղիկ ու թիթեռ: Ես կանչում եմ թռչնակներին հեռու երկիրներից ու աշխարհը լցնում եմ երգերով:

Ինձ ո՞վ չի սիրում:

2.

Ամառն ասում էր.

—Ես ոսկեգոծում եմ արտերը ու կրօնացնում եմ հասկերի գլուխները: Ես կախ եմ անում այգիներում տանձ, խընձոր, գեղձ ու խաղող: Ես թռցնում եմ ճուտիկներին ընկերից և տանում եմ մանուկներին զով անտառը, աղբիւրների մօտ, ազատ սարերը:

Ինձ ո՞վ չի սիրում:

3.

Աշունը ասում էր.

—Ես գոյն-գոյն ներկում եմ ծառերը և ճամփայ եմ դնում թռչնակներին դէպի տաք երկիրները: Ես լցնում եմ մառանները, ես եմ շարում մրգերի կախանները: Ես բաց եմ անում ձեզ համար դպրոցի դռները:

Ինձ ո՞վ չի սիրում:

4.

Զմեռը ասում էր.

—Ես խաղացնում եմ սպիտակ փաթիլները օդի մէջ և ծածկում եմ ձիւնով սար ու ձոր. ես կապում եմ զետերը ամուր սառուցով: Ես բերում եմ ձեզ ձնագնդի, սահնակ ու սղդան, երկար երեկոներ ու անվերջ հեքիաթներ: Ես բերում եմ ուրախ Նոր-Տարի:

Ինձ ո՞վ չի սիրում:

Դու ամենից աւելի սրանցից ո՞րն ես սիրում եւ ինչո՞ւ:

36. Իշուկի գանգաւոր

1.

Այգեպանը մի էշ ունէր: Լաւ կերակրում էր, լաւ խնամում, բայց լաւ էլ բանեցնում էր: Էս մէկը իշուկին դուր չէր գալիս:

Գարնան ամեն օր այգեպանը ծաղկով ու կանաչով լիքը բլթոցները բարձում էր իշուկին ու քշում քաղաք:

— Ի՞նչ յիմար են այս մարդիկ, — մտածում էր իշուկը ճանապարհին. — ծաղիկն էլ ի՞նչ բան է, որ սիրում են, էտ անպիտան վարդերը, շուշանները, յասմիկները. այ, հասկանում եմ սպանախն ու ծնէբեկը, սիբեխն ու սինդրիկը, բոխն ու բոխկը: Ա՛խ, մի ամառը գայ, պրծնենք էտ բոլորից, հանգիստ գնամ, քէֆիս արածեմ:

2.

Ահա և ամառը: Այգում արդէն հասել էին լոբին ու բադիրջանը, սեխն ու ձմերուկը, դդումն ու վարունկը, գազարն ու բագուկը:

Էջը հագիւ էր տեղից շարժւում էտ ծանրութեան տակ ամառայ շոքին:

— Ա՛խ, — տնքում էր էջը բրտիներէ

մէջ կորած. — ե՞րբ է գալու աշունը, կանաչից էլ պրծնենք, բանջարեղէնից էլ ու մի ազատ շունչ քաշենք:



3.

Եկաւ աշունը: Խաղողը հասաւ, տանձ ու խնձորից կոտրատոււմ են ծառերի ճիւղերը. նուոր կարմրին էր տալիս, սերկելիւր դեղնին. էլ դեղձ, էլ ընկոյզ, ո՞ր մէկն ապեմ: Ծանր բլթոցները բարձում էին ու քշում քաղաք:

— Էս ի՞նչ տանջանք է, տձ, — գլուխը կախ գցած թառանչ էր քաշում իշուկը: Գոնէ շուտով մի ձմեռը գայ, երկիրը սառչի, ես էլ ազատւեմ, թողնեն ինձ հանգիստ ախոռում, ուտեմ ու պառկեմ:

4.

Հասաւ ձմեռը: Սարսափելի ցուրտ: Այգեպանը իշուկին քշում էր անտառ, փայտ էր կտրում, ցեխ էր հաւաքում, խռիւ ժողովում, բարձում իշին ու բերում տուն:

— Ի՞նչ անիծած եղանակ է, — մրսելով ու սայթաքելով գանգատւում էր իշուկը. — Ամեն ինչ քար է կտրել, խոտ չը կայ, բան չը կայ: Երանի մի գարունը բացւի:

Պատմի՛ր ի՞նչպէս կը գանգատւէր արտատիրոջ իշուկը:

Գրի՛ր ի՞նչ էր կրում պարտիզպանի իշուկը գարնանը կամ ամառը:

գանգատ — տրտունջ, դժգոհութիւն:

խնամել — պահպանել, հոգալ:

թառանչ — խորը հառաչանք:

խռիւ — թափթփած մանր չորացած ճիւղեր ու ոստեր:

սայթաքել — ոտքը սոթ տալ, սահել:

1. Ուրիշ ի՞նչպէս կասես լաւ էր բանեցնում, ազատ շունչ քաշեցին, գարունը բացւի, երանի ինձ տան:

2. Կանաչ — կանաչեղէն, բանջար — բանջարեղէն, շոր — շորեղէն, լոյս... խմոր — ..., միս — ..., կտաւ... ասա այսպէս և ուրիշ օրինակներ. ինչ է ցոյց տալիս եղէն մասնիկը: Եղէն զբւում է երկրորդը է:



37. Յուրտը փչեց

Յուրտը փչեց, ձմեռ սաստիկ,
 ձիւնը ծածկեց գետինը.
 ամեն մի մարդ մտաւ իր տուն
 պատըսպարւի ջրտիցը:
 Ժամի դրոսն դողդողալով
 կանգնած է մի աղքատ կին.
 նրա հանդերձ պատառ-պատառ,
 չունի շապիկ իր հագին:
 Անհամարձակ նա իր ձեռքը
 պարզում է անցկացողին—
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 անտուն, անտէր աղքատին»:

Ա. Ու ա ծ.— Ողորմութիւնն այնպէս տուր, որ շապիկդ չիմանայ:
 սաստիկ—ուժեղ:

պատսպարել—պահել, պաշտպանել:

հանդերձ—հագուստ:

համարձակ—անվախ, ազատ. անհամարձակ—վախով:

1. Պատառ-պատառ. ուրիշ ինչպէս կ'ասես հագուստի համար:
2. Ի՞նչ տարբերութիւն ունի՝ դողալ և դողդողալ (դողդողալ):
3. Ուսմ ենք ասում պարոն, ումը տիկին:
4. Ուրիշ ինչպէս կ'ասես՝ ձեռքը պարզեց, «ողորմութիւն արէք»:
5. Չունի շապիկ իր հագին. ինչպէս կ'ասես միայն մի բառով:

38. Ածխարարն ու պարոնը

Արմենակն ու Գէորգը գասընկերներ էին:

Արմենակը մի հարուստ պարոնի ուղի էր, իսկ Գէորգը

տծխարարի: Մի օր, վէճի ժամանակ, Արմենակը Գէորգին անւանեց «աղքատի ճուտ»: Գէորգը կարմրեց, աչքերը արտասուքով լցւեցին, ու ոչինչ չը պատասխանեց: Գնաց տուն, հօրը գանգատուեց:



Ածխարարը միւս օրը վարժարան եկաւ որդու հետ ու ամբողջ դասարանի առջև պատմեց ուսուցչին: Այդ միջոցին վրա հասաւ Արմենակի հայրը, հարուստ պարոնը:

—Այս բանտը գանգատուում է ձեր որդուց,—
 դիմեց նրան ուսուցիչը:

—Պատճառը, — հարցրեց պարոնը:

—Պատճառն այն է, որ ձեր որդին սրա որդուն անւանել է «աղքատի ճուտ»:

Պարոնը յօնքերը կիտեց, կարմրեց ու որդուն հարցրեց.

—Ճշմարիտ է, ասել

ես դու այդ խօսքը:

Արմենակը գլուխը կախ դրած, լուռ կանգնած էր: Հայրը բռնեց նրա ձեռքից, հրեց դէպի Գէորգը.

—Ներողութիւն խնդրի:

Ածխարարը կամենում էր արգելել, բայց պարոնը մտիկ չարաւ ու կրկնեց.

—Ներողութիւն խնդրի ու կրկնի իմ ետեից. «Խնդրում եմ ներիք ինձ հօրդ դէմ ասած յիմար խօսքիս համար: Իմ հայրը պատիւ է համարում նրա ձեռքը սեղմելը»:

Ածխարարը դարձեալ ուզում էր ընդգլխմանայ, բայց պարոնը նրա վրա ուշք չը դարձրեց, և Արմենակը կամացուկ կակազելով կրկնեց հօր ետեկց.

— Ինչդու՞մ եմ... ներիր ինձ... հօրդ գէ՞մ... ասած... յիմար խօսքիս համար: Իմ հայրը... պատիւ է համարում... նրա ձեռքը սեղմելը:

Եւ պարոնը սեղմեց ածխարարի ձեռքը:

— Խնդրեմ այս երկուսին իրար կողքի նստեցնէ՛ք, — ասաւ պարոնը ուսուցչին:

Ինչո՞ւ համար նրա հայրը պատիւ էր համարում ածխարարի ձեռքը սեղմելու:

39. Փոքրիկ մշակը



Խորէնի հայրիկը մշակութիւն էր անում բազաքում: Մի իրիկուն շատ յոգնած վերադարձաւ տուն: Մէջքը ցաւում էր, ոտներում էլ ուժ չէր մնացել: Հայրիկը անկողին մտաւ ու մի քանի օր վեր չը կացաւ:

Ո՞վ պիտի գնար աշխատանքի, որ ընտանիքը պահէր, որ կերակրէր վեց հոգուն:

Մայրիկը վերջն արասին այսօր տւաւ հացի: Իսկ վաղը:

Խորէնը մտածում էր ամբողջ գիշերը:

Առաւօտը վաղ, երբ ամենքը քնած էին գեռ, և հայրիկը, և մայրիկը, և փոքրիկ բոյրերն ու եղբայրները, Խորէնը հագաւ իր մաշած ոտնամանները, գլխին դրաւ փափախը, ուսը գցեց հօր փախնը ու գնաց կանգնեց քաղաքի հրապարակում, որտեղ կանգնում են մշակները:

39. Աղւեսն ու իր պուշը

Աղւեսն իջաւ սարից ցած.

գիւղի շներն անիծած,

հէնց որ նրա հոտն առան,

մեծ ու պստիկ դուրս թռան,

հարա-հրոց հանեցին

և ետեկց լարեցին: *Վաղեցին:*

էն աղւեսը վազէվազ,

շնչակտուր, հազիւ-հազ

մի ծակ գտաւ,

մէջը մտաւ,

հանգստացաւ

ու ետ դարձաւ,

նայեց վրան,

ասաւ իրան.

— Էս ի՞նչ բան էր...

~~Իմ անդամներ,~~ *Վաղ ու փախչեց:*

մըրդ կուգէր

ինձ, ձեր տէրին,

բաժին անէր

էն շներին:

Դի՛ք, օրինակ,

կա՛ճ ու բարակ,

թեթեւ, արագ

իմ ոտիկներ:

«Ո՛չ, ոչ, մեր տէր,

մեր հէլն ու մէր»,

ասին ոտներ:



— Դուք, օրինակ,

վառած ճրագ,

լուս արեգակ

իմ աչիկներ:

«Ո՛չ, ոչ, մեր տէր,

մեր հէլն ու մէր»,

ասին աչեր:

— Օրինակ, դուք,

նարմանագուկ,

սուր-սուր լսուկ

իմ ականջներ:

«Ո՛չ, ոչ, մեր տէր,

մեր հէլն ու մէր»,

ասին ականջներ:

—ՅԷ դժու պոչիկ,
իմ խուճուճիկ,
ոսկէ-փնջիկ:

«Այո, աղւէս,
աղով աղւէս,
դեղով դեղւես,
պատից կախւես.
ես կուզէի
քո ոտների
մէջն ընկնէի,
խանգարէի,
որ դու գայիր
գլխակոնծի...

—ՍՈՒՍ, պապանձի,
անպէտ պոչիկ,
ոչ ու փրչիկ,
ինքնահաւան,
ճոթրած բերան,
միշտ մէջ ընկան,

ինչի համար է կենդանիների պոչը:



գետնի տափան,
վազքի խափան.
էս ըողպէիս ես քեզ ցոյց տամ,
կաց՝ շների բերանը տամ.

Ու աղւէսը
պոչի կէսը
հանեց մէկից
խորը ծակից,
էն շներն էլ,
մեծն էլ, փոքրն էլ,
ողջը կծան,
վրա պրծան
ու լծեցին
նրա պոչին,
հա քաշեցին
բաշշեցին,
էն աղւէսին
դուրս հանեցին,
բուրդ դրեցին
ու զգեցին:

հարա-հրոց—աղմուկ և իրար-անցում:

լարւել մէկի ետևից—բոլոր ուժով ետևից վազել:

նարմանաղուկ—նազիկ, քնքուշ:

խուճուճ—գանգուր մազերով:

ճորթել—պատռել:

ինքնահաւան—ինքն իրեն հաւանող:

տափել—գետնին քաշ տալ. տափան—գետնին քաշ եկող, հո-
ղը յարդող:

խափան—արգելք. խափանել—արգելել:

մէկից—մէկ անգամից, յանկարծ:

պապանձել—սուել, ձայնը կտրել:

գլխակոնծի—գլխակոնծի տալ, գլխի վրա շուռ գալ:

1. Ինչ ասել է՝ շնչակտուր, սուր սուր լսուկ, մէջընկան:

2. Ինչ է ուզում ասել՝ քեզ շներին բաժին կ'անեմ, էս ըո-
պէիս քեզ ցոյց կը տամ, քեզ շների բերանը կը տամ, մէջ
քաշեցին աղւէսին բուրդ դրեցին ու զգեցին:

40. Բայոտ խաղընկերը

Պանդոկում նստած էր արջ պար ածողը և ճաշում էր,
իսկ արջը կապած էր դուրսը սիւնից. նա սարսափելի տեսք
ունէր, բայց ոչոքի վնաս չէր տալի:

Պանդոկի գլխին, սենեակում, խաղում էին երեք փոքրիկ
երեխաներ: Մեծը վեց տարեկան կը լինէր, իսկ ամենից փոքրը
հազիւ երեք տարեկան:

Թրաշկ, Թրոսիկ, մէկը սկսեց բարձրանալ սանդուղքով.
հով պիտի լինէր:

Յանկարծ դուռը լայն բացւեց, ու ահագին բրդոտ արջը

մտաւ ներս: Խեղճը ձանձրացել էր ներքևում կանգնելուց, կապը բացել էր, և ահա նա գտել էր սանդուղքը:

Երեխաները սաստիկ վախեցան, ամեն մէկը մտաւ մի անկիւն: Արջը մօտեցաւ երեքին էլ, հոտոտեց իր լայն զնշովը, բայց ոչինչ չարաւ նրանց: «Երևի սա մի մեծ շուն է», սիրտ առան երեխաները ու սկսեցին փաղաքշել:

Արջը փռեց յատակին. փոքրիկը ընկաւ նրա վրա, թաւալ էր տալիս ու խաղում:



Իսկ մեծ եղբայրը բերեց իր թմբուկը և սկսեց զարկել: Հենց որ թմբուկը թնդաց, արջը տեղից վեր կացաւ, կանգնեց ետևի թաթերի վրա ու սկսեց պար գալ:

Մի ուրախութիւն էր ուր...

Իսկոյն երեխաներից ամեն մէկը վերցրեց մի մի փայտ իբրև հրացան. արջն էլ ստացաւ մի աւելի կոթ, որ շատ կարգին ու ամուր բռնում էր:

Հիանալի ընկեր էին գտել: Ու իրար ետևից շարժած՝ ոտ-

ները խփում էին գետնին ու քայլում:

—Մէկ-երկու, մէկ-երկու:

Յանկարծ դուռը բացւեց ու մայրը սարսափաւոր կանգնեց դռան մէջ: Երեխաներից մէկը ուրախ-ուրախ գլխով արաւ:

—Մայրիկ, տես, զինւոր ենք խաղում...

Հենց այդ վայրկեանին վրա հասաւ արջ պար ածողը:

Ի՞նչ արաւ արջ պար ածողը:

Պատմիր՝ դու ինչպէս էիր խաղում ձեր շան կամ մի ցրիշ կենդանու հետ:

Ա. ու ա. ծ. — Արջը խաղով եղաւ, տանձը մտքիցն ընկաւ:

սարսափելի — ստրտափ պատճառով, վախ պատճառով:

սարսափահար — սաստիկ վախեցած, սարսափած:

փաղաքշել — շոյել, ձեռք քսել:

Թաւալ տալ, թաւալել — մէջքի վրայ ընկած մէկ կողքից միւսը դառնալ:

հիանալի — շատ լաւ, շատ գեղեցիկ:

1. Ի՞նչ ասել է՝ պանդուկի գլխին մի սենեակ կար:

2. Տեսք՝ ուրիշ ինչպէս կասես:

41. Զվար

1.

—Օ՜ֆ, երբ պէտք է անցնի էս անպիտան ձմեռը, — ասում էին մարդիկ փակ սենեակում:

—Օ՜ֆ, երբ պէտք է վերջանայ էս անիրաւ ձմեռը, — զանգատուում էին գազանները իրենց որջերում:

—Օ՜ֆ, երբ պէտք է ազատւենք էս անտանելի ձմեռայ ձեռքից, — տրտնջում էին թռչունները մերկ ճիւղերին:

Ու սաստիկ բարկացաւ ձմեռը: Վճռեց մէկ անգամից ոչնչացնի բոլորին:

Չայն տւաւ բուր ու բորանին, կանչեց սառնամանիքները,
հաւաքեց իր բոլոր զօրութիւնը ու յարձակեց աշխարհի
վրա: Խոր ձիւնով բռնեց ճամփաները, կապեց ջրերը, եւս
տւաւ սառցէ լուլաներ տանիքներից ու ծառերից, սառցէ
վարագոյրներ քաշեց լուսամուտներին, խցկեց որջերի բե-
րանները և դանակի պէս կտրող սուր քամին, բաց թողեց
դաշտերի, սարերի ու ձորերի վրա:

2.

Բայց ի դուր:

Թէև թռչուններից մի քանիսը ցրտահար եղան, բայց մը-
նացածները կուշ եկան տների ծածկերի տակ, ծխնելոյգների
մօտ, տաք ճեղքերում և չը մեռան:

Վայրի կենդանիները՝ մուշտակները հագին՝ չէին վախե-
նում ձմեռայ քարկուծիներից և դուրս էին գալիս որս անելու:

Մարդիկ աւելի պնդացրին պատուհաններն ու գոները,
աւելացրին վառարանի կրակը, հագան իրանց ամենատաք շո-
րերը ու գնացին իրենց գործին:

Ձմեռը տեսաւ այս բոլորը, տեսաւ ու յուսահատեց:

Ցուրտը օրէցօր թուլացաւ, արեւ քանի գնաց աւելի տա-
քացաւ, ջրերը խոխոջացին, թռչունները երգեցին, դաշտերը
կանաչ հագան ու մարդիկ բաց արին դուռն ու պատուհան:

Դարուն էր:

Ինչու էին գանգատում մարդիկ ու կենդանիները ձմեռայ ձեռքից:

անիրաւ—չար, վատ:

որջ—չորքոտանիների բունը:

խցկել—կոխել, շորով կամ մի ուրիշ բանով պինդ փակել ծա-
կերն ու ճեղքերը:

ծխնելոյգ, ծխան—ծուխը վառարանից դուրս թողնելու անցք:

յուսահատել—յոյսը կորցնել:

Ի՞նչ տեսել է՝ ճամբաները բռնել, դռները պնդացնել:

42. Նկարիչ

Վահ, այսպէս էլ բուր ու բորան

ծեփեց դուռ ու պատուհան:

Նկարիչ է. նկարիչ:

ոչ ձեռք ունի, ոչ գրիչ,

ոչ ներկ ունի և ոչ տուփ,

բայց ի՞նչ ասողեր, ծառ ու թուփ

ապակու վրա նկարեց,

ծաղկենկար զարդարեց:

Վահ, այսպէս էլ բուր-բորան:

կ'ուզէս տեսնել դու նրան.

թէ տղայ ես դուրս գնա,

քիթդ էնտեղ կը մնայ:

ծեփել—ցեխ, աւազ, ձիւն կամ մի ուրիշ բան կպցնել:

ծաղկենկար—վրէժն ծաղիկների նկար ունեցող:

1. Ի՞նչ տարբերութիւն ունի թուփը ծառից:

2. Ի՞նչ տեսել է՝ թէ տղայ ես, քիթդ էնտեղ կը մնայ:

43. Նախակ

Սաթիկը նամակ էր գրում եղբօրը:

«Սիրելի Սարգիս». գրել էր ու կանգ էր առել. Երկար
մտածում էր:

—Մայրիկ, չը գիտեմ ինչ գրեմ:

Մայրը մօտեցաւ:

—Ի՞նչ կայ չը գիտենալու. մի բան գրիր էլի. Գրիր. «Այս
գիշեր մեր տունը այրւեց»:

—Վահ, ինչո՞ւ.—զարմացաւ Սաթիկը.—չէ՞ որ սուտ է:

—Ա՛, դու գիտես ուրեմն, որ չը պէտք է սուտ բան գրել:

Որ այդպէս է, գրեմք մի ճշմարիտ բան: Գրիր. «Թանաքամանիս վրա ման է գալիս մի ճանճ»:

Սաթիկը նորից դարձաւ նայեց մօրը:

— Էտի՞նչ գրելու բան է: Իսկի հետաքրքիր չէ Սարգսի համար:

Մայրը նորից շոյեց աղջկայ թուշը:

— Ա՛, ուրեմն դու արգէն էտ էլ գիտես, որ պէտք է գրել միայն ինչ որ հետաքրքիր է: Լաւ, որ այդպէս է, գրիր Սարգսին, թէ ինչպէս կիրակի օրը գնացի թատրոն:

— Հա՛, հա՛, մայրիկ. — ուրախացաւ Սաթիկը. — թատրոնի մասին կը գրեմ: Կարճ կը գրեմ, թէ ինչպէս Չախչախ Չաղաց-պանը դարձաւ թագաւոր:

Աղջիկը կախեց գլուխը և գրիչը սկսեց աշխատել:

Գրիր Սաթիկի գրած նամակը:

44. Համիկի աղօթքը

Իրիկուն է: Համիկը պատրաստուում է քնելու: Մայրիկը շորերը հանեց ու ասաւ.

— Դէ, հիմի աղօթիր:

Երեխան չորեք իր ճերմակ անկողնում, «Հայր մերն» ասաւ ու մեծ, պայծառ աչքերը վեր ուղղելով՝ Աստծուն խնդրեց.

— Աստուած ջան, պահի հայրիկին, մայրիկին, Մուշեղին, Աշխէնին, Նունիկին, Անօին, Արփիկին...

Ու կանգնեց:

— Էլ ում, — հարցրեց մայրիկը:

— Պապին, տատին, հօրեղբայր Վահանին, Սիգուշին, Լեւոնին, Կուտիկին:

Սիգուշն ու Լեւոնը իր ընկերներն էին, իսկ Կուտիկը իրենց շունն էր:

Աղօթքը վերջացնելով, նա ուրախ-ուրախ մտաւ վերմակի տակ:

Մայրիկը ծիծաղելով նրան համբուրեց ու ասաւ.

— Ախ, դու անպիտան, Կուտիկին էլ մեզ հետ խառնեցիք:

— Ի՞նչ կայ որ... Զի կարելի՞: Բաս Կուտիկին չը պահես, Աստուած, նրան թող...


Մայրիկը ծիծաղելով մին էլ համբուրեց ու դուրս գնաց:

Երեխան սկսեց մտածել՝ «Ինչո՞ւ Աստուած չը պահի Կուտիկին, ինչո՞ւ նրան թողնի»...

Մտածեց, մտածեց, գլուխը հանեց անկողնի միջից ու շնջաց:

— Զէ, Աստուած ջան, չէ, Կուտիկին էլ պահի, բայց մայրիկին չասես:

Համիկը ինչո՞ւ ասաւ — «մայրիկին չասես»:



45. Ծաղիկները

— Ո՛ւր գնացին ծաղիկները:

— Սո՛ւս, քնած են հողի տակ, տաք ծածկած ողջ ձմեռը ձիւն-ծածկոցով սպիտակ:

Կը գոյ գարնան արևն էլ ետ իր շողերով կենդանի,

ձմրան սաստիկ ցրտերի հետ
ձիւն ծածկոցը կը տանի:

«Յլէք, կասի, իմ մանուկներ».
ու հէնց նրանք իմանան,
դուրս կը հանեն գլխիկները,
աչիկները կը բանան:

46. Ոսկի իշիկը

1.

Կար չը կար՝ մի կին կար: Էտ կինն ունէր երկու աղջիկ,
մինը գեղեցիկ, բայց ծոյլ. միւսը տգեղ, բայց շատ աշխա-
տասէր:

Մայրը գեղեցիկ աղջկան շատ էր սիրում:

Տգեղ աղջկան միշտ բուրդ էր մանել տալիս: Մի անգամ
էլ, ջրհորի գլխին կանգնած ժամանակ, թելը կտրւեց ու իլիկը
ընկաւ ջուրը:

Գլխին տալով եկաւ մօրը պատմեց, թէ իլիկս ընկաւ ջուրը:

Մայրը թէ՛ «Ոչ էս, ոչ էն» պէտք է գնաս իլիկը բերես,
եթէ ոչ ձեռքիցս պրծնողը չես»:

Աղջիկը չէր իմանում ինչ անի. տխուր-տրտում եկաւ
ջրհորի մօտ, կռացաւ, նայեց վերևից, մին էլ ընկաւ գլխի
վրա ջրհորը:

2.

Որ ուշքի եկաւ, աչքերը բաց արաւ, տեսաւ մի սիրուն
մարգագետին: Արև-արեգակ, ճաճանչ, կանաչ ծառ ու ծա-
ղիկ, վարդ ու մեխակ, մի խօսքով, ես բեղ քիչն ասեմ, դու
շատը հասկացիր, չը տեսած բաներ տեսաւ:

Աղջիկը ուրախացաւ ու էտ մարգագետնով գնաց, գնաց՝
հասաւ մի հացով լիքը թոնրի: Թոնրի միջից հացերը ձայն
էին տալիս:

—Վառւեցինք, էրւեցինք, աղջիկ, հանիր մեզ թոնրից,
աղատիր:

Աղջիկը կռացաւ և հացերը թոնրի կ'ղորց պոկեց, հանեց,
փռեց, սառեցրեց, իրար վրա դարսեց ու գնաց:

Գնաց, գնաց՝ հասաւ մի խնձորի ծառի: Խնձորենին հի-
ւանդի պէս տքում էր ու կանչում:

—Մեռայ, մեռայ, ծանր է բռնս, շատ են խնձորներս,
ափսոս են ճղներս, թափ տուր, թափահարիր, շաղ տուր, շա-
ղահարիր ինձ:

Աղջիկը լսեց, խղճաց խնձորենուն, շաղահարեց ծառը, խըն-
ձորները մի տեղ հաւաքեց ու գնաց. թող գնա, Աստուծ
հետը:

Գնաց, գնաց, էս անգամ հասաւ մի տան ներս մտաւ,
տեսաւ մի ծեր կին հիւանդ պառկած է:

—Աղջիկս, դու բարով եկար, իմ աչքի, իմ գլխի վրա
եկար, ես անորդի մէրիկ եմ, տէր չունեմ, տիրակա՛ն չու-
նեմ, հիւանդ եմ, պահիր, պահպանիր ինձ, մինչև որ լաւա-
նամ:

Աղջիկը մնաց հիւանդի մօտ, պահեց-պահպանեց նրան,
հոգս տարաւ խնամեց, ջուր դրեց լոգացրեց, բրանացրեց,
ոտի հանեց:

3.

Որ պառաւր լաւացաւ, ոտի կանգնեց, աղջիկն ասաւ.

—Նանի, դէ ինձ իրաւունք տուր գնամ. գնամ իլիկս ման-
գամ, գտնեմ, գնամ տուն, գործս մնաց. մեր տանը կարօ-
տել եմ:

—Լաւ, աղջիկս, լաւ ես անում, որ քո հօրական տունը
սիրում ես, գնանք քո իլիկը գտնենք:

Ձեռք ձեռքի տւին ու գնացին:

Գնացին, գնացին, հասան մի փակ դռան:

Պառաւն ասաւ.

—Բախտի զոնակ, բարև, բարև,
բաց ին, մաղիր ոսկի անձրև.

էս աղջկան գեղեցկացրու
ու մազերը ոսկի դարձրու.

Չանասէր է էս բալիկը.

ոսկի դարձրու և իրիկը:

էսպէս որ ասաւ, դուռը բացւեց: Նրանք երկուսով ներս
մտան: Մին էլ անձրև մաղեց—մաղ տւաւ, շաղեց—շաղ տւաւ
ոսկին աղջկայ գլխին, աղջիկն եղաւ ոսկի—մաղիկ, գեղեցկա-
ցաւ, խաս ու դուժաշ շորեր հագաւ:

Պառաւը վերցրեց ոսկի իրիկը տւաւ աղջկան, համբուրեց
նրան ու ասաւ. «էս էլ ինձ պահելու վարձը, աշխատանքիդ
գինը»:

4.

Պառաւը էսպէս տսաւ—չասաւ, մին էլ դուռը փակւեց, պա-
ռաւն անյայտացաւ: Աղջիկը աչքը խփեց բացաւ, ահա իրենց
տունը: Շուներ, կատուն դէմ վազեցին, օքաղաղը կանչեց.

Կիկիլիկի, հաւ ու ճուտ,

եկաւ, կը տայ նա մեզ կուտ.

օրօր, շորոր մի կաքաւ,

ոսկի—մաղիկը եկաւ,

վրան ոսկի է շաբել,

ոսկի իրիկ է առել:

Կիկիլիկի, հաւ ու ճուտ,

եկաւ, կը տայ շուր ու կուտ:

Ոսկի—մաղիկը գնաց մօր ու քրոջ մօտ: Մայրն ու քոյրը
նրան սիրով ընդունեցին, ոսկի շատ էր բերել:

Ոսկեմաղիկը պատմեց իր տեսածն ու խածը:

5.

Մայրը իր սիրելի աղջկանն էլ ուղարկեց ջրհորի մօտ
բուրդ մանելու: Ծոյլ աղջիկը մանեց, մանեց և իրիկը դիտ-
մամբ զցեց ջրհորը ու ինքն էլ գլխի վրա ընկաւ մէջը:

Որ ուշքի եկաւ, էլի էն մարգագետնի վրա տեսաւ իրեն:
Մարգագետնով գնաց, գնաց՝ հասաւ էն թնրին: Հացերը
կանչում էին.

—Հանիր մեզ կը սկից, վառւեցինք, էրւեցինք:

Ծոյլ աղջիկը թէ՛

—Իմ շատ պէտքս է, թէ վառւեցիք—էրւեցիք. ո՞վ պէտք է
իրեն կեղտոտի, ձեռները մոխրոտի:

Գնաց, գնաց՝ հասաւ խնձորենուն:

Խնձորենին կանչում էր.

—Մեռայ, բեռս ծանր է. թափ տուր, թափահարիր, շաղ
տուր, շաղահարիր, խնձորներս հասել են:

—Հա, ահա—մաղաս հէնց էտ էր պակաս: Մեռնում ես
մեռիր, իմ ինչ բանն է թէ մեռնում ես. ես գնում եմ ոսկե-
մաղիկ դառնամ, ոսկի բերեմ:

Գնաց, գնաց՝ հասաւ պառաւի տանը և սկսեց պառաւին
ծառայել: Առաջին օրը վաղ վեր կացաւ. սենեակը հաւաքեց,
մաքրեց, հիւանդի կամքը կատարեց: Երկրորդ օրը սկսեց ծու-
լաւալ: Զորրորդ օրը արդէն տեղից ժաժ չէր գալիս:

6.

Պառաւը նրանից ձանձրացաւ. հիւանդ—հիւանդ վեր կա-
ցաւ, տընք—տընքալով տարաւ ծոյլին էն բախտի դռան մօտ
ու ասաւ.

—Բացւիր, զոնակ, դէ, ցնծա՛

էս աղջկան մի ընծայ.

ալարկոտ է, ծոյլ է սա,

սրան կուպր մի կաթսայ.

թող կպրոտի, սևանայ

ու կպրոտած տուն գնայ.

Երբ ծոյլ աղջիկը տուն եկաւ, աքալաղը կանչեց.

—Կիկիլիկի,

էս ուր գնաց, ուր եկաւ,

էս կպրոտը զուր եկաւ,
սպիտակ գն սց, սև եկաւ,
սիրուն գնաց, դե եկաւ,
եղէք տեսէք զվ եկաւ:
Նա մեզ չի տայ ջուր ու կուտ,
կիկիկիկի, հաւ ու ճուտ:

Ու էսպէս, ջանասէր աղջիկը ոսկեմազիկ, գեղեցիկ աղ-
ջիկ դարձաւ, ծոյլ աղջիկը մնաց կպրոտ և տգեղ: Քանի լո-
ղացրին, չիստակեց, էն կպրոտն էր, կպրոտ էլ մնաց:

իլիկ—գործիք, բոլորում են թելը և վրէն փաթաթում:
թափահարել—թափ տալ:
շաղահարել—թեթև թափահարել:
կարօտել—սրտանց ցանկանալ, փափագել:
խառ ու զուլմաշ—(թուրք.)—ազնիւ կտորեղէն:
շորոր—օրօր, օրօրելով ման եկող:
ցնծալ—ուրախանալ, խնդալ, ուրախութեամբ նւէր տալ:
կուլար—ձիւթ:
ալարկոտ—ծոյլ ու դանդաղ:
դե—սատանայ:
տիրական—տէր:
անյայտանալ—չքանալ, կորչել:


1. Ի՞նչ ասել է իմ աչքի վրա տեղ ունես, իմ գլխի վրա
տեղ ունես:

2. Պրծնել՝ ուրիշ ինչպէ՞ս կասես

3. Ի՞նչ ասել է՝ աղջիկը գնաց ման գալու, աղջիկը գնաց
իլիկին ման գալու:

4. Ե՞րբ ենք ասում՝ ախա-մական, հէնց էտ էր պակաս:

5. Աշխատասէր՝ հակառակը:



47. Մի քաց նաւասկ ամենքին

Դաշտ ու անտառ, գիւղի ճախփան
ծածկել է մի թիզ ձիւնով:
էլ չի ճարւում ուտելու բան,
հով է տեսել էս տեսակ սով:
ոչ մի ցորեն, ոչ մի հատիկ...
Խնդրում ենք ձեզ, բարի մարդիկ,
Աստծու սիրուն, մի կըտոր հաց,
Կոտորեցինք, մեռանք սոված:

Շուտով կը գան օրեր դարնան,
մենք ձեզ համար կերպենք զըւարթ,
ու փոխարէն ձեր լաւութեան
ձեր պարտէզը, այգին ու արտ
կը մաքրենք մենք թըրթուռներից,
ճիճուներից ու որդերից:
միայն հիմի մի կտոր հա,
Կոտորեցինք, մեռանք սովից:

Մի խումբ ծղտերի կողմից՝

Ժիտիկ ձնծողկեան

Թռչունները մեզ լին զգուտ են տալիս:

Շուտասելուկ.—Ծիտը ծառի ճմբան ծէրին, ծառի ճուտի
ճիտը ծուռ:

Թիզ—երկարութեան չափ, այնքան՝ որքան որ անում է բաց արած
ձեռքի վրա ճկոյթի ծայրից մինչև բութի ծայրը:

փոխարէն—տեղը (արածի կամ տւածի):

թըրթուռ—որդի այն տեսակները, որոնցից յետոյ թիթեռնիկներ
են առաջ գալիս:

48. Փող

Շատ ժամանակ չէ, ինչ կոտորել է Հռիփսիկի ոտը: Հայրը շատ դէս ու դէն ընկաւ, շատ բժիշկների դիմեց, բայց ոչինչ չօգնեց:

Աղջկայ ոտը կտրեցին:

Մի օր հայրը նստել գրում էր սեղանի առջև. Հռիփսիկը փայտէ ոտը թըխթըխկացնելով՝ մօտեցաւ նրան:

—Հայրիկ ջան, հերիք չի. ինչո՞ւ ես այդքան գրում, հա գրում:

—Բաս ի՞նչ անեմ, աղջիկս. չէ՞ որ պէտք է փող աշխատեմ:

—Ինչի՞դ է պէտք փողը, հայրիկ ջան: Մի կտոր թուղթ է կամ մի պատիկ ոսկի, հօ էլ ոչինչ:

—Բայց ինչ որ ուզենաս՝ կարող ես առնել այդ պատիկ ոսկիով, այդ թղթի կտորով.—ժպտաց հայրը:—Ա՛յ, բեզ համար խաղալիք, քաղցրեղէն, սիրուն շոր, գլխարկ, ինչ որ ուզենաս...

Հռիփսիկը մտածեց, մտածեց և յանկարծ ասաւ.

—Ինչ որ ուզենամ, հայրիկ...

—Այո, աղջիկս:

—Մի ոտ գնիր ինձ համար, հայրիկ ջան, մի իսկական ոտ: Այնպէս ուզում եմ երկու ոտով վազեմ, ուզում եմ թռչկոտեմ, ուզում եմ խաղամ. սի ոտ, հայրիկ ջան, մի ոտ:

Հայրը ոչինչ չը պատասխանեց, գրկեց աղջկան, սեղմեց կրծքին ու սկսաւ համբուրել:

Հռիփսիկը զգաց, թէ ինչպէս ամուր գարկում էր հայրիկը սիրտը, ու նայեց նրա աչքերին:

Հայրիկի աչքերից արցունք էր կաթում:

Ինչ ասաւ Հռիփսիկը հայրիկի արցունքները տեսնելով:

Մի պատմութիւն հնարիր, թէ ինչպէս եղաւ որ Հռիփսիկի ոտը կտրուեց:

49. Վեճ

Գետինը ասաւ.—Ես աշխարհքի թագաւորն եմ:

Ձիւնը ասաւ.—Բայց ես կը գամ բեզ կը ծածկեմ:

Քամին ասաւ.—Ձիւն, որ ես գամ, հըր կը մտնես:

Ձիւնը ասաւ.—Գաս, կը մտնեմ քարերի տակ:

Անձրեն ասաւ.—Բա ես որ գամ՝ հըր կը մտնես:

Ձիւնը ասաւ.—Քեզ հետ ով է, տօ թաց-բերան:

Ա. ռ. ա. ծ.—Պարծեցողը պարկը մտնի:

Հանելուկ.—Պոչը ջրում, գլուխը կրակում:

50. Գարնան կարօտ

Կարօտ ենք տեսքիդ, աննման գարուն,
շուտ արի մեզ մօտ, բեր մեզ տաք օրեր,
բեր պայծառ արև, բեր ծաղիկ սիրուն,
ճրճվողոզ թռչուն, բեր կանաչ դաշտեր:
Թող բացւեն, ծաղկեն վարդ, մեխակ, շուշան,
բաց մեր դռները, բաց մեր պատուհան.
Փակւած սենեակից ելնենք ազատւենք,
կանաչ դաշտ երթանք, խաղանք, գլորւենք:

51. Կես խնձոր

1.

Դասարանում մի խումբ աղջիկ ու տղայ խոնկել էին վառարանի մօտ: Յուրա առաւօտ էր: Ուրախ ուրախ խօսում էին իրար հետ:

Իսկ քիչ հեռու կանգնել էր մենակ մի նորեկ աշակերտուհի: Երբեմն մէկը, երբեմն միւսը նայում էին նրա կողմը, բայց ոչ մէկը հետը չէր խօսում:

Աղջիկը առաջին անգամն էր ոտք դնում դպրոց: Մայրը նոր էր թողել ու հեռացել. և աղջիկը այժմ շատ անյարմար էր զգում այդ օտար սենեակի ու օտար երեխաների մէջ:

Աչքերը լցել էին և ուզում էր լաց լինի: Յանկարծ դասարանի գոռը թափով բացւեց ու մի սևաչւի կտրմրաթշիկ աղջիկ նետուեց ներս:

Գնաց ուղիղ դէպի վառարանը ու ձեռները տաքացնելով սկսեց խօսել, ծիծաղել ընկերների հետ:

2.

Մէկ էլ յանկարծ աչքովն ընկաւ նորեկ աղջիկը:

—Բարեւ,—ասաւ նա անուշ ձայնով և մօտեցաւ:

Նորեկի դէմքը պայծառացաւ և իսկոյն պատասխանեց.

—Բարեւ:

—Ցուրտ է, չէ՞,—ասաւ սևաչւին, պայուսակը ուսից հանեց, դրեց սեղանին, ձեռքերը բիշշըփեց ու անմիջապէս գրպանի խորքից դուրս քաշեց մի մեծ կտրմիր խնձոր:

Հանեց, կէս արաւ ու կէսը մեկնեց նորեկին:

—Սիրում ես, չէ՞, խնձոր:

—Այո. —պատասխանեց նորեկը՝ վերցնելով խնձորի կէսը:

—Իմ անունը Հուռիկ է,—ասաւ խնձորի տէրը,—իսկ քոն՞ը:

—Իմ անունը Սեդա է:

—Էս ի՞նչ սիրուն անուն ունես: Տես, իմ մօտս մի ազատ տեղ կայ. ուզում ես՝ մօտս նստի:

—Ուզում եմ:

3.

Ուսուցիչը ներս եկաւ թէ չէ, աչքը ման ածեց դասարան:



նի վրա, կարծես փնտռում էր մէկին: Տեսաւ նորեկին Հուռիկի կողքին, նայեց նրանց զարթ աչքերին ու ժպտաց.

—Ոչինչ, լաւ ընկերուհի ես ճարել:

Ու այդպէս էլ էր:

Հուռիկը հիմա մեծացել դարձել է կիւն, դարձել է տիկին Հռիփսիմէ: Նա հէնց ինքը պատմեց ինձ այս պատմութիւնը և աւելացրեց, թէ ինչպէս կէս խնձորով ձեռք էր բերել իր ամբողջ կեանքի լաւագոյն ու մտերիմ ընկերուհուն:

Ծիշտ է, կէս խնձորով էր ձեռք բերել իր ընկերուհուն:

52. Տաւարածի ճաշը

Մի խամ տաւարած,
բաւական քաղցած,
աղբիւրի մօտ նստած,
ուտում էր չոր հաց:

«Ցամաք մի ուտիլ»

ասաւ ընկերը:

—Բա ի՞նչով ուտեմ,

ուրիշ բան չունեմ:

«Դանակով, եղբայր,

դանակով կտրիր,

ջրի մէջ թրջիր,

էլ ցամաք չի լինիլ»:

53. Արդար մարդիկ

1.

Լինում է, չի լինում, մի մարդ ու մի կնիկ: Սրանք ունենում են մի տղայ: Աղբատ են լինում, այնքան աղբատ են

լինում, որ իրենց մի օրավար հոգն էլ ծախում են:

Հողը առնում է դրանց հարևանը:

Հողը վարելիս արօրի խոփը գէմ է առնում մի բանի ու զընգոցի ձայն է գալիս: Հարևանը ակօսը փորում է, տեսնի ինչ բան է: Փորում է, հողը ետ է տալիս և ինչ տեսնի. մի մեծ աման լիքը ոսկի: Շատ ու շատ ուրախանում է:

Մին էլ մտքումն ասում է. «էս ասենք էսպէս, շատ լաւ բայց այդ ոսկին իմը չէ, իմ աղքատ հարևանինն է: Գնամ ու ասեմ, թող գայ իր ոսկուն տէր լինի»:

2.

Ասում է, ամանի բերանը ծածկում, հողը վրա անում ու գնում հարևանին ասում.

— Հարևան, չես ասի, հողը վարելիս մի աման ոսկի գտայ, արի տէր եղիր, ոսկին քոնն է:

— Զէ, հարևան, ոսկին քոնն է. — ասում է աղքատ հարևանը. — հողն էլ քոնն է, ոսկին էլ:

— Ինչի՞. ես հողն եմ գնել քեզնից, ոսկին էլ հօ չեմ գնել. ոսկին քոնն է որ քոնն քոնն է. — բղաւում է հողը վարողը:

— Ի՞նչ յիմարն ես եղել, տօ. — գոռում է աղքատ հարևանը. — բաղդիդ գլխին բար մի գցի, գնա կեր ու բաղդիցդ գոհացիր: Մենք պապոց պապ հալալ մարդիկ ենք եղել. ես էլ էս հասակիս եմ հասել, ուրիշի ունեցածին աչք չեմ տնկել. ոսկին քո հողումն ես գտել, ոսկին քոնն է որ քոնը:

— Տօ, դու գիտես իմ պապերը քո պապերից պակաս հալալ մարդիկ են եղել: Ես քո ոսկին չեմ ուզում. հասկացիր, ես հողն եմ գնել քեզնից, ոչ թէ ոսկին:

Էստեղ խօսքները իրար է հասնում. սա նրան, նա սրան տալիս են իրար, իրար քիթ ջարդում ու էսպէս արիւնլուժիկ գնում են թագաւորի մօտ գանգատ:

3.

Դատաւորը լսում է, լսում սրանց գանգատը ու չի իմա-

ւմ ծիծաղի՞ սրանց միամտութեան վրա, թէ՞ զարմանայ սրանց ազնուութեան վրա: Մտածում է, մտածում ու էսպէս է ասում.

— Ա՛յ խելօքներ, դուք որդի ունէ՞ք:

— Ես մի տղայ ունեմ. — ասում է հարևանը:

— Ես էլ մի աղջիկ ունեմ. — ասում է հողը առնողը:

— Որ էսպէս է. — քիթ տակ ծիծաղում է դատաւորը. — գնացէ՛ք խնամի դարձէ՛ք: Ա՛յ տղատէր, քո աղին ուզիր հարեւանիդ աղջիկը, այ աղջկատէր, քո աղջիկը տուր հարևանիդ աղին. մի աման ոսկին էլ տւէ՛ր նորապսակներին:

— Էսպէս էլ արդար դատաստան, — ասում են երկու հարևանները:

Ասում են, իրար հետ հաշտւում ու իրար «խնամի ջան» ասելով գալիս են տուն: Աղջիկը տալիս են աղին, պսակում, հարսանիք անում, ուտում, խմում, բէֆ քաշում:

Շ ու տ ա ս ե լ ու կ. — Փոկակապ Ակօր ապեր, ինձ համար մի փսկ կապի, քեզ առեմ՝ փոկակապ Ակօր ապեր:

հալալ — արդարութիւն սիրող, օրինաւորութիւն սիրող:

օրավար — այնքան հող, որ կարելի է մի օրում վարել:

խոփ — արօրի սուր մասը, որ հողը պատառում է:

ակօս — հողի մէջ խոփի ճեղքած ու բացած երկար փոսը:

1. Ուրիշ ինչպէ՞ս կասես՝ հարևան, բղաւել:

2. Ի՞նչ ասել է՝ բաղդիդ գլխին բար մի գցի. Ի՞նչ ասել է՝ արիւնլուժայ կամ արիւնլուժիկ անել:

54. Կանանց ախպեր

է՛յ, կանանչ ախպէր,

է՛յ, ճանանչ ախպէր,

արի՛, քեզ հետ բեր

արևի շողեր.

բեր անուշահոտ

ծիլ, ծաղիկ ու խոտ,

կարկաչուն վրտակ,

երկինք կապուտակ,

խատուտիկ հաւքեր, խաղ, ուրախութիւն.
զըրնգան երգեր, էյ, կանանչ ախպէր,
գառների մայուն, էյ, ճանանչ ախպէր:

55. Տղա՛ւարդր

Ես երեխայ եմ, որովհետեւ դեռ փոքրիկ եմ: Ես տղամարդ
կը լինեմ, երբ հայրիկի չափ մեծանամ:

Երբ ուսուցիչս գայ ու ասի. «Գնա՛, բեր տետրակներդ ու
գրքերդ. ուշ է արդէն»:

Ես նրան կը պատասխանեմ. «Մի՛թէ դուք չը գիտէք, որ ես
հիմա մեծ եմ, ինչպէս հայրիկը: Էլ ինձ պէտք չեն այդ դա-
սերը»:

Ես կը հագնւեմ ու կեոթամ շուկայ, որտեղ ահագին ամ-
բոխ է լինում:

Հօրեղբայրս մօտ կը վազի ու կասի ինձ. «Կը կորչես,
տղայ, տո՛ւր ձեռքդ բռնեմ»:

Ես կը պատասխանեմ. «Մի՛թէ չե՞ս տեսնում, հօրեղբայր,
որ ես մեծ եմ, ինչպէս հայրիկը: Ես հիմա մենակ ման կը
գամ շուկայում»:

3.

Ձատկւայ տօներին հայրիկը տուն կը վերադառնայ ու
կարծելով թէ ես դեռ երեխայ եմ՝ քաղաքից ինձ համար փոք-
րիկ մաշիկներ ու մետաքսէ շորեր կը բերի:

Ես կասեմ. «Հայրիկ, դրանք փոքր եղբօրս տո՛ւր. չէ՞ որ
հիմա ես մեծ եմ, ինչպէս դու»:

4

Ես կը բանամ բանալիով մայրիկիս դրամարկղը ու կը
վճարեմ գայեակիս վարձը:

Մայրիկը կը տեսնի ու կասի. «Ի՞նչ ես անում, անպիտան
տղայ»:

Իսկ ես կը պատասխանեմ. «Մայրիկ, մի՛թէ դու չը գիտես,

որ ես հիմա մեծ եմ, ինչպէս հայրիկը, և իմ գայեակին ինքս
պէտք է վճարեմ»:

Բայց ափսո՛ս ես երեխայ եմ դեռ, որովհետեւ փոքր եմ:
Ես տղամարդ կը լինեմ, երբ հայրիկի չափ մեծանամ:

Պ ա տ մ ի ը ի՛նչ անել կուզէիր դու, եթէ մեծ լինէիր:

ամբոխ—բազմութիւն, շատ ժողովուրդ:

ահագին—շատ մեծ:

մաշիկ—բարակ կիսակօշիկներ, սովորաբար տանը հագնելու:

վճարել—տալ փողը կամ պարտքը:

դրամ—փող. դրամարկղ—փողի սնդուկ:

1. Շուկային էլ ի՛նչ կասես:

56. Թե՛ ինչու եմ ծաղկում ւսնուշակները

Ձմեռը նոր էր անցել: Գարնան մի պայծառ առաւօտ
արեւը ծագել էր շքեղ, թռչունները երգում էին ուրախ ու
հովը խաղում էր թփերի հետ. այդ ժամանակ անտառում
բացւեցին թարմ անուշահոտ մանուշակները:

—Ի՛նչ հրաշալի մանուշակներ են.—կանչեց փոքրիկ աղ-
ջիկը, ձեռքը մեկնեց, որ բաղի, մին էլ յանկարծ ետ քաշեց
վախեցած:

Մի մեծ մեղու թռաւ ծաղկի վրայից տղվալով:

—Ձը համարձակ ես իմ ծաղիկները քաղելու: Նրանք ինձ
համար են բացւել, ինձ համար են անուշ փոշի պատրաստել:

Սկսեցին ժւժլալ և թիթեռները և բզեզները: Ամեն մէկը
ասում էր.

—Ի՛մն են ծաղիկները:

—Ի՛մն են, ի՛մն են.—փսփսում էին գարնան հովիկները:—

Մենք ենք առնում նրանց բոլորը, մենք ենք տանում նրանց բոլորը:

Ժպտացին արևի շողերը ու ասին.

—Մերն են ծաղիկները. մենք ենք նրանց շոյում, տաքացնում, մենք ենք նրանց գոյների հետ խաղում, ծիծաղում:

Աղջիկը մնացել էր մէջտեղը կանգնած: Լսում էր ամենքին ու չէր իմանում՝ որի՞ն հաւտայ:

Վերջապէս դարձաւ մանուշակներին.

—Ասացէք, սիրուն մանիշակներ, ինչո՞ւ համար են բացում ձեր հոտաւէտ պսակները և ո՞ւմ համար էք ապրում:

Ծաղիկները պատասխանեցին.

—Մենք ապրում ենք ապրելու համար, և ծաղկում ենք սերմեր ենք թողնում, որ մեղանից յետոյ էլ մեզ նման մանուշակներ ծաղկեն ու ապրեն:

1. Արևը ծագեց. ուրիշ ինչպէս կասես. ինչպէս կասես արևի ծագելու բոլորին:

2. Ի՞նչ տարբերութիւն կայ քաղելու և պոկելու մէջ:

57. Մարտ

Ա՛խ, էսպէս էլ գիժ ամիս.
մաղդու հանգիստ չի տալիս:
էսօր ուրախ օր կանի.
վաղը անձրև ու քամի.
առաւօտը պայծառ օդ,
կէսօրը մութ ու ամպոտ:
Մին հագնում է սպիտակ,
մին կանաչին է տալիս.
մի օր ցուրտ է, մի օր տաք,
մին խնդում է, մին լալիս...
Ա՛խ, էսպէս էլ գիժ ամիս:



58. Մանուշակ

Կապոյտ գլխով, կանաչ ոտով,
ես ծաղիկ եմ անուշ հոտով:
Թէև տունիս փոքրիկ է, ցած,
արօտներում միշտ թաք կացած,
բայց իմ փունջը ամենի տան,
թէ աղքատի, թէ մեծատան,
իրբև գարնան առաջի զարդ,
տեսնում է միշտ ամեն մի մարդ:
Ես եմ սիրուն գարնան գուշակ,
իմ անուշըս է մանուշակ:

տունիկ—այստեղ նշանակում է փոքրիկ թուփ:
գուշակ—առաջուց ասել, թէ ինչ որ պէտք է լինի:
մեծատուն—հարուստ:

1. Կապոյտ գլխով՝ ասած մի բառով. կանաչն ոտով՝ ասած մի բառով. նոյնպէս անուշ հոտով:
2. Ուրիշ ինչպէս կասես՝ թաք կենալ:
3. Ի՞նչ տարբերութիւն կայ փունջի և պսակի մէջ:

59. Նշանու ծաղիկը

1.

Իսկ եթէ հանաքով ենթադրենք, որ ես նշանու ծաղիկ եմ դարձել ու ծյել եմ ահա այն բարձր ճիւղին և քամու ժամանակ օրօրում եմ ու պար եմ գալիս թարմ տերևների մէջ—կը ճանանչէիք ինձ, մայրիկ:

Դու կը հարցնէիր. «Ո՞րտեղ ես, մանկիկս»: Ես կամացուկ ինքս ինձ կը ծիծաղէի և ձայն-ծպտուն չէի հանի:

2.

Ես սուս ու փուս բաց կանէի իմ թերթիկները ու կը դիտէի քեզ քո աշխատելու ժամանակ: Եւ երբ դու անցնէիր նշանու շաքով դէպի փոքրիկ բակը, դու կը զգայիր ծաղկի բուրմունքը, բայց չէիր իմանայ, որ այդ բոյրը ինձնից է:

3.

Իսկ երբ կէս օրւայ ճաշից յետոյ դու նստէիր պատուհանի առաջ գիրք կարդալու և ծառի սուտերը ընկնէր քո մազերիդ ու ծնկներիդ վրա, ես իմ սեփական պստիկ շաքը կը զցէի գրքիդ երեսին ճիշտ այնտեղի վրա, որ դու կարդում ես:

Բայց դու կիմանայիր, որ այն պստիկ շաքը քո մանկանն է:

4.

Իսկ երբ իրիկունը դու գոմը գնայիր կովերի մօտ, վառած ճրագը ձեռքիդ, ես յանկարծ նորից կընկնէի գետին ու կրկին քո տղան կը լինէի ու կը սկսէի խնդրել քեզ, որ հէքիաթ պատմես ինձ:

—Ո՞րտեղ էիր դու, անպիտան տղայ:

—Ես քեզ չեմ տսի, մայրիկ:

Ահա թէ ինչ կասէինք մենք միմեանց այն ժամանակ:

սուտեր—շաք:

բուրմունք—բոյր, անուշահոտութիւն,

սեփական—իրեն պատկանող:

միմեանց—իրար:

1. Ձայն-ծպտուն չի հանում, սուս ու փուս մնում է. մի բառով ինչպէս կասես:

2. Ի՞նչ տարբերութիւն ունի դիտելը նայելուց:

3. Բակը ինչո՞վ է տարբերում պարտէզից:

60. Կանաչիւր, այգի

Կանաչիւր, կանաչիւր,

իմ սիրուն այգի,

կանաչ ու կարմիր,

խառ շորեր հագի:

Գարունն ու հաւքեր

եկան քեզ համար,

կանաչիւր, այգի,

անշուք մի մնար:

Կանաչն ու կարմիր

նշան են կեանքի.

գարունդ է եկել,

կանաչիւր, այգի:

61. Մշտական ճամփորդ

1.

Գարնան շողը դիպաւ սարերի ձիւնին, և ձիւնը կամացուկ արտասուեց: Ձինձ կաթիլը ընկաւ գետին, գրկեց ուրիշ կաթիլների հետ, և գլորեցին ցած:

Գլորում են ու փափսում.

—Ճամփա...

—Էս ո՞վ է փափսում, — մտածեց ձնծաղիկը, վեր հանեց գլուխը. պայծառ արևը տեսաւ և ուրախութիւնից անուշ բուր մունք արձակեց.

2.

Սահում է ջի թելը, սահում են բազմաթիւ թելեր, հանդիպում են աղբիւրի կաթիլներին ու մրմնջում.

—Դո՛ւք որտեղից էք գալիս, բուրիկներ:

—Այնպէս նեղ էր, այնպէս մոլթ էր մեր ճամփան, — պատասխանում են աղբիւրի կաթիլները. — գետնի տակ հազիւ հազ գտանք իրար ու դուքս վազեցինք տակից: Ի՞նչ լոյս է այստեղ, ի՞նչ ազատ: Մեր ընկերները վաղուց անցել են առաջ. շտապում ենք նրանց ետևից...

—Մենք էլ ենք գալիս ձեզ հետ, — կանչեցին ձիւնի կաթիլները:

Ու կայտառ առակը կարկաչելով սուրաց ցած:

—Էս ի՞նչ աղճուկ է միթէ գարունն է արդէն, — զարթեցին բողբոջները ծառերի ճիւղերին ու սկսեցին մուշտակները հանել:

3.

Առակը գրկեց առակի հետ ու գիժ գետակը փրփրալով վիժեց ցած, քարից քար, տանելով իր հետ աւազ ու չորացած տերևներ:

Ընկերների հետ վշղում, բարձր կանչում էր մեր կաթիլը.

—Ճամփա...

Ջաղացպանը դուրս վազեց, շտապով կապեց նաւի դուռը, որ գետակը ջաղացի անիւը չը ջախջախի: Ճամփորդը զգոյշ մօտեցաւ կամուրջին, տեսնելով՝ ջուրը հօ չի վնասել:

4.

Գետակն ընկաւ արտերի մէջ, քար ու աւազ կուտակեց այստեղ ու այնտեղ, շուտով էլ միացաւ իր նման գոգերի հետ:

Գետը ուռտւ, վարարեց, կատաղած գլորում էր անագին քարեր, արմատահան անում դարևոր ծառերը, ավերը ծածում, տներ քանդում, այգիներ սրբում: Իր ընկերների հետ դղրդում է և մեր կաթիլը.

—Ճամփա...

Գիւղացիք ու քաղաքացիք յուսահատ իրար են անցնում... Իսկ գետը շտապում է դէպի ցած:

5.

Քամու հետ ճօճւում են անագին ալիքները ծովի երեսին. շաշում, փրփրում, խորտակում են անագին նաւերը: Մեր կաթիլը հեծել է մի անագին կոհակի կատարին, ու ինչպէս ուտոտում է ու խաղում կայտառ:

Յանկարծ զգում է, որ պոկւում է ալիքի վրայից. արևը այնպէս մեղմ շոյում էր նրան ու իրեն կանչում:

Թեթև-թեթև բարձրանում է վեր. թռչում է դէպի կապուտակ երկինքը, դէպի պայծառ արևը. թռչում է նա, մօտենում իր քոյրերին և կրկնում նրանց հետ ամպի մէջ:

—Ճամփա...

6.

Բարձրում ամպը միացաւ ուրիշ ամպերին և կախ ընկան երկնքից: Սև-սև թուփալերը կռիւ գցեցին, գոռգոռում էին, կայծակներ շարտում իրար վրա: Մեր կաթիլն էլ ոլորւում է, պտտւում, հրում ու անդադար որոտում:

—Ճամփա...

—Ճամփա, — կրկնում են բոլորը և յանկարծ մեծ թափով սլանում, թափւում են ցած, դէպի երկիրը:

7.

Անձրևը տեղաց պապական գետնին: Մեր կաթիլը ընկաւ արտի մէջ, մի հասկի ոտի տակ: Հասկը թրթռաց ու կանչեց.

—Բարով ես եկել, մշտական ճամփորդ: Ի՞նչպէս կարօտել էի քեզ:

Պատմիք առանց խօսակցութիւնների, ջրի ճամբորդութիւնը սկսելով այն բողբոջից, նրա ծովի վրայից գոռոշխանում է, մինչեւ նորից ծով թափելը:

Գրիք՝ հանելով յօղաժից ինչ վնասներ է տալիս մարդուն ջուրը:

Ղինջ—մաքուր, յստակ:

կայտառ—ժիր, աշխուժ:

սուրբալ—արագ ու շիտակ վագել:

վիժել—ցած թափել, ընկնել, դուրս ձգել:

ՂախՂախել—խորտակել, ջարդ ու փշուր անել:

նաւ—այն փորած գերանը, որի միջով ջուրը թափւում է ջազացի անիւի վրա:

դար—հարկւր տարի. դարևոր—դարեր ապրած:

ճօճել—օրօրել:

շաչել—ուժով զարնելով աղմուկ հանել:

կոհակ—ալիք:

թուխալ—թանձր ամպ:

տեղալ—անձրևել, թափել:

պապակած—ծարաւած:

ակն—աղբիւրի դուրս գալու տեղը:

անդադար—շարունակ, միշտ, մշտապէս:

1. Ինչպէս կասես ուրիշ կերպ՝ արտասուել, կուտակել, արմատահան անել, գլրգալ, շարտել, հեծնել:

2. Ինչ բան է բողբոջ, առակ, ջազաց, կատար:

62. Ծրծեռնակին

Դու կապուտակ ծովով արի,

թեթե թեթե թեով արի,

ծովի փրփուր լանջով արի,

գարնան երգով, կանչով արի,

արի, արի, սիրուն ծիծեռ:

սեխ-մեխ աչիկ ունես,

մկրատածն պոչիկ ունես,

ծովի փրփուր լանջով արի,

գարնան շնչով, կանչով արի,

արի, արի, սիրուն ծիծեռ:

Ծիծեռնակով գարուն կը գայ,

անծիծեռնակ գարուն չը կայ,

ծովի փրփուր լանջով արի,

գարնան երգով, կանչով արի,

արի, արի, սիրուն ծիծեռ:

63. Արագիւնը

1.

Ծի փոքրիկ գիւղի

ծայրին, մի բարձր ծա-

ռի վրա, արագիւնները

դրել էին իրենց բունը:

Ծայրը թեքի տակ ա-

ռել էր չորս ճուտիկնե-

րին, իսկ մի քիչ հեռու,

տանիքի վրա, պահապան

էր կանգնել հայր արա,

գիւղ: Նա մի ոտը վեր

քաշած՝ անկուել էր այն-

պէս անշարժ, կարծես փայտից շինած լինէր:

Ներքեւ փողոցում խաղում էին մի խումբ երեխաներ:

Հենց որ աչքներին ընկաւ արագիւլը, մինը սկսեց արագիւլի

հին երգը, ու ամբողջ խումբն էլ նրա հետ:

Հէյ, արագիւլ, տո՛ւն գնա,

ցից մի ոտիդ մի մնա,



կինըդ նստած բնի մէջ՝
օրօւում է քնի մէջ,
էս մի ճուտիդ կախ կանեն,
էն մէկէլին դադ կանեն,
էս մի ճուտիդ կը մորթեն
էն մէկէլին կը բերթեն:

—Մայրիկ, լսում ես, էտ տղէքը ինչ են երգում,— ճշա-
ցին փոքրիկ ճուտիկները: —Ասում են՝ մեզ պէտք է կախ անեն:



—Ա՛հանջ մի դնէք, ոչինչ էլ չի լինի:
—Բայց երեխաները շարունակում էին
երգել ու ջգրացնել արագիլին:

Իսկ մայր արագիլը սիրտ էր տալիս
փոքրիկներին:

—Մի վախենաք, տեսէք, հայրիկը ինչ-
պէս հանգիստ կանգնել է, էն էլ մի ոտի
վրա:

2.

Միւս օրը, երբ տղէքը նորից հաւաք-
ւել էին խաղալու, է՛ի սկսեցին իրենց
երգը:

էս մի ճուտիդ կախ կանեն,
էն մէկէլին դադ կանեն...

—Ուրեմն իրաւ մէզ պէտք է կախ ան-
են,—հարցրին ճուտիկները:

—Չէ, ինչ էք խօսում,—ասաւ մայրը: —Դուք պէտք է
մեծանաք, թռչել սովորէք: Միասին կը թռչենք դաշտ, գոր-
տերին հիւր կը գնանք: Մեղջեմներն թէ չէ, խորը գլուխ կը
տան ու կը սկսեն երգել. «Եկա՛ք, եկա՛ք, եկէ՛ք-եկէ՛ք-եկէ՛ք»:
Մենք էլ կը բռնենք կուտերը. էնպէս քէֆ կանենք ո՛ր...

—Իսկ յետոյ,—հարցրին ճուտիկները:

—Յետոյ կը հաւաքւենք էս կողմերի բոլոր արագիլներս
ու կը սկսենք մեր աշնան վարժութիւնները: Չէ՞ որ պէտք է
լաւ թռչել իմանաք. էտ շատ հարկաւոր բան է: Ով լաւ թռչ-
չել չիմանայ, մեր խմբապետը նրան կտուցով կը սատկացնի:

—Վայ,—բացականչեցին ճուտիկները:

—Հապա,—պատասխանեց արագիլը: —Աշնան մեծ վարժու-
թիւններից յետոյ կը թռչենք սարերի, անտառների վրայով,
հեռո՛ւ, հեռո՛ւ, դէպի տաք երկիրները: Էնտեղ մեծ գետեր
կան, ահագին ճահիճներ կան, մէջը լիքը գորտ. մտիւր ցեղը
ու կեր, ինչքան կուզես:

—Օխայ,—ուրախացան ճուտիկները:

—Հապա, տեսնում էք: Եւ երբ էսպէս հրաշալի է լինում
էնտեղ, էստեղ էնպէս ցուրտ է անում, որ ամպերը սառչում
ու կտոր-կտոր, սպիտակ-սպիտակ թափւում են ցած:

—Էն չար տղէքն էլ պէտք է սառչեն ու կտոր-կտոր լի-
նեն,—հարցրին ճուտիկները:

—Չէ, բայց դրա նման մի բան: Պէտք է փախչեն, մտնեն
իրենց մութ սենեակները ու մկների պէս թաք կենան:

3.

Անցաւ մի քանի ժամանակ: Փոքրիկ արագիլները արդէն
այնքան էին մեծացել, որ կարողանում էին կանգնել բնի մէջ
և դիտել իրենց շորս կողմը: Հայր արագիլը ամեն օր նրանց
համար բերում էր գորտեր, փոքրիկ օձեր ու այդ տեսակ հա-
մեղ պատառներ, ինչ որ ընկնում էր կտուցը: Եւ զանազան
պատմութիւններ էր անում ճահճի մասին:

—Դէհ, ժամանակ է վերջապէս, պէտք է թռչել սովորէ՛ք,
թէ չէ՛,—ասաւ մի օր մայր արագիլը:

Ու չորս ճուտերն էլ դուրս պիտի ելնէին բնից: Առաջ
էին գալիս, թևերը բաց անում, բայց վախում էին, որ ցած
թափւեն:

—Տեսէք, ես ինչպէս եմ անում,—սովորեցնում էր մայրը:—

Գ ուխներդ էսպէս առաջ ձգեցէք, ոտներդ էլ էսպէս ետև: Մէկ, երկու, մէկ, երկու... Էս է որ կեանքի մէջ պէտք է ձեզ պահի:

Յետոյ ինքը թռաւ մի կտոր տեղ: Փոքրիկներն էլ ետևից, թրմփ, ընկան կողքի կտուրը:

—Ես չեմ ուզում թռչել,—ասաւ փոքրիկներից մինը ու նորից մտաւ բունը:—Իսկի էլ պէտք չեն տաք երկիրները:

—Ուզում ես ցրտից փէտանաս, երբ ձմեռը հասնի: Թէ ուզում ես տղէքը քեզ կախ անեն, խորովեն ու շամփրեն: Լաւ, ուզում ես կանչեմ,—բարկացաւ մայրը:

—Չէ, չէ, մի կանչի,—ճշաց փոքրիկը ու նորից թռաւ կտուրը միւսների մօտ:

4.

Երեք օրից յետոյ ճուտերը մի քիչ կարողանում էին թռչել ու կարծում էին արդէն, թէ էն է կարող են օդի մէջ բարձր սալառնեն և թևերը փռեն ու հանգստանան:

Փորձում էին, բայց իսկոյն գլուխկոնծի ցած էին ընկնում ու ստիպւում էին նորից արագ թևերը շարժելու:

Ցածը, փողոցով անց էին կենում երեխաները ու երգում իրենց երգը.

Հէյ, արագիւ, տուն գնա,


ցից մի ոտիդ մի մնա:

—Մայրիկ, հիմա ցած չը թռչենք ու դրանց աչքերը չը հանենք,—հարցնում էին ճուտերը:

—Դուք ձեր բանին կացէք,—պատասխանում էր մայր արագիւրը:—Մեր արածը շատ աւելի կարևոր բան է: Էսպէս որ գնայ, վաղը ձեզ կը տանեմ ճահիճ: Էնտեղ ուրիշ շատ արագիւներ կան:

—Իսկ էդ անպիտան տղաներից մեր վրէժը չը պէտք է հանենք,—նորից հարցրին փոքրիկ արագիւները:

—Թող գոռան, ինչքան կուզեն: Չէ որ դուք պէտք է թռչէք դէպի ամպերը, գնանք տաք երկիրներ, իսկ նրանք էստեղ



պէտք է մրսեն: Ոչ կանաչ տերև են ունենալու, ոչ էլ գորտ:

Պատմի՛ր այս պատմութիւնը այնպէս, ինչպէս որ կը պատմէր մայր արագիւի ծուտիկներից մէկը:

Գրի՛ր թէ ինչո՞ւ ծուտիկների համար ամենապէտքական բանը թռչել սովորելն է:

Չիգր—բարկութիւն. Չիգրացնել—բարկացնել:

Վրէժ—ոխ, Չիգր:

դադ անել, դադել—տաքացրած երկաթով ալրել:

1. Տնկել ի՞նչ ասել է և ձրն է արմատը, իսկ տնկւե՞լ:

2. Կախ անել, դադ անել, խաղ անել, բաց անել. ասէ՛ր մի-մի բառով:

3. Ի՞նչ ասել է՝ տկանջ մի դնէք, սիրտ էր տալիս, խորը գլուխ տւի՛ն:

4. Ի՞նչ բան է ճահիճը, ի՞նչ բան է լիճը:

5. Ո՞վ է խմբապետը, իսկ զօրապետը, հազարապետը, հալիւրապետը. ի՞նչ ասել է պետ:

6. Ի՞նչ ասել է մորթել, քերթել, խորովել, շամփրել:

64. Արագիլ

Արագիլ, բարով եկար,
հայ, արագիլ, բարով եկար.
դու մեզ գարնան նշան բերիր,
մեր սրտերը ուրախ արիր:
Արագիլ, երբ գնացիր,
դու մեզանից երբ գնացիր,
հա փչեցին բուր ու բորան,
ծաղիկները ամեն տարան:
Արագիլ, բարով եկար,
հայ, արագիլ, բարով եկար,
բունըդ շինի դու մեր ծառին,
մեզ մօտ մնա ամբողջ տարին:

65. Մժղուկը

1.

—Ո՛չ որ չը տեսաւ, թէ ինչպէս ծնւեց փոքրիկ մժղուկը:
Գարնան մի արեւ օր էր: Աչքը բաց արաւ, նայեց չորս
կողմը ու կանչեց.

—Ի՞նչ լաւ է:

Մին էլ ոստիկներն իրար քսեց ու թռաւ: Թռչում է և ու-
րախանում ամեն բանով: Իսկ ներքեում խոտը կանաչին է
տալի, և խոտի մէջ թաքնւած մի կակաչ ժպտում է ու ժպտում:

—Ի՞նչ մօտ արի, մօեդ,—կանչում է ծաղիկը:

Մժղուկը իջաւ ծաղկի վրա, ծծեց նրա հիւթն ու տտաւ:

—Ի՞նչ լաւ է, և էս բոլորն իմն է:

Բայց դեռ խօսքը բերանումն էր, որ բռնացնելով եկաւ
բրդոտ բուր:

—Բը՛ռռ... էտ ո՞վ է նստել իմ ծաղկի վրա, բը՛ռռ...— ո՞վ է
խըմում իմ բաղքը հիւթը, բը՛ռռ... Դէնը կորի, անպիտան
մժղուկ:



—Սպասի, է՛ս ինչ բան է,—
տրդտրդաց մժղուկը,—չէ՞ որ էս
բոլորն իմն է:

—Ի՛րոռ... չէ, իմն է:

2.

Մժղուկը ոտները զօրով ազա-
տեց կատաղի բուռից: Նստեց
խոտի վրա, լիզում էր ծաղկի
հիւթով թաթախւած ոստիկները
ու բարկացած խօսում:

—Ի՞նչ կոպիտ է էտ բուր. չէ՞ որ բոլորն իմն է, արեւն էլ,
խոտն էլ, ծաղիկն էլ:

—Ո՛չ, ներեցէք, իմն է,—խօսեց բրդոտ ճիճուն, որ բարձ-
րանում էր խոտի ցողունի վրա:

Մժղուկը գլխի ընկաւ, որ ճիճուն թռչել չը գիտի, հա-
մարձակ ձայնը բարձրացրեց.

—Ներողութիւն, բարեկամ, սխալւում ես, բոլորն իմն է.
բայց ես հօ չեմ արգելում քեզ:

—Լաւ, լաւ, մտիկ արա, որ եմ խոտին չը դիպչեա. ձեզա-
նից էստեղ էնքան թռչում են որ... Դուք թեթեամիտ ժողո-
վուրդ էք, իսկ ես ծանր ճիճու: Դէ, հայդէ, գնաս բարով:

3.

Մժղուկը թողեց ու թռաւ հեռու. տեսաւ ջուր:

—Էս հօ իմն է ու իմը, իմ ջուրը: Ա՛խ, ի՞նչ լաւն է.
էստեղ խոտ էլ կայ, ծաղիկ էլ կայ:

Եւ անա թռչում գալիս են ուրիշ մժղուկներ էլ:


—Բարի օր, քուրիկ:

Աստծու բարին ձեզ, քուրիկներ: Էտ հւր էք թուշում:

—Խաղ ենք անում, դու էլ արի մեզ հետ: Էնպէս ուրախանում ենք:

Ուգնացին: Խաղում էին ջրի վրա, պտտւում ու թռչկոտում:

Յանկարծ, պըժժ, ոնց որ մինը մի բար գցի, ճնճողւկն ընկաւ մօեղներին մէջ:



—Վայ, վայ, — ժրժրեացին բոլորն ու ցրեցին դէս ու դէն:

—Մին էլ երբ ուղքի եկան, տեսան շատերն էին պակասել:

—Ախ, անպիտան, — հայհո-

յում էին ծեր մօեղները. — ամբողջ տասը հոգի փչացրեց:

«Վահ, ամբողջ տասը հոգի. էս հօ բոռից էլ անց կացաւ»:

4.

Մեր մօղուկի սիրտն ահ ընկաւ, ու միւս նորեկուկներին հետ միասին մտաւ ճահճի խոտերի արանքը, տապ արաւ:

Բայց էստեղ էլ ուրիշ փորձանք: Երեք մօղուկի ձուկը կերաւ, երկուսին էլ գորտը տարաւ:

—Էսպէս էլ բան կը լինի... — զարմացած մնացել էր մեր մօղուկը. — Միթէ կարելի է ապրել էսպէս:

Գիշերն ընկաւ, մութը վրա հասաւ, ու բոլոր մօղուկները մտան եղեգնուտի տաք տեղերը, թաք կացան:

Վերս երկինքը լցեց աստղերով, լուսինն էլ ծագեց, ու միասին ցոլացին ջրի մէջ:

Էնպէս սիրուն էր:

—Ախ, իմ լուսնեակը, իմ աստղերը... — շշնշում էր մըժ-դուկը, բայց ահից էնպէս կամաց էր շշնշում, որ ոչ ոք չը լսի:

—Ախ, իմ աստղերը... — շշնշաց կամաց ու քնեց:

1) Բացի մօղուկից, էլ հմ է կարծում, որ էս բոլորն իրն է:

2) Ռմն է այս բոլորը:

3) Այս պատմութիւնը այս գրքի հը պատմութեանն է նման եւ ինչո՞ւ:

Գրի՛ր՝ փոքրիկ մօղուկը, որ աչքը բաց արաւ, առաջ հըր իջաւ, յետոյ հըր նստեց, ապա ո՞ւր թռաւ եւ վերջը ո՞ւր մտաւ ու քնեց:

հիւթ — բոյսի կամ մսի ջուրը:

թեթեամիտ — խորը չը մտածող. որոնք են արմատները:

ահ — վախ:

նորեկուկ — նոր ծնած, նոր եղած. որոնք են տրմատները:

ցոլալ — փայլել:

շշնշել — փսփսալ:

փորձանք — դժբախտութիւն:

1. Ոտ — ոտիկ, մատ — մատիկ, հատ — ..., բղեղ — ..., աստղ — ..., քոյր — ..., հայր — ... հրն է մասնիկը ե ի՞նչ իմաստ է տալիս: Առաջ եղնից ուրիշ օրինակներ:

2. Ի՞նչ ասել է՝ մօղուկը գլխի ընկաւ:

3. Ի՞նչ տարբերութիւն սենեն՝ եղեգն — եղեգնուտ, թուփ — թփուտ, մոշ — մոշուտ, կաղնի — կաղնուտ:

4. Ուրիշ ինչպէս կասես՝ խոտերի արանքը, սխալում ես, թուշել չը գիտէ:

66. Գարուն

Ձուգւել են կրկին

անտառ ու այգի,

վշտում է ուժգին

ջուրը գետակի:

Հաւքերը սիրուն

համերգ են կազմել,

արտում ու դաշտում

երգ ու հորովել:

Թիթեռներն ուրախ

թռչում են դէս-դէն...

Ջան, տեսքիդ մատաղ,

գարուն է արդէն:

զուգուել—զարգարուել:

ուժգին—ուժեղ:

համերգ—միասին երգելը:

հորովել—զիւղացու վարի և կալի ժամանակի երգը:

1. Ի՞նչ ասել է՝ խումբ են կազմել, համերգ են կազմել,
խաղ են կազմել:

2. Ի՞նչ ասել է՝ տեսքիդ մատաղ, հոգուդ մատաղ, բեզ
մատաղ:

67. Ոչ ոք չը կայ

—Ո՞վ կայ տանը:

—Ոչ ոք չը կայ.

ես ու պապըս,

հայրըս, մայրըս,

երկու քոյրըս,

երկու քեռիս,

երեք հարսըս:

Ոչ ոք չը կայ:

Հապա ինչո՞ւ է ասում՝ ոչ ոք չը կայ:

1. Ուրիշ կերպ ինչպէս կասես հայրըս, մայրըս, քեռիս...

68 Հատիկի զարթնելը

Յորենի հատիկը պառկած էր հողի տակ:

Եւ հատիկի մէջ քնած էր փոքրիկ սաղմը:

Քնած էր ամբողջ ձմեռը:

Գարնան արևի շողը եկաւ կանչեց նրան.

—Զարթիր, զարուհ է:

Եւ հատիկի մէջ զարթնեց սաղմը: Զարթնեց, սաստիկ
քաղցը զգաց, սկսեց ծծել իր մօտի պաշարը: Ծծեց, ծծեց ու
մեծացաւ. պատռեց պարուրները ու արմատիկները, խրեց
ցած, փափուկ հողի մէջ, նոր կերակուր որոնելու:

Իսկ արևի ջերմութիւնը շարունակ քաշում էր նրան վե-
րեից, ու սաղմը ձգւում էր դէպի այն կողմը, դէպի վեր:

Զգւեց, ձգւեց ու յանկարծ նրա գալար ծիլը գուրս նա-
յեց հողի մի կոշտի տակից:

Ինչ տնք էր, ինչ պայծառ ու ինչ ազատ նրա շուրջը:

Առաւօտեան հովիկը քնքուշ զգւեց նրան, դրաւ ցօղի մի
կաթիլ նրա կիսաբաց թերթիկին ու փսփսաց.

—Բարի լոյս:

Պատմի՛ր՝ սրանից յետոյ ծիլը ինչպէս է մեծանալու եւ ինչ է
դառնալու:

Գրի՛ր գարնանը ինչ եղաւ հատիկի սաղմը, ի՞նչ արաւ նա իր ար-
մատիկները եւ ինչ արաւ ծիլը:

սաղմ—ձուր կամ սերմի այն մասը, ուր ծնունդ է առնում բոյ-
սը կամ կենդանին:

պարուր, նաև պալուլ—այն շորերը, որի մէջ փաթաթուած են
երեխային:

որոնել—փնտրել:

ջերմութիւն—տաքութիւն:

կոշտ—հողի չորացած կտորները:

զգւել—շոյել, փաղաքշել:

1. Պառկած ու քնած՝ ինչ տարբերութիւն ունեն իրարից:
Զարթնել՝ ուրիշ ինչպէս կասես:

2. Ուտել ուղեւալուն ինչ ենք ասում: Ի՞նչ ենք ասում խմել
ուղեւալուն:

3. Կէս բաց կամ կիսաբաց, կէս ճամփին կամ կիսաճամփին,
կէս բերան կամ կիսաբերան: Այսպիսի դէպքերում առաջին բառի
է-ն կը դառնայ ի:



69. Արօր

Ահա ծագեց կարմիր արև,
տաք ու պայծառ է օրը,
դէհ, քաշեցէք, սիրուն եղներ,
առաջ տարէք արօրը:

Վարը վարենք, ահօս փորենք,
խոր ահօսներ հողի մէջ,
սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
խուրձեր դիզենք կալի մէջ:

Կը գայ ձմեռ, մենք վախ չունենք,
ուրախ կանցնի մեր օրը,
ուտելու միշտ պաշար ունենք,
երբ լիք լինի մեր հորը:

Դէհ, քաշեցէք, սիրուն եղներ,
տաք ու պայծառ է օրը,
ահա ծագեց կարմիր արև,
առաջ տարէք արօրը:


Ե՞րբ են վարում հողը. նրբ են ցանում:

Առաջ.—Ինչ որ ցանես, էն կը հնձես:

Հանելուկ.—Սե հինեմ, կանաչ գործեմ, դեզին կարեմ:

պաշար—մի քանի ժամանակեայ համար պահած ուտելիք:
հոր—գետնի մէջ խորը փոս. ինչ է ջրհորը:

70 Չիռ տրտունջը



Գիւղացին գարի էր ցանում:

—Էս ինչ ես անում, ինչո՞ւ ես էտ
գարին հողին խառնում,—տրտնջում
էր ձիւն.—լաւ չէր լինի ինձ տայի՞ր՝
ուտէի, քան թէ էտպէս փշացնում ես:

Տէրը ոչինչ չէր պատասխանում
ու իր ցանն էր անում:

—Թէ ինձ չես ուզում տաս, էշին
տուր: Ուտի, ուժ առնի, որ բարձես,
չաղացը տանես:

—Թէ էշին էլ չես ուզում տաս, գոնէ հաւերին տուր:
Կուտեն, քեզ համար ձու կածեն:

Տէրը շարունակում էր գարին շարտել աջ ու ձախ:

—Ինչո՞ւ պատասխան չես տալիս,—հարցրեց ձին նեղա-
ցած:

—Քո պատասխանը ամառը կը տամ,—ասաւ գիւղացին:

Ամառը ինչ պատասխան պիտի տար գիւղացին:

Հանելուկ.—Մի կով ունեմ, տաքէնը մի անգամ կաթ կը
տայ ու իսկի տուն չի գայ:

1. Գիւղացի ո՞ր բառից է կազմւած, ինչպէ՞ս կը լինի նոյնը բա-
ղաք բառից:

2. Ասա մի բառով՝ վար անել, ցան անել, հունձ անել, ցրիւ
անել:

3. Ի՞նչ ասել է շարունակել, շարտել, նեղանալ:

71. Գիւղացին ու աքջը

1.

Գիւղացին իր բոստանում
գարնանը սերմ էր ցանում.
արջը եկաւ՝ «Բարե քեզ,
ինչ ես անում քեզ ու քեզ.
արի, այ մարդ, միանանք,
մէկտեղ անենք վար ու ցանք.
վար ու ցանքը մեր կիսրար,
հունձն էլ անենք հաւաւար».
— Այլքիս վրա, արջ ախպէր,
օտար խօսմ չե՛նք. կուգես բեր
հէնց առաջին անգամը
ցանենք մօտիս շաղկամը.
ինձ արմատը հողումը,
քեզ փրերն ու ցօղունը:



2.

Ք... դջր ու խոշոր շաղկամը
հողում տողեց աշնանը:
Մեր ապէրն ու գիւղացին
շաղկամն հողից հանեցին.
Ապէրն առաւ փրերը,
արմատներն էլ ընկերը:
Արջը տեսաւ որ խաբւեց,
մարդու գէմը քիչ լարւեց.

«Վայ, ինձ խաբէ՞ գիւղացին.
կաց, էն միւս ցանոցին,
ինչ որ ցանենք հողումը,
նրան կը տանք ցօղունը»:

3.

Միւս տարի ցանոցին
արջին առաւ գիւղացին.
— Ախպէր, արի մենք էլի
մի բան ցանենք կիսովի:



Արջը թէ՛ «Հա, շատ բարի,
միայն անշուշտ էս տարի
ինձ արմատը հողումը,
քեզ փրերն ու ցօղունը»:
— Համաձայն եմ ես նորէն,
էս հետ ցանենք մենք ցօղեն.
Մարդը գետէր իր բանը.
ապօրը հետ՝ իր տանը

ցօղենն ածեց տոպրակը,
տւեց նրա շալակը.
ու ցանեցին էն արտը
բրդոտ ապէրն ու մարդը:

4.

Ընկերները յունիսին
արան հնձեցին միասին:
Հասկերն ընկաւ գիւղացուն,
արմատն ընկաւ սարեցուն.
Արջը էլ չը համբերեց,
էտտեղ մի լաւ փրփրեց.
արդէն սաստիկ նեղացաւ,
թքեց, մարդուց հեռացաւ:
Ու էն օրից մինչ հիմի
շատ է մարդուն թշնամի:



փուր—տերե:
կիսրար—կիսովի, կէսուակէս:
տողել—ուռչել:

1. Ինչ ասել է՝ միւս ցանոցին, էս հետ ցօղեն ցանեցին,
մարդու գէմ լարւեց:

2. Ասա աւելի պարզ՝ ինչ ես անում քեզ ու քեզ, ինձ ու
ինձ ասում էի:

72. Ուր է իմ արևը

1.

Կար ու չը կար մի փոքրիկ սերուն աղջիկ:

Մի օր այդ փոքրիկ աղջիկը զարթնեց, նայեց շորս կողմը, տեսաւ՝ մութն է: Այնպէս մութն է, որ հազիւ գտաւ իր գուլպաները:

Նայեց լուսամուտի կողմը. «Ո՛ւր է իմ արևը», ասաւ, «նր է իմ պայծառ արևը»:

Վեր կացաւ, հագաւ կօշիկները, հագաւ վերարկուն ու գնաց իմանայ՝ ուր է կորել իր արևը:

2.

Երբ տանից դուրս էր գալիս, դէմը ելաւ բամին:

— Այ քամի, դու հեռու աշխարհներից ես գալիս, չը գիտեմ, էս օր ուր է կորել իմ արևը, — ասաւ փոքրիկ աղջիկը:

— Հո՛ւ, հո՛ւ, ճամփայտուր, — բարկացաւ քամին ու կորաւ գնաց:

— Ա՛հ, ինչ կոպիտն է — մտածեց աղջիկը — ու առաջ գնաց:

3.

Յանկարծ շրփալի դէմն ելաւ անձրևը:

— Բարև քեզ, անձրև, — ասաւ փոքրիկ աղջիկը: Իմ արևը չե՞ս տեսել:

— Այ, կը թրջեմ, չը՛ փ, — ասաւ անձրևը:



Ապա տեսնենք, — ծիծաղեց փոքրիկ աղջիկը ու բաց արաւ հայրիկի մեծ հովանոցը:

4.

Մի քիչ էլ գնաց ու պատահեց վարդի թփին:

— Սիրուն թփիկ, դու լաւն ես, չը գիտեմ էսօր ուր է կորել իմ պայծառ արևը:

— Ախ, ես այնպէս ծարա՛ւ էի, տերևներս այնպէս փոշոտ, կոկոմներս էլ թառամում էին, — փրսփրոսաց վարդի թուփը, անձրևի կաթիլները վրայից թափ տալով:

— Ես քեզ իմ արևն եմ հարցնում, — ասաւ փոքրիկ աղջիկը:

— Ախ, ես այնպէս ծարաւե՛լ էի, այնպէս շոքե՛լ: Անձրևը եկա՛, արմատներիս ջուր տաւ, տերևներս լաց:

5.

Մի քիչ էլ գնաց, տեսաւ ծիտիկին:

— Ծիտիկ պի՛ծիկ, չը գիտեմ ուր է իմ արևը:

— Արե՛ւը: Կուզե՛ս, — ասաւ ծիտիկը:

Ծիտիկը թռաւ. նստեց մի բարձր ճիւղի ծայրին ու սկսեց երգել:

Առաջ երգում էր կամաց ու քնքուշ, ու ծաղիկները իրենց թաց երեսները բարձրացրին:

Յետոյ աւելի զլարթ ու աշխուժ. բոլոր կենդանիները դուրս եկան իրենց թաքնւած տեղերից:

Վերջը՝ այնպէս սրտանց ու հրաշալի, որ ինքը արևը գլուխը դուրս հանեց սև ամպերի ետևից ու ժպտաց:

Ո՛վ էր կորել նրա արևը:

Գը ի՛ր՝ ինչպէ՛ս էր վարդի թուփը անձրևի զայուց առաջ եւ յետոյ:

Առաժ. — Անուշ լեզուն օձը բնից կը հանի:

Ի՛նչ տարբերութիւն ծիլ, բողբոջ, կոկոն:

73. Կորեկի հատիկ

Քնել էր ծիտը իր փոքրիկ բնում
ու իր քնի մէջ երազ էր տեսնում.
Իբրեւ թէ լուսին գիշեր էր պայծառ,
ու անթիւ աստղեր վառ իրար մօտիկ,
բալորն էլ մի-մի կորեկի հատիկ,
և իբրեւ ինքն էլ թռչում անընդհատ,
կացում է՝ տիբ-տիբ,
երկնի երեսից աստղերը հատ-հատ:

Բայց երբ արևը նայեց ճիւղերից,
զարթնեց ծիտիկը իր խորունկ քնից,
կռուցը մի քիչ քսեց դէս ու դէն
ու շատ գարմացած ասաւ իր մտքում.
«Ամբողջ գիշերը չէ՞ որ երկնքում
ես ուտում էի կորեկի հատիկ
ու կացում՝ տիբ-տիբ,
էլ ինչո՞ւ եմ ես այսպէս քաղց զգում»:

Առաժ. — Հաւը երազում կորեկ կը տեսնի:

74. Վախկոտ Հանեսը

1.

Մի օր հայրը Հանէսին ուղարկել էր այգի՝ սոխը ջրելու:
Հանէսը ջուրն արել էր մարգը, բահը մօտը ձգել, իսկ ինքը
գլուխը կախ քաղհան էր անում: Յանկարծ մէջքին մէկը մի
պինդ կպցրեց: Սարսուփից Հանէսը վեր թռաւ տեղից և ինչ-
քան ուժ ունէր սկսեց փախչել: Ներս վազեց տուն ու շնչա-
սպառ պառամեց, թէ գոյ է մտել այգին ու իրեն էլ ծեծել:

Հայրը իսկոյն վերցրեց գանակը և վազեց այգին: Մյգում
ոչ ոք չը կար: Սոխի մարգի մօտ ձգւած էր իրենց բահը: Զու-

րը տակի հողը փափկացրել էր, բահն էլ վայր էր ընկել ու
կպել Հանէսի մէջքին:

Այդ օրւանից եղբայրներն ու քոյրերը օր չէր անցնում,
որ նրան չասէին. «Հանէս, Հանէս, էն գողը հնց էր քեզ այ-
գում ծեծել»:

2.

Մի ուրիշ անգամ երեկոյեան դէմ Հանէսը այգուց մենակ
տուն էր վերադառնում, մէկ էլ իր ետեից խշշոց լսեց: Էլ ետ չը
նայեց ու քայլերը արագացրեց: Ինչքան նա արագ էր գնում,
այնքան էլ աւելանում էր խշշոցը: մէկը հալածում էր, և Հա-
նէսը սկսեց վազել: Ետեից եկողն էլ նոյնպէս սկսեց վազել
աւելի սաստիկ խշշացնելով, էն է՝ բռնելու էր Հանէսի ոտ-
ներից:

Ճարը կտրած Հանէսը հեալով մէջքը տաւ ցանկապա-
տին, ձեռքի ճիւղտը բարձրացրեց և դողդողալով կրկնո՞ւմ էր.

— Դէ, արի, դէ, արի. այ. կը տամ, այ, տալիս եմ:

Թշնամին չը կար: Հանէսը հազիւ ուշքի եկաւ ու այդ
ժամանակ միայն նկատեց, որ իր չուխի փէշին մի փուշ է
կպել: Սուս ու փուս տուն վերադարձաւ, ոչ ոքի բան չասաւ:
Ի՞նչ կասէր:

Պատմիր՝ երբեւիցէ վախեցնել ես, ինչից եւ ինչպէ՞ս:

ցանկ — ճիւղերով ու փայտերով հիւսած պատ. նոյն և ցան-
կապատ:

ցից — գետինը խրած փայտ. ցցել — փայտի պէս տնկել:
քաղհան — արտի կամ այգու անպէտք խոտերը մաքրել:

1. Ի՞նչ տարբերութիւն ունի՝ շնչել և հեալ, հալածել և
փախցնել, թի և բահ:

2. Ի՞նչ ասել է՝ մէջքին մի լաւ կպցրեց:

75. Աքլորն ու մարգարիտը

Օրւան մէկը մի աքլոր
բջուջ-մջուջ անելիս՝
տեսաւ մի հատ մարգարիտ՝
աղբի միջին փայլելիս:

Կտցեց, ասաւ. «Էս ի՞նչ է.
ինձ հարցընես՝ ոչինչ է:
Այ, վայր տամ էն մարդին.
որ զին կը տայ էս գատին.
իսկ ինձ համար մի գարին
արժէ էսպէս հազարին»:

բջուջ անել—հաւերի ոտքով հողն ու աղբը զբոսելը:
գատ—բան, առարկայ:

1. Ե՛րբ ենք մէկին վայ վալիս. և ի՞նչ ասել է վայ տալ:
2. Ինչպէ՞ս կասես մէկ բառով՝ մի բանի գինը տալ ու առ-
նել. Իսկ ի՞նչ ասել է՝ կտցել:

76. Անվախ Մարիամը

—Մարինձ, գնա մառանից մի քանի գետնախնձոր բեր. —
կանչեց մայրը խոհանոցից:

Մարիամը ունքերը կիտեց, դունչը ծոճոեց՝ մենակ մա-
ռան գնալ չէր սիրում, վախենում էր մկներէից: Բայց չէր ու-
զում ցոյց տալ, թէ վախենում է:

Մի՛թէ ամօթ չէր՝ ութը տարեկան ահագին աղջիկ մկնե-
րից վախենայ:

Բանալիները վերցրեց ու գնաց:

Առաջ ոտքով ուժեղ զարկեց դռանը, իբր թէ պատահմամբ,
յետոյ շփախկացնելով բանալին անց կացրեց կողպէքը, որ մեկ-
ները լսեն ու փախչեն. բաց արաւ դուռը աղմուկով, կողովը

իրենից առաջ նետեց ներս, փըշտ, փըշտ կանչեց բարձր
ձայնով, արագ վազեց ներս և ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէ՞ս
կողովը լցրեց գետնախնձորով ու դուրս թռաւ:

Վազելով հասաւ խոհանոց, կողովը դրաւ մօր առջևը և
հպարտ-հպարտ ասաւ.

—Բերի. մայրիկ:

Բայց մեր մէջը մնայ՝ մառանի դուռը թողել էր բաց:

Ինչո՞ւ էր Մարիամը հպարտ, երբ գետնախնձորը բերաւ:
Պատմի՛ր՝ պատահել է քեզ, որ դու էլ յաղթես քո վախը:
Գրի՛ր, ինչպէ՞ս Մարիամը մտաւ մառան:


մառան—տան մէջ պտուղ և ուրիշ ուտելիքէն պահելու տեղ:
պատահմամբ—առանց ուզելու առանց գիտենալու. հակառակը՝
դիտմամբ:

Ե՛րբ ենք ունքերը կիտում. իսկ ե՛րբ ենք բարձրացնում:

77. Ուշուր

Գարունը եկաւ ամպերով,
ամպերը եկան անձրևով.
անձրևը տանեմ արտին տամ,
արտը ինձ ցորեն տայ.
ցորենը տանեմ ջաղացին տամ,
ջաղացը ինձ ալիւր տայ.
ալիւրը տանեմ տաշտին տամ,
տաշտը ինձ խմոր տայ.
խմորը տանեմ թոնրին տամ,
թոնիրը ինձ հաց տայ,
հացը տանեմ բոշին տամ,
բոշին ինձ ուլունք տայ.
ուլունքը տանեմ նանիս տամ,
նանս ինձ ծեծի, ծեծի,
տանից քշի, դուրս անի:

Էս ասողը աղջի՞կ է, թէ տղայ:



78. Տղան ու արևը

—Արև, նորից գնում ես դու.
սարի-ետե ի՞նչ ունես դու:
Քիչ էլ մնա լեռան կողին,
դեռ չեմ ուզում ես անկողին.
Վազվզել եմ ես դեռ ուզում
զով ու զլարթ այս պարտեզում:
—Սարի ետե, այ ժիր տղայ,
քեզ պէս առոյգ մանուկ շատ կայ,
որոնք՝ ամբողջ գիշերը քուն,
սպասում են իմ գնալուն.
Նրանք նայնպէս զով պարտեզում
խաղայ, վազել շատ են ուզում:

Ի՞նչպէս է, որ մի տեղ նոր են գնում անկողին, իսկ մի ուրիշ
տեղ անկողնից դեռ նոր պիտի վեր կենան:

առոյգ—աշխուժ:

Ո ընչ կերպ ինչպէս կասես ժիր, զլարթ:

79. Ճամփորդներ

1.



Աբլորը մի օր կտուրը բարձրացաւ, որ
աշխարհ տեսնի: Վիզը ձգեց, երկարաց-
րեց, բայց բան չը տեսաւ. դիմացի
սարը խանգարում էր:

—Քուշի ախպէր, կարելի է դու գի-
տենաս, էն սարի ետե՞ն ի՞նչ կայ,—
հարցրեց վերևից բակում պառկած
շանը:

—Ես էլ չը գիտեմ,— պատասխանեց

Քուշին:

—Հապա մինչև երբ պէտք է այդպէս մնանք. արի գնանք
մի տեսնենք՝ աշխարհումս ի՞նչ կայ, ի՞նչ չը կայ:

Շունն էլ համաձայնեց: Խօսքը մին արին ու փախան:

Գնացին, գնացին, իրիկունը հասան մի անտառ: Քիշերը
մնացին էնտեղ: Շունը պառկեց մի թփի տակ, իսկ աբլորը
բարձրացաւ մօտիկ ծառին. քնեցին:

2.

Լուսադէմին աբլորը կանչեց՝ ծուղրուզով:

Մի աղւէս լսեց աբլորի ձայնը:

—Վա՛հ, սա ճրտեղից դուրս եկաւ, այ լաւ նախաճաշիկ,—
մտածեց աղւէսը ու վազեց:

—Բարի լուս, սանահէր աբլոր: Ի՞նչ ես շինում էս կողմերը:

—Գնում ենք աշխարհ տեսնելու,— պատասխանեց աբլորը:

—Օ՛, ինչ լաւ բան էք մտածել,— խօսեց աղւէսը:— Քանի
ժամանակ է ես էլ մի կարգին ընկերի եմ ման գալի: Ի՞նչ
լաւ էր՝ պատահեցինք: Դէ, ցած արի, որ չուշանանք:

—Ես համաձայն եմ.— ա-

սաւ աբլորը.— տես, թէ ըն-
կերս էլ համաձայն է, ցած
գամ գնանք:

—Ո՛րտեղ է ընկերդ:

—Էն թփի տակին:



«Սրա ընկերն էլ երեւի իր նման մի արջոր կը լինի. էս էլ իմ ճաշը»,—մտածեց աղւէսը ու վազեց թփի կողմը: Յանկարծ որ շուներ դուրս եկաւ, աղւէսը, պոռկ, փախաւ, ոնց փախաւ: —Կաց, աղւէս ախպէր, մի վազի, մենք էլ ենք գալի, էտ-դէս ընկեր չի լինի,—ծառի գլխից ձայն էր տալիս արջորը:

Ինչո՞վ վերջացաւ արջորի ու շան ճամփորդութիւնը:

Հաճե՞լ ու՞ է. —Մի թոփ կտաւ ունեմ փռած, ծալում եմ ծալում, չի ծալում:

վազել—շտապել:

1. Ո՞վ է սանահէլը, ո՞վ է սանամէլը. որոնք են արմատները. և ի՞նչ ասել է՝ սան, սանիկ:

2. Ի՞նչ ասել է՝ նախաճաշել, ճաշել, ընթրել: Ի՞նչ ասել է՝ նախաճաշ, ճաշ, ընթրիք:

3. Ի՞նչ ասել է՝ խօսք մին անել, ի՞նչ ես շինում էս կողմերը:

80. Երկրի շուրջը

—Հայրիկ ջան, ի՞նչ կայ մեր այգիներից դէնը,—հարցրեց Յասմիկը յանկարծ:

—Չը գիտե՞ս, աղջիկս: Արտեր:

—Իսկ արտերից դէ՞նը:

—Սարեր, տես:

—Իսկ սարերից դէ՞նը:

—Կրկին սարեր, կրկին ձորեր, ծովեր:

—Իսկ ծովերից դէ՞նը:

—Ուրիշ երկիրներ. ուրիշ աշխարհներ, էլի ծով, էլի ցամաք:

Եւ գիտե՞ս, հոգիս, եթէ այդպէս գնաս ու գնաս՝ ուր կը հասնես:

—Ո՛ւր:

—Հենց այնտեղ, որտեղ հիմա կանգնած ես:

—Վահ, —զարմացաւ Յասմիկը:

Երկրի շուրջը ինչո՞վ կարելի է ճամփորդել:

Հաճե՞լ ու՞ է. —Կերթայ, կերթայ՝ ճամփա չը կայ, ճամփա կերթայ՝ փռի չը կայ:

81. Թոշուկի մտածվուկը

Ես ապրում էի մի փոքրիկ տան մէջ
առատ ու անփոյթ:

աշխարհքն ինձ համար կլոր էր անվերջ,
կեղեք կապոյտ:

Նըրանից յետոյ աչքըս բաց արի
մի փոքրիկ բնում:

ասի՝ աշխարհքը յարդից է շինած
ու մայրս է շինում:

Մի օր էլ բնից գլուխս հանած
նայում եմ դէս-դէն,
տեսնեմ՝ աշխարհքը տերեւից շինած՝
մեր բունը վրէժն:

Հիմի թռչում եմ հեռու, շատ հեռու,
ամեն տեղ գրնում,
բայց թէ աշխարհքը ինչի՞ց է շինած,
էլ չեմ հասկանում:

Շ ու տ ա ս ե լ ու է. —Մի տաշտ հով ճաթ, մի տաշտ տաք ճաթ,
մի տաշտ ճաքճըքոտած ճաթ:

82. Թղթէ նաւակները

Մէկը միւսի ետեից բաց եմ թողնում ես իմ թղթէ նաւակները սրընթաց գետակի հոսանքով:

Նրանց վրա սե տառերով գրում եմ իմ անունը և այն գիւղի անունը, ուր ես ապրում եմ:

Յուսով եմ, որ հեռու, օտար աշխարհում մէկը կը գտնի նրանց և կիմանայ՝ ով եմ ես:

Ես բաց եմ թողնում իմ թղթէ նաւակները, դարձնում եմ աչքերս երկնքին ու տեսնում, թէ ինչպէս այնտեղ մանր ամպերը պարզել են իրենց ճերմակ, ուռած առագաստները ու գնում են:

Ես չը գիտեմ, թէ ով է այն երկնքի իմ խաղընկերը, որ բաց է թողնում նրանց վերևում՝ իմ նաւակների հետ մրցելու համար:

սրընթաց — արագ վազող:

հոսանք — ջուրի վազքը, ջուրի շարժումը:

մրցել — աշխատել դիմացինի արածից աւելի լաւը անելու:

1. Ինչ ասել է թուշում եմ գետի հոսանքով:

2. Յուսով եմ. ուրիշ ինչպէս կասես:

3. Թղթէ նաւակ, փայտէ կօշիկ, գաւազան, բրդէ շապիկ. ինչ է ցոյց տալիս է մասնիկը:

83. Մոծակի մահը

Երկնուց խփեց հուր կայծակ,
ընկաւ կաղնուց մի մոծակ,
մոծակն ընկաւ կաղնու մօտ,
թե ու թիկունքն արիւնոտ:

Ճանճերն եկան վրզգալով,
տրզտրզալով, բրզգալով,
եղբօր վրա շատ լացին,
աղի արցունք մաղեցին.
«Ազիզ ախպէր, քաջ մոծակ,
էլ չես թռչի թևարձակ.
Ախ, խաւարի մեր լուսը,
կտարւել է քո ուսը.
դու տանջւում ես չարաչար.
ափսոս չը կայ ոչ մի ճար»:
Մոծակն իրեն հաւաքեց,
նւազ ձայնով կտակեց.
«Իմ քուրիկներ աննման,
փորէք կանաչ պուրակում,
որտեղ դուք էք նւագում:
Ա, եհն, ամեն իրիկուն,
երբ դուք երթաք դէպի տուն,
իմ հօրքուրներ, մօրքուրներ,
ըզբօսասէր քուրիկներ,
անցէք, դարձէք իմ մօտով,
ինձ յիշեցէք կարծառով»:
Ճանճերն այդտեղ լաց եղան.
«Մեռաւ, ասին քաջ տղան.
ոչ թէ չնչին մի ձագ էր,
մոծակն իսկ որ մոծակ էր»:

հուր — կրակ:

թիկունք — կռակ, մէջք:

ազիզ (թուրք.) — սիրելի, ընտիր, թանգազին:

խաւար — մութ. խաւարել — մթնել

նւազ — թոյլ. նւազել — թուլանալ:

կտակ—մեռնող մարդու թողած կարգադրութիւնը, կամքը:
պուրակ—փռքիկ անտառ:
նւագ—եղանակ. նւագել—որեւ գործիքի վրա ածել:
ըզբօսներ—զւարճանալ, ման գալ. զբօսանք—զւարճութիւն:

1. Ի՞նչ է ուզում ասել՝ մոծակը իրեն հաւաքեց. անխ, խաւա-
րի մեր լուսը. եղբօր վրա աղի արցունք մաղեցին:

2. Ի՞նչ ասել է՝ բժիշկը ճար գրեց հիւանդին. ճար չը կա.
պէտք է երթամ. անճար մարդ:

3. Թեարձակ թռչել. ի՞նչ ասել է և որոնք են արմատները:
Նոյնպէս ըզբօսասէր քուրիկներ: Նոյնպէս աննման քուրիկներ:

84. Թրքուրն ու խխունջը

1.

Կազամբի տերեւի վրա ապրում էր մի խխունջ:

Այդ տերեւի մի անկիւնում արդէն վաղուց ընկած էր մի
դեղին հատիկ: Այդ հատիկը թիթեռնիկի ձու էր:

Մի տաք օր ձւից դուրս սողաց մի փոքրիկ թրթուր.
խխունջը զարմանքով նայում էր այդ նոր արարածին:

«Ի՞նչ չնչին, ի՞նչ ողորմելի կատ է»,—մտածում էր նա:

Իսկ թրթուրը շատ ուրախ էր. նա սիրում էր տաք արեւ,
ի՞նչ կազամբի տերեւը ու երջանիկ էր:

Մի օր խխունջը մօտ եկաւ
ու պոպերը շարժելով ասաւ.

—Չարմանում եմ, ինչո՞ւ
ես այդպէս միշտ ուրախ: Մեր
կեանքը իսկի էլ այդպէս թե-
թե չէ:



—Ինչո՞ւ,—պատասխանեց թրթուրը,—շատ լաւ է. Շու-
տով էլ մի սիրուն թիթեռ կը դառնամ, կը թռչեմ վեր, արևի
ոսկի շորերի տակ. անխ, ի՞նչ լաւ կը լինի:

Խխունջը երեսը շուռ աւաւ ու ծիծաղեց.

—Ի՞նչ յիմար բաներ է դուրս տալիս սա:

2.

Քիչ յետոյ թրթուրի ուրախութիւնը կորաւ. Թմբեկ մնա-
ցել էր մի տեղում:

Մի անգամ խխունջը անց էր կենում նրա կողքից, տե-
սաւ որ թրթուրը փաթաթւել է մի տեսակ կաշւի մէջ ու
անշարժ ընկել:

—Այսպէս էլ յիմար,—բացականչեց խխունջը.—ասում էր
թիթեռնիկ պիտի դառնամ, տես, ընկել սառկել է:

Մի քանի ժամանակ էլ անց կացաւ, խխունջը բոլորովին
մոռացել էր իր հարեանին և ապրում էր առաջւայ պէս կա-
զամբի վրա: Մի օր էլ անց էր կենում նրա գերեզմանի մօ-
տով ու յանկարծ զարմացած կանգ առաւ. թրթուրի պատը-
ւած կաշւի մօտ նրա-
տած էր մի սիրուն
թիթեռնիկ և նրա
թաւիշ թևերը փայ-
լում էին արևի շողե-
րի տակ:

—Մնաս բարով,
խխունջ, ես գնում
եմ,—կանչեց թիթեռնիկը, թևերը թեթե թափ աւաւ, բարձ-
րացաւ վեր ու կորաւ արևի պայծառ շողերի մէջ:



Խխունջը ինքը ինչպէս կը պատմէր այս ամենը:

Գրի՛ր, ինչպէս հետգհետ դեղին հատիկը դարձաւ թիթեռ:

85. Անճոռնի ճուտիկը

1.


Երեք շաբաթ թուխսը վեր չէր կենում ձւերի վրայից։ Ճուտերը արդէն դուրս էին եկել, մնում էր միայն մի կանաչաւուն փոքրիկ ճուտ։

Վերջապէս մի առաւօտ թուխսը նկատեց, որ ձւի ներսից մէկը թրխթրկացնում է։ Իսկոյն շարդեց ճուտն կտցով, ու միջից դուրս եկաւ ճուտիկը։

Սա նման չէր իր եղբայներին ու քոյրերին։ Աւելի բլրդոտ էր, աւելի դեղին, ստիկները կարճ-կարճ, գլուխը լայն, կտուցը տափակ։

«Էս ինչ անճոռնի է», — մտածեց մայրը, մի քիչ տիբեց, բայց շուտով ինքն իրեն սիրտ տւաւ, թէ ոչինչ, կը մեծանայ, կը գեղեցկանայ։

Հաւաքեց իր բոլոր ճուտիկներին ու հպարտ-հպարտ կոըրկալով գնաց բակը։ Փոքրիկները աշխուժ ու արագ վազվզում էին նրա շուրջը. միայն նորածինը քայլում էր ծանր ու օրօրւելով։



2.

Մայրը տարաւ նրանց առւի ափը քուշուշ տնելու։ Անճոռնի ճուտիկը շուրջ տեսաւ թէ չէ՝ ընկաւ մէջը։

Մայրը սարսափած ճչում էր, կանչում, թները թափ տալիս, նետւում գէպի շուրջ։

Ճուտիկներն էլ ծուլւմ էին, դէս ու դէն ընկնում։

— Օգնեցէք, եղբայրիկը խեղդւում է։

Ամբողջ բակը իրար անցաւ. հաւերը կը շկըշացին, աքլորը բարձր ծղրտաց, փքւած հնդկահաւն էլ ամուր դուտղուտում էր։

Իսկ անճոռնի ճուտիկը շարժում էր իր թաղանթաւոր թաթերը ու հանգիստ լող տալիս ջրի երեսին։

Պառաւ նանը լսեց թուխսի ճիչն ու բակի աղմուկը, դուրս վազեց, տեսնի՝ ինչ է պատահել։ Ու խփեց ծնկանը։

— Վայ, քառանամ ես, էս ինչ եմ արել. հաւի տակ բաղի ճուտ եմ դրել։

Պատմի՛ր՝ ինչպէս կը լինէր այս պատմութիւնը, եթէ պառաւ այդ նոյն ձերը մի թխսկան ըտղի տակ դրած լինէր։

Գրի՛ր, ինչ աղմուկ բարձրացաւ քսկում, երբ անճոռնի ճուտիկը շուրջ մտաւ։

անճոռնի — տգեղ, անշնորհ։

թուխս — ձւերի վրա նստած հաւ՝ ճուտ հանելու համար։

տափակ — ոչ կլորաձև, այլ հարթ, ուղիղ։

թաղանթ — բարակ կաշի, բարակ մաշկ։


1. Ինչ տարբերութիւն ունի շաբաթ բառը, եթէ ասեմ՝ մի շաբաթ մեզ հիւր եղաւ, մի շաբաթ օր մեզ հիւր եղաւ։

2. Կանաչ — կանաչաւուն, կապոյտ — կապտաւուն, այսպէս էլ ասա՝ միւս գոյները. ինչ տարբերութիւն ունեն այդ զոյգ բառերը, աւու՛ն մասնիկը ինչ փոփոխութիւն է տալիս։

3. Ինչ ասել է՝ իրար անցան։ Ինչ ասել է նորածին։

4. Էլ ինչ թռչուններ գիտես, որոնք թուխս են նստում։

86. Մարդը



Ցանց է հիւսում ճարպիկ սարդը
երկար, բարակ ոտներով.
ն, ճանճերն են նրա դարձը,
բան չի կերել օրերով:

Շուրջ է գալիս, շուրջ է գալիս,
իր նուրբ թելերն է հինում,
դէն է գնում, դէս է գալիս,
մինչև գործը աւարտում:

Տես, վարպետը սոված փորով
կծկւել է մի կէտում

և անհամար իր աչքերով

ճարպիկ ճանճերն է դիտում:

Շուրջ են գալիս, շուրջ են գալիս,
ճանճերն ըզգուշ են թռչում:

հասկանում են, մօտ չեն գալիս,
տրգարգում են ու կորչում:

Առած. — Ճանճն ինչ է՝ ճենճն ինչ լինի:

ցանց — խոշոր ծակերով հիւսւածք

ճարպիկ — նարազէտ, ժիր, աչքաբաց:

նուրբ — շատ բարակ:

հինել — թելերը փռել կտաւը գործել սկսելուց առաջ:

անհամբեր — անթիւ:

կծկւել — կծիկ գառնալ, կուշ գալ:

աւարտել — վերջացնել:

1. Թելը մանել, թելը բանել, թելը հիւսել, թելը հինել, թելը
գործել, ինչ տարբերութիւն:

2. Ի՞նչ ասել է՝ ճանճն է նրա դարձը, փողն է նրա դար-
ձը, երեխան է նրա դարձը:

87. Մրջնոց

1.



Անտառի բերանին մի բլրակ
կար. դա մի ամբողջ քաղաք էր:
Այդ քաղաքում կային երկար փո-
ղոցներ, անթիւ բնակարաններ,
լիքը ամբարներ, մի խօսքով

ամեն բան իր տեղը, կարգին ու խելօք:

Վարպետները տներ էին շինում, մշակները պաշար էին
հաւաքում մայրերի ու հայրերի համար, դայեակները երե-
խաներին էին մօտիկ տալիս, իսկ զինւորները պահպանում
էին քաղաքը:

Եւ հանգիստ, բախտաւոր ապրում էր այս քաղաքը: Եւ
այդ քաղաքը մրջնոցն էր:

2.

Մի օր անտառին մօտիկ գիւղից մի տղայ եկաւ ու տեսաւ
քաղաքը: Այդ սարսափելի հսկան իր ահագին ոտը դրաւ այդ
քաղաքի վրա:

Բնակարաններն ու ամբարները փռւ
եկան, հողը լցրեց
փողոցները: Դայեակները մանուկ մրջնաներին գրկած դուրս
փախան, մշակները մոլորւած դէս ու դէն էին վազվզում:
Իսկ ահագին ոտը շարունակում էր փորփրել:

Միայն կտրիճ զինւորներն էին, որ գլուխները չը կորցրին:

Ու առաջ ընկան, նրանց ետևից բոլոր մրջնաները: Նրանք
միասին յարձակւեցին հսկայի վրա, կծեցին, կծոտեցին, թոյն
լցրին, ուռեցրին կծած տեղերը:

Հսկան ոտները թափ էր տալիս ու ճխլում յարձակւող-
ներին: Քաղաքի քաջ պաշտպաններից շատերն ընկան այս
մեծ պատերազմում, բայց թշնամին վերջապէս յաղթւած
թողեց քաղաքն ու հեռացաւ:

Կենդանի մնացածները վերադարձան քաղաք: Նորից շի-
նեցին իրենց բնակարաններն ու ամբարները, մաքրեցին փո-

դոցներն ու հրապարակները, նորից կարգ և հանգստութիւն հաստատեցին քաղաքում:

Եւ նորից վարպետներն ու մշակները ժիր աշխատում են, իսկ դայիակները խնամում են մանուկ մրջիւններին, որ մեծանան ու դառնան իրենց քաղաքի համար կտրիճ մշակներ ու քաջ պաշտպաններ:

Հանելուկ.—Մի գոմ ունեմ, հազար գլուխ ոչխար կը տանի, մէկ կապ խոտ չի տանի:

մշակ—հողը մշակող, աշխատաւոր:

մուրուել—գլուխը կորցնել, ճամփան կորցնել:

պատերազմ—մեծ զօրքով կռիւ:

կտրիճ—քաջ և երիտասարդ:

ճխլել—ճմլել, սեղմել ու փչացնել:

1. Ի՞նչ բան է՝ ընակարան ու ամբար:

2. Ի՞նչ ասել է՝ գլուխը կորցրել է:

88. Փայտփորը



Թըխկ-թըխկ, թըխկ-թըխկ, խոր ծրմակում

ժիր փայտփորն է կրացով պարկում,

փառած ծառից դուրս է կանչում

որդեր, բզեզ, մոլորուկ, մրջիւն:

Իսկ թէ որսը մընում է փակ

իր ընի մէջ, կեղևի տակ,

երկար լեզուն ներս է տանում,

որսը հանում, անուշ անում:

Թըխկ-թըխկ, թըխկ-թըխկ, խոր ծրմակում

նա է փթած ծառն իստակում:

Ժմակ—անտառ, արև չը տեսնող, հիւսիսային կողմը:

89. Մեխ պատմութիւնը

—Ըհր, ու՛ֆ, —խորը տնքաց մեխը և պինդ խրւեց տախտակի կուրծքը:

—Վահ, մի քիչ քաղաքավարի, էտպէս հուպ չեն տայ,—բողոքեց տախտակը, նորեկին տեղ տալով իր ծոցում:

—Ի՞նչ քաղաքավարութեան ժամանակ է, գլուխս ջարդեց էտ անիծածը,—վրա տուաւ մեխը չարացած:

Երբ մուրճի վերջին հարւածը անց կացաւ ու մեխի գլուխը քիչ հանգստացաւ, փոխւեց և նրա տրամադրութիւնը:

—Է՛սպէս էլ չարչարանք,—բացականչեց ինքն իրեն:

—Չարչարանք, չարչարանք. մարդ իմանայ՝ էտ ի՞նչ էք անում դուք, մեխերդ, որ բոլորդ էլ շարունակ տրտնջում էք,—զայրացաւ տախտակը: Չարչարանքը այ մերն է. էնքան տաշում են, տաշում, հոգի են հանում. վերջս էլ ամեն կողմից ծակծկում, թէ չէ՝ ձե՛զ ինչ է եղել:

—էտպէս չէիր խօսի, եթէ իմանայիր՝ որտեղից եմ գալի և ինչեր է անցել գլխովս,—պատասխանեց մեխը:

—Ո՛րտեղից ես գալի:

—Մութ աշխարհից:

—Մութ աշխարհից:

—Է՛յ, բանի հագար տարի է թաղւած էի գետնի տակ, բարերի հետ միասին:

—Բա ի՞նչպէս դուրս եկար:

—Ես ի՞նչ գիտեմ: Եկան ծակեցին, ջարդեցին, լոյս աշխարհը հանեցին:

—Յետոյ:

—Յետոյ ածեցին հնոցը սարսափելի կրակի մէջ: Տաքից թուլացանք, հալւեցինք, ջուր կտրեցինք. հազիւ էինք քիչ հոփացել, սկսեցին ծեծել ու ձիգ տալ: Բարակացրին, ահագին մկրաաներով կտրեցին, գլխիս տւին, տափակացրին, յետոյ

էլ ոտքս խարտոցի դրին: Բայց էհ,—աւելացրեց նա յանկարծ
արհամարանքով,—դու ինչ պիտի հասկանաս էս բոլորից, գնւ,
որ ոչ կրակ ես զգացել մարմնիդ, ոչ էլ լոյս աշխարհից դուրս
բան ես տեսել կեանքումդ:

տնքալ—ցաւից հառաչել:

բողոքել—ուժեղ կերպով յայտնել դժգոհութիւնը:

տրամադրութիւն—քէֆը:

հնոց—մեծ վառարան ուժեղ կրակի համար:

արհամարել—բանի տեղ չը դնել, նշանակութիւն չը տալ:

խարտոց—երկաթի երեսը հարթելու գործիք, սրոց:

1. Ինչպէս կասես ուրիշ կերպ՝ քաղաքավարի, գիւղավարի,
մարդավարի, իշավարի:

2. Ինչ տեսել է՝ նրա գլխովը շատ բան է անցել. հայեցինք,
ջուր կտրեցինք:

3. Ինչպէս կասես ուրիշ կերպ՝ հարւած, ինքն իրեն:

4. Տաշել—տաշտշել, ծակել—ծակծակել, վազել—վազվզել:
Երբ մի բառի մէջ նոյն արմատը կրկնւի, երկրորդ արմատը ինչ
փոփոխութիւն է կրում: Ասան ուրիշ օրինակներ էլ:

90. Հովւի անկողինը

Սարի լանջը մահճակալ,
չեչոտ քարը գլխակալ,
մի հին կարպետ ուսերին,
այս է հովւի անկողին:

Երբ անձրեւ է կաթկթում
և կարպետը թրխկ-թրխկում,
հովիւն անուշ քնի մէջ
քաղցր երազ է տեսնում
և խնդում,
ծիծաղում:

ուխան, ուխան, սիրուն հովիւ, քունդ անձր...

91. Վուշ

1.

Վուշը բացել էր իր կապոյա փոքրիկ
ծաղիկները: Արևի շողը գուրգուրում էր
նրան, ցօղի կաթիլը փայլում էր նրա վրա
և վուշը հրճւում էր:

Բայց եկան մարդիկ, բռնեցին նրան
ու արմատով դուրս քաշեցին հողից:

—Պրծաւ.—մտածեց վուշը:

2.

Վուշը դրին ջուրը, յետոյ էլ արևի տակ:
Երբ չորացաւ թակեցին, գգեցին, սանրե-
ցին ու մանեցին: Վուշը դարձաւ թել:

Թելից կտաւ գործեցին, կտաւ էլ կարեցին մի սիրուն
շապիկ:

Եւ վուշը ուրախ էր նորից:

Բայց շապիկը մաշւեց, թելերը քրքուել էին և ընկնում
էին իրարից: Վուշը դարձաւ փալաս: Փալասով դռներն ու
պատուհաններն էին սրբում, մի օր էլ շալրեցին աղբանոց:

—Պրծաւ.—մտածեց վուշը:

3.

Այդ միջոցին էր, որ մէկը եկաւ վերցրեց նրան, ձգեց իր
գամբիւղը ու տարաւ գործարան:

Կտրեցին, եփեցին, խառնեցին, լւացին, հարթեցին,
ձգմեցին, մինչև որ դարձաւ մի երկար ու բարակ սպիտակ
թուղթ:

Թուղթը տարան տպարան, թերթ-թերթ գցեցին մամուլի
տակ ու տպեցին: Վուշը դարձաւ գիրք:

Ահա այդ գիրքն է հիմա քո թռչնը, որի վրա և կարդում
ես վուշի պատմութիւնը:



գուրգուրալ — սիրել ու փայփայել:
հրճել — չափազանց ուրախանալ:
բուրդը գզել — բուրդի մագերը իրարից բաժանել ու լաւը
վառելը ջոկել:

հարթ — ուղիղ, կռկ. հարթել — ուղիղ դարձնել:
մամուլ — հուփ տալու գործիք, գերք տպելու գործիք:

1. Թակել՝ ուրիշ կերպ. իսկ քրքրել, ճգմել:
2. Ինչ բան է՝ փալատ, տպարան, գործարան:
3. Այդ միջոցին՝ ուրիշ ինչպէս կ'անես:

92. Գետակը

— Ո՛ւր ես վազում
այդպէս արագ,
այ դժու կայտառ,
սիրուն գետակ.
կանգ առ, խաղանք
էս ծառի տակ:

«Չէ, փոքրիկըս,
գնամ պիտի.
տես ջաղացը
գիւղի մօտի.
պէտք է ուժ տամ,
որ պըտըտի:

«Ցածն էլ հովտում
անուշահոտ
ինձ են մնում
ծաղիկ ու խոտ,
յոգնած ծառաւ
տաւարն ու հօտ:

Դէ, տեսնում ես,
մնաս բարով.
ճամփաս ցանած
հազար գործով,
գազար չունեմ
ես մինչև ծով»:

Պատմի՛ր՝ ճամփին էլ ուրիշ ինչ գործեր է կատարում գետակը:

Հանելուկ. — Օբան օբան շուռ է գալիս,
ոտներ չունի՝ ման է գալիս,
բերան չունի՝ կուլ է տալիս:



93. Խրտուիլակ

1.

Գիւղացին մի գարու արտ ունէր. Գարին հասել էր:
Ճնճղուկները ամեն կողմից հաւաքւում էին, ուտում հա
ռառում:

Հենց որ գիւղացին գալիս էր, թողնում էին փախչում
թփերի վրա, թռչկոտում էին ու ծըլծըլում, կարծես մար
դուն ծաղրում էին:

Գիւղացին ասաւ՝ «էսպէս որ շարունակի, ինձ բան չի
մնայ»:

Գնաց մի ձող ցցեց արտի մէջտեղում, մի ուրիշ փայտ
էլ խաչածե կապեց նրան, իր մաշկած արխալուղը գցեց վրան,
մի քրքրած փափախ անց կացեց գլխին, մի կապուկ ծղնօտ
էլ կախ արաւ թևքից ու հեռացաւ:

Կարծես իսկ որ մարդ լինէր կանգնած, մանաւանդ երբ
բամին էլ փչում էր և փէշերը ու երկար թևերը շարժում:

«Դէ, հիմի տեսնեմ, ոնց էք մօտ գալու» — մտածեց
մարդը ու գնաց բանին:

2.

— Գնաց, գնաց, — ծըլծըլացին ճնճղուկները ու բոլորը
մէկանց վեր թռան թփերից:

—Էս ինչ բան է. գեռ չի գնացել,—գարմացան բոլորը.
օգի մէջ մէկ-երկու շրջան արին ու նորից իջան թփերի վրա:
Եւ սպասում էին, ծըւծըւում, ծղրտում, մինչև որ մար-
դը վեր կենայ կորչի: Բայց մարդը պինդ կանգնել էր միտի
վրա ու շարժում էր թևերը:

Ճնճողակները համբերեցին, համբերեցին ու համբերու-
թիւնները հատաւ:

—Վեր կացէք, գնանք արտի կողքերից գոնէ կտցենք—
ասաւ ամենից համարձակը:

Ու մի երկուսը զգուշ մօտեցան արտին:

Իսկ միւսները ասին.

—Ախպէր, ով գիտի տակը ինչ սատանութիւն կը լինի:
Թևերը որ էնպէս շարժում է ու գլուխը տըմբտըմբացնում,
էտ լաւ նշան չի:

Ասին ու թռան գնացին ուրիշ արտեր:

Գրիբ թէ զիւղացին ինչպէս երտելակ շինեց:

արխալուղ (թուրք.) — բաճկոնակ:

ծղնօտ — չորացած ցօղուն:

մանաւանդ — էլ աւելի, աւելի էս:

1. Ի՞նչ ասել է՝ գլուխը տըմբտըմբացնել, համբերութիւնը
հատաւ, տակը մի սատանութիւն կը լինի:

2. Ի՞նչ ասակ մարդուն կ'ասես համարձակ. իսկ հակառակը:

3. Ի՞նչ տարբերութիւն ունեն՝ մաշկած շապիկ, քրքրւած
շապիկ:

94. Կաղնու վարձուողները

Մեր ծեր կաղնին իր հին տունը
տւել է չորս վարձուորի:

Արմատի մօտ ներքնատունը
մուկն է բռնել այս տարի:

Ատաղձագործ փայտփորիկը
ցածի յարկի խանութում

անց է կացնում իր օրիկը,
թակում, կտցում, ծակոտում:

Իսկ վերևի յարկում տիտիկ
շէկ սկիւռն է բնակւում,
կաղին, ընկոյզ, սերմ ու հատիկ
զիզած իր լի փըշակում:

Թաւ ճիւղքումը դրել է բուն
մի զիւ երգիչ դուրալի.
ու ճըլըլում է օրն ի բուն,
իսկ վարձ ոչ ոք չի տալի:

վարձ ոք — տունը, շէնքը. կալածքը վարձողը:
օրն ի բուն — ամբողջ օրը:

1. Ի՞նչ ասել է՝ տունը մուկն է բռնել, իր օրը անց
նել, տիտիկ անել:


95. Ոգնին եւ օձը

1.

Ամառայ մի տաք օր էր: Արևի կիզիչ շողերը այրում,
խորովում էին արտն ու արօտը: Դրսում ամեն ինչ լուռ էր:
Գիւղի առջևից հոսող վտակի վշտոցն էր լսւում. նա էլ էր
պապանձւել:

Օրւայ այդ շոք պահին գիւղի բոլոր երեխաները հաւաք-
ւել էին ձորի գլխին ու նայում էին ցած. ներքև, ձորի մէջ
կուռում էին ողնին ու օձը:

Կռիւր կատաղի էր: Օձը սուլում էր, թռիչքներ էր անում
փշոտ ողնու շուրջը, բայց ոչ մի կերպ չէր կարողանում
բռնել: Ոգնին էլ փոքրիկ գլուխը հանում էր ու յարմար րո-



պէից օգտուում, կծում
օձի մէջքը, փորը, վիզը
ու կըծկւում: Վերջին
անգամ փշերի միջից
հանեց նա գլուխը, յան-
կարծ բռնեց օձի պոչը
և կրկին կծկւեց:

2.

Օձը ինչքան աշխատում էր, չէր կարողանում ազատուի,
ցաւից փշաքանում էր, երբեմն գլուխն էր մօտեցնում պոչին,
երբեմն մարմինն էր դէս ու դէն նետում: Ոգնու փշերը ա-
մուր ու սուր էին և անխնայ բռբրւում էին նրա մարմինն
ու գլուխը:

Հետզհետէ օձը թուլացաւ, մարմնի վրա բազմաթիւ վէր-
քեր բացւեցին, այլևս չէր սուրում, միայն ցնցւում էր ամ-
բողջ մարմնով:

Ոգնին կծկւած էր ամուր, օձի պոչը պինդ կծած:

Բաւական ժամանակ անցաւ, մինչև օձը բոլորովին ան-
շարժացաւ: Արդէն սատկել էր:

Ոգնին քաց թողեց նրա պոչը, զգուշութեամբ մի քանի
անգամ հանեց իր գլուխը, դիտեց շուրջը, նայեց օձին, դնաց
ու ծածկւեց մօտակայ թփերի տակ:

Գ ը ի ը՝ Ի՞նչ էր անում ոգնին, երբ օձի հետ կուխ է ընկնում:

Ա ո ա ծ.— Օձը իր շապիկը կը փոխի, բնութիւնը չի փոխի:

Հ ա ն ե լ ու կ.— Քանի կտրեմ կերկարի, քանի տաշեմ կը հաս-
տանայ:

կիզիչ—այրող:

պապանձւել—ձայնը կտրւել, լռել:

պահ—ժամանակ, միջոց:

հետզհետէ—քիչ-քիչ, կամաց-կամաց:

ցնցել—թափ տալ, յանկարծ շարժել:

մօտակայ—մօտիկ եղող, մօտիկ:

1. Ի՞նչով է տարբերում արտն արօտից:

2. Խորովել, տապակել, եփել, խաշել, ի՞նչ տարբերութիւն:

3. Հաւաքւել էին ձորի գլխին. այսինքն հրտեղ:

4. Ի՞նչ ասել է՝ թռիչքներ էր անում:

96. Կարմրակապտար



Ասուած թռչուններին ստեղծելիս՝
ոտներ տւաւ ոստոստեն, թևեր տւաւ որ
թռչեն, կտուց տւաւ որ ուտեն, ուտեն
ու երգեն:

Երբ բոլոր թռչունները պատրաստ
կանգնած էին նրա չորս կողմը, Ասուած քաց արաւ իր ներ-
կերի տուփը և սկսեց գոյն-գոյն ներկել նրանց փետուրները:
Աղաւնին դուրս եկաւ կապոյտ, գեղձանիկը դեղին, ագ-
ռաւը սև, ճայր սպիտակ, և այսպէս բոլոր թռչուններին ներ-
կեց Ասուած ու գոյնզգոյն զարդարեց:

Միայն մնաց մէկը, որ չէր ուղեցել միւսներին բոթել ու
առաջ անցնել, և վերջապէս նա էլ որ մօտ եկաւ, էլ ներկ չէր
մնացել: Ասածու բոլոր գոյները հատել էին: Մնացել էին
դատարկ ամանները:

Խեղճ թռչունը սկսեց լաց լինել, որ բոլոր ընկերները սի-
րուն-սիրուն փետուրներ ունեն, իսկ ինքը չէ:

—Լաց մի լինի,—ասաւ Ասուած, մի բան կանենք: Ամեն
մի ամանում դեռ քիչ մնացել է: Մօտ արի, տեսնեմ:

Ասաւ, առաւ վրձինը ու մնացած ներկերը քսեց քսմանց
թռչունի փետուրներին: Այստեղ կապոյտ, անտեղ գորշ, մի կը-
տար դեղին, մի կտոր կանաչ, մի կէտը սպիտակ, էն մի կէտը սև,
պիսին կարմիր, ու դուրս եկաւ խառնուտիկ կարմրակապտար:

97. „Պօղոս-Պետրոս“

1.

Վաղճը, երբ մօտ էր երկրին երկինքը
ու խուճ էր դեռ մարդկանց Տէրն-Ինքը,
էն լաւ ժամանակ երկու մանուկներ
ունէին մի չար, մի անսիրտ խորթ մէր:

— Կորէք, գնացէք, աշխատանք արէք,
աշխատանք արէք ու բերէք կերէք:

Ինչ էք թափթըփել անգործ ու անբան,
հասած տղերք էք հինգ-վեց տարեկան...

Էսպէս բարկացաւ մի օր խորթ մէրը,
ճիպոտներ տուաւ, զրրկեց հորթերը:

Անհանգիստ հորթեր, ամառուան շոք օր՝
կէտ արին, փախան, ընկան սար ու ձոր:

Նրբանց ետեկց, լալով, հեալով,

փոքրիկ որբերը՝ քարեքար գալով՝

վազ էին տալի անտառի միջուճ,

վազ էին տալի ու իրար կանչում:

— Պօղոս, գտար:

— Չէք:

— Պետրոս, գտար:

— Չէք:

— Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ...

— Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ...

2.

Շատ որ ման եկան՝ խեղճերն

յոգնեցին:

Եկան՝ խորթ մօրը լալով պատմեցին:

— Նանի, այ նանի, կորան հորթերը...

— Վայ, գետինն անցնէք, ճրչաց խորթ
մէրը:

— Թող դուք կորչէիք հորթերի տեղակ



անտակ ձորի մէջ, անշարժ քարի տակ:
Մի արջ պատահէր, մի գաղան, մի գէլ,
որ չէի տեսել ձեր շուքը մէկ էլ...

Դէ, ետ գնացէք, գնացէք, կորէք:

մինչև չը գտնէք հորթերը բերէք՝

աչքիս չերեաք, այ աչքիս փշեր,

թէ չէ կը սպանեմ ես ձեզ էս գիշեր...

Ու ճիպոտն էլ ետ իրենց թաթերին,

յոգնած ու սոված, արցունքն ալտերին,

փոքրիկ որբերը՝ անտառի միջուճ,

գիշերւան կիսին լալիս են, կանչում:

— Պօղոս, գտար:

— Չէք...

— Պետրոս, գտար:

— Չէք:

— Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ...

— Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ...

3.

Անտէր հորթերը չը կան ու չը կան:

Ճարները կտրած խեղճերը եկան,
լալով չոքեցին:

— Տէր Աստուած, ասին,

ինչ կըլի, զըթա՛ս՝

գոնէ թևեր տաս,

թևեր տաս՝ թռչենք,

թռչենք ու կորչենք,

որ էլ չը տեսնի մեզ մեր խորթ մէրը,

մինչև որ գտնենք կորած հորթերը...

Հէնց ասին-չասին անմեղ բերանով,

Աստուած որոտաց իր գթոտ ձայնով:

— Ահա ձեզ թևեր, սիրուն երեխէք,



Թրուշուններ զառէք, թռած ման եկէք,
որ էլ չը տեսնի ձեզ ձեր խորթ մէրը,
մինչև որ գտնէք կորած հորթերը:
Գիշերը քնէք ծառերի ճիւղին,
ծեղն ու ծղօտը արէք անկողին,
ապրուստ էլ կերէք իմ լի սեղանից,
երբ որ դատարկուն եղաք ձեր տանից...

4.

Էսպէս վերկից հէնց կանչեց Ասուած,
փոքրիկ որբերը փոխւեցին յանկարծ
ու թևեր առան,
թռուշուններ զառան.
ու թևեր առած՝
Թրուշուններ զառած՝
դեռ մինչև էսօր,
ընկած սար ու ձոր,
ծըռում են, մընչում,
մէկ մէկու կանչում.

— Պօղոս, գտա՞ր:

— Չէ՛ք:

— Պետրոս, գտա՞ր:

— Չէ՛ք:

— Վայ-վայ, վո՛ւ-վո՛ւ:

— Վայ-վայ, վո՛ւ-վո՛ւ:

զթալ—մեղքանալ:

մնչել—կամաց, մեղմ կանչել:


ծեղ—փոքրիկ ծղօտ:

դատարկուն—տնից տեղից զրկւած:

կէտ անել—երբ հորթերը պոչերը տնկում են ու փախչում:

1. Ո՛վ է Տէր-Ինքը:

2. Ի՞նչ տեսի է՝ հորթերը զրկել, բարեբար ընկնել, գետինն
անցնէք:



98. Զախչախ քաղաւորը

1.

Լինում է, չի լինում մի աղքատ ջաղացպան:

Մի պատռած քուրք հագին, մի ալրոտ փոստալ գլխին
ապրելիս է լինում դեռի ափին, իր կիսաւեր ջաղացում: Ու-
նենում է մի մոխրոտ բաղարճ ու մի կտոր պանիր:

Մի օր գնում է, որ ջաղացի ջուրը թողնի, գալիս է տես-
նում՝ պանիրը չը կայ:

Մին էլ գնում է ջուրը կապի, գալիս է տեսնում բաղարճը
չը կայ:

Էս ո՞վ կը լինի, ո՞վ չի լինի: Մտածում է մտածում ու
ջաղացի շէմքում թախարդ լաբում: Առաւօտը վեր է կենում
տեսնում՝ մի աղւէս է ընկել մէջը:

—Հը՛, գող անիծւած, դու ես կերել իմ պանիրն ու բա-
ղարճը հա՛. կաց՝ հիմի ես քեզ պանիր ցոյց տամ:—Ասում է
ու լինգը վերցնում է, որ աղւէսին սպանի:

Աղւէսը աղաչանք պաղատանք է անում. «Ինձ մի սպանի,—
ասում է,—մի կտոր պանիրն ինչ է, որ դրա համար ինձ
սպանում ես: Կենդանի բաց թող, ես քեզ շատ լաւութիւն
կանեմ»:

Չաղացպանն էլ լսում է՝ կենդանի բաց է թողնում:

2.

Էս աղւէսը գնում է էտ երկրի թագաւորի աղբանոցում
ման է գալի՝ ման, մի ոսկի է գտնում: Վազ է տալի թագա-
ւորի մօտ:

—Թագաւորն ապրած կենայ, ձեր կտոր մի տւէք, Չախ-
չախ թագաւորը մի քիչ ոսկի ունի, չափենք, ետ կը բերենք:

—Չախչախ թագաւորն հո՛ւ է:

—Դու դեռ չե՛ս ճանաչում,—պատասխանում է աղւէսը:
Չախչախը մի շատ հարուստ թագաւոր է, ես էլ իր վեզերն
եմ: Կտոր տուր, տանենք ոսկին չափենք, յետոյ կը ճանաչես:

Կտոր առնում է տանում, աղբանոցում գտած ոսկին ամ-
րացնում կտաի ճեղքում, իրիկունը բե-
րում, ետ տալիս:



—Օ՛ֆ, ասում է, զօռով չափեցինք:

—Մի՛թէ ճշմարիտ սրանք կտաով ոսկի
են չափել,—մտածում է թագաւորը: Կտոր
թափ է տալի, զընգալէն մի ոսկի է վէր
ընկնում:

Միւս օրը աղւէսը ետ է գալիս՝ թէ Չախչախ թագա-
ւորը քիչ ակն ու մարգարիտ ունի. ձեր կտոր տւէք, չա-
փենք, կը բերենք:

Կտան առնում է տանում: Մի մարգարիտ է գտնում,
կոխում է կտաի արանքը, իրիկունը ետ բերում:

—Օ՛ֆ, ասում է, մեռոնք մինչեւ չափեցինք:

Թագաւորը կտոր թափ է տալի, մարգարիտը, գուրս է
թռչում:

Մնում է զարմացած, թէ էս Չախչախ թագաւորն ինչ-
քան հարուստ պէտք է լինի, որ ոսկին, ակն ու մարգարիտը
կտաով է չափում:

3.

Անց է կենում մի քանի օր: Մի օր էլ աղւէսը գալիս է
թագաւորի մօտ խնամախօս, թէ՛ Չախչախ թագաւորը պէտք
է ամուսնանայ, քո աղջիկն ուզում է:

Թագաւորն ուրախանում, աշխարհքով մին է լինում:

—Դէ, գնացէք, ասում է, շուտ արէք, հարսանիքի պատ-
րաստութիւն տեսէք:

Թագաւորի պալատում իրար են անցնում, հարսանիքի
պատրաստութիւն են տեսնում, իսկ աղւէսը Չաղացն է վա-
զում:

Վազում է, Չաղացպանին աչքալուս քալի թէ՛ հապա
թագաւորի աղջիկը քեզ համար ուզել եմ: Պատրաստ կաց, որ
գնանք հարսանիք անենք:

—Վայ, քո տունը քանդւելի, այ աղւէս, էտ ինչ ես արել:
Ես հո՛ւ, թագաւորի աղջիկը հո՛ւ: Ոչ ապրուստ ունեմ, ոչ տուն
ու տեղ, ոչ մի ձեռք շոր... Հիմի ես ինչ անեմ...

—Դու մի վախենայ, ես ամեն բան կանեմ,—հանգստաց-
նում է աղւէսը ու ետ վազում թագաւորի մօտ:

Վազելով ընկնում է պալատը. «Հայ, հարայ, Չախչախ
թագաւորը մեծ հանգէսով գալիս էր որ պսակւի: Ճամփին
թշնամի գօրքերը յանկարծ վրա տւին, մարդկանց կտորեցին,
ամեն բան տարան: Ինքը ազատւեց փախաւ: Չորում մի Չա-
ղաց կայ, եկել է մէջը մտել: Ինձ ուղարկեց, որ գամ իմաց
անեմ, շոր տանեմ, ձի տանեմ, գայ պսակւի, շուտով գնայ,
որ թշնամիներէց վրէժն առնի»:

Թագաւորն իսկոյն ամեն բան պատրաստում է, տալիս աղւէսին, հեան էլ շատ ձիաւորներ է դնում, որ պատուով ու փառքով իր փեսին քաղաք բերեն:

4.

Գալիս են հանդէսով շաղաքի դռանը կանգնում: Չաղաք-պանի քուրքը հանում, Թագաւորի շորերը հագցնում, նստեցնում են նոյն դիմին: Շրջապատւած մեծամեծներով, առջևից ձիաւորներ, ետևից ձիաւորներ—էսպէս հանդէսով բերում են Թագաւորի պալատը: Իր օրումը պալատ չը տեսած շաղաքպան—շրջկլւած, բերանը բաց, մին չորս կողմը, մին հագի շորերին է նայում, խլըշկոտում ու զարմանում:

—Էս ինչո՞ւ չը տեսի նման դէս ու դէն է նայում, աղւէս ախպէր,—հարցնում է Թագաւորը:—Կարծես տուն չը լինի տեսած, շոր չը լինի հագած:

—Չէ, դրանից չի,—պատասխանում է աղւէսը:—Նայում է ու համեմատում իր ունեցածը օրտեղ, էս օրտեղ...

Նստում են ճակի: Տեսակ տեսակ կերակուրներ են բերում: Չաղաքպանը չի իմանում որին ձեռք տայ կամ ինչպէս ուտի:

—Ինչո՞ւ չի ուտում, աղւէս ախպէր,—հարցնում է Թագաւորը:

—Գալու ժամանակ ճամփին որ կողոպտեցին, նրա համար միաք է անում: Չէք կարող երևակայել, տէր Թագաւոր, թէ ինչքան բան տարան և վերջապէս ինչ անպատուութիւն էր հասնում Թագաւորի համար: Ի՞նչպէս հաց ուտի,—պատասխանում է աղւէսը հառաչելով:

—Բան չը կայ, դարդ մի անի, սիրելի փեսայ, աշխարհք է, էսպէս կը պատահի,—խնդրում է Թագաւորը:—Սլոժ հարսանիք է, ուրախանանք, քէֆ անենք:

Ու քէֆ են անում, ուտում, խմում, ամուսնանում, պար գալիս, եօթն օր, եօթը գիշեր հարսանիք անում: Աղւէսն էլ դառնում է բաւոր:

5.

Հարսանիքից յետոյ Թագաւորը իր աղջկանը մեծ բաժինք է տալիս ու հանդէսով ճամփայ դնում: Չախչախ Թագաւորի հետ:


—Կացէք, ես առաջ գնամ, տունը պատրաստեմ, դուք իմ ետևից եկէք,—ասում է բաւոր աղւէսը ու վազ տալի:

Վազ է տալի վազ, տեսնում է՝ մի դաշտում մեծ նախիր է արածում:

—Էս ո՞ւմ նախիրն է:

Ստում են, —Շահ Մարինը:

—Պա՛, Շահ Մարի անունը էլ չը տաք, ~~չէ~~ Թագաւորը նրա վրա բարկացել է, զօրքով իմ ետևից գալիս է. ով նրա անունը



տւաւ՝ գլուխը կարելի էր տայ: Որ հարցնի թէ ումն է, ասէք՝ Չախչախ Թագաւորինը. թէ չէ՝ վայն եկել է ձեզ տարել:

Վազ է տալիս վազ, տեսնում է՝ ոչխարի հօտը սարերը բռնել է:

—Էս ո՞ւմն է:

—Շահ Մարինը:

Հովիւներին էլ նոյնն է ասում:

Վազ է տալիս վազ, տեսնում է՝ բնդարձակ արտեր, հրնձուրները միջին հնձում են:

—Էս ո՞ւմ արտերն են:

—Շահ Մարինը:

Հնձուրներին էլ նոյնն է պատւիրում:

Վաղ է տալիս՝ Վաղ, տեսնում է՝ անմեղ խոտհարքներ:

— Էս ումն են:

— Շահ-Մարինը:

Խոտ հարողներին էլ նոյնն է ասում:

Հասնում է Շահ-Մարի պալատին:

— Շահ-Մար, ա՛յ Շահ-Մար, — գոռում է հեռից վազելով. — քո տունը չը քանդւի, միամիտ նստել ես: Թագաւորը քեզ վրա բարկացել է, մեծ զօրքով գալիս է, որ քեզ սպանի, տուն ու տեղդ քանդի, տակն ու վրա անի, ունեցած չունեցածդ էլ Թագաւորական գրի: Մի անգամ քեզ մօտ մի վառիկ եմ կերել, էն աղ ու հացը դեռ չեմ մոռացել: Վաղեցի, եկայ որ քեզ իմացնեմ: Շուտ արա, գլխիդ ճարը տես, քանի չի եկել:

— Ի՞նչ անեմ, ուր գնամ — հարցնում է սարսափած Շահ-Մարը ու տեսնում է, որ ճշմարիտ, հեռից փոշի բարձրացնելով գալիս է Թագաւորը:

— Փախի, չուտով ձի նստի, փախի, էս երկրից կորի, էլ ես չը նայես:

Շահ-Մարը իսկոյն նստում է իր լաւ ձին ու փախչում իր երկրից:

6.

Աղւէսի ետեից գալիս են հարսանքաւորները: Գալի են գոռնով, թմբուկով, երգով, զօրքով, հրացան արձակելով ու աղմուկով:

Գալիս են Չախչախ Թագաւորն ու իր կինը ոսկեզօծ կառքի մէջ. նրանց առջևից ու ետեից անհամար ձիաւորներ:

Հասնում են մի դաշտի: Տեսնում են՝ մեծ նախիր է արածում:

— Էս ումն նախիրն է, — հարցնում են ձիաւորները:

— Չախչախ Թագաւորինը, — պատասխանում են նախարարանները:

Անց են կենում: Հասնում են սարերին, տեսնում են ոչ-խարի սպիտակ հօ որ սարերը բռնել է:

— Էս ումն է, — հարցնում են ձիաւորները:

— Չախչախ Թագաւորինը, — պատասխանում են հովիւները:

Անց են կենում: Հասնում են ընդարձակ արտերի:

— Էս ումն արտերն են:

— Չախչախ Թագաւորինը:

Հասնում են խոտհարքներին:

— Էս ումն են:

— Չախչախ Թագաւորինը:

Ամենքը մնացել են զարմացած: Չախչախ Թագաւորն ինքն էլ քիչ է մնում խելքը թռցնի:

Էսպէսով աղւէսի ետեից գալիս են հասնում Շահ-Մարի պալատներին:

Քաւոր աղւէսն էնտեղ արդէն տէր է դառել, կարգադրութիւններ է անում: Ընդունում է խնամքներին ու նորից ըսկրսում են քէֆը:

Հէյ, ջան երեխէք, քէֆ արէք դուք էլ:

Էսպէս հարսանքը Թորք կը լինի մէկ էլ,

որ Չաղացականը դառնայ Թագաւոր,

Չաղացը՝ պալատ, աղւէսը՝ քաւոր:

քուրք — (թուրք.) — մուշտակ:

փսստալ — կարճ փափախ:

բաղարճ — ալանի հաց:

լինգ — քլունգ:

վէղիր — բարձր պալատական, մեծ մինիստր:

ակը — Թանգազին քար:

խնամախօս — մէկի աղջիկը կամ տղան ուղեւոր եկած մարդ:

խլրչկոտալ — աչքերը չռել, զարմանալ:

չըտես — ոչինչ չը տեսած մարդ:
քաւոր — խաչեղբայր, հարսանիքին խաչ բանագ:
խոտհարք — խոտ հնձելու տեղ: Ասած արժանները:

1. Ալիւր — ալրոտ, մոխիր — մոխրոտ, ցեխ — ..., կեղտ — ...,
մուր — ..., թանաք — ...: Ինչ է ցոյց տալիս ոտ մասնիկը...

2. Կիսաւեր, կիսաբաց, կիսաքանդ. — ասա այս բառերի առա-
ջին արժատը:

3. Արանք — ի տեղ վերեւ որ բառն է գործածւած:

4. Ասա ուրիշ խօսքով՝ աշխարհքով մին է լինում, աշքա-
լուս է տալիս, պատրաստութիւն է տեսնում, վայն եկել է
ձեզ տարեր, աղուհացը չեմ մոռացել, քիչ է մնում խելքը
թոցնի, գլխիդ ճարը տես:

4. Ե՛րբ ենք ասում մի ձեռք շոր:

99. Գառնիկ Ախպէր

1.

Ե կու որբեր,
քուր ու ախպէր,
կորած գնում են
հեռու.

արևը վառ,
ճամփէն երկար,
ոչ աղբիւր կայ,
ոչ առու:

Քոյրը մեծ էր,
ոնց որ լինէր
կը համբերէր արևին,

բայց ախպէրը փոքրիկ էր գեռ,
չէր գիմանում ծարաւին:



Գրնում են, գրնում, տեսնում են ճամփին
կովի ոտնատեղ՝ մէջը լիքը ջուր:

«Քուրիկ ջան, քուրիկ, ես շատ եմ ծարաւ,
ինչ կը լինի թողնես խրմեմ մի պուճուր»:

Չէ, ախպէր ջան, չէ, դու կով կը դառնաս,
կովի կըճղակի տեղից մի խմի.

մի քիչ էլ կացի... քիչ էլ որ կենաս,
առաջներս պաղ աղբիւր կայ հիմի:

2.

Երկու որբեր,
քուր ու ախպէր,
գնում, գնում են հեռու.
արևը վառ,
ճամփէն երկար,
ոչ աղբիւր կայ, ոչ առու:

Գրնում են, գրնում, տեսնում են ճամփին
իւր ոտնատեղ՝ մէջը լիքը ջուր:

«Քուրիկ ջան, քուրիկ, ես շատ եմ ծարաւ,
ինչ կը լինի թողնես խրմեմ մի պուճուր»:

Չէ, ախպէր ջան, չէ, դու ձի կը դառնաս,
ձիու սմբակի տեղից մի խմի.

մի քիչ էլ կացի, քիչ էլ որ կենաս՝
մօտիկ մի գուլալ աղբիւր կայ հիմի.

3.

Երկու որբեր,
քուր ու ախպէր,
գրնում, գրնում են հեռու.
արևը վառ,
ճամփէն երկար,
ոչ աղբիւր կայ, ոչ առու:

Գրնում են, գրնում, տեսնում են ճամփին
 գառան ոտնատեղ՝ մէջը լիքը շուր:
 Փորրիկ ախպէրը էլ չի համբերում,
 բըրձից թաքուն խըմում է պուճուր:

Քոյրը մին էլ ետ է նայում,
 որ մի գառը մզկա ալի
 իր ետեկից տըխուր մայում
 ու մայելով վազ է տալի:

—Ա՛խ իմ Մանուկ, որք ու անտէր,
 իմ անկողն, Գառնիկ-Ախ պէր,
 էլ ճից անեմ, ինչ անեմ ես...
 Կանչում է խեղճ Մանուկն էսպէս



4.

Սոված ու ծարաւ գրնում են, գրնում.
 գրնում են, գրնում, չը գիտեն թէ ուր.
 վերջապէս մի հով անտառ են մըտնում.
 անտառի միջին մի գանգակ աղբիւր:
 Կուշտ-կուշտ խըմում են էն սառը ջրից:

վայ է տալիս,
 լալիս, լալիս.
 բայց էլ ինչ անէր
 բայց էլ հնց անէր...
 երբ ու որքեր,
 բուր ու ախպէր,
 գառն ու աղջիկ
 մոլորւած,
 հեռու հանգում
 տըխուր-տըրտում
 գրնում, գրնում են
 կորած

յետոյ Մանուկը ծառն է բարձրանում.
 Գառնիկ-Ախպէրն էլ ծառերի տակին
 մուշ-մուշ արածում, արոճ է անում.
 Իրիկեան պահին խրխինջ ու բըրբըջ...
 լըցւում է յանկարծ անտառն աղմուկով,
 մօտիկ են գալի ձայները քիչ-քիչ...
 լըսում են նրբանք ահով ու զողով...
 Եւ ահա ոսկի սանձերից բռնած՝
 բերում են ջրին ձիանքն արքայի.
 ամենի ձիանքն աղբիւրից խըրտնած՝
 ծառ-ծառն են կանգնում ու մօտ չեն գալի:
 Մըտիկ են տալի ծառայքը մէկ էլ,
 որ սիրուն մի ցուր ջրի մէջն ընկել,
 ու շուրը բանի ալիք է տալի.
 նա էլ ջրի հետ գնում է գալի.
 նայում են վերեւ ինչ տեսնեն, Աստուած,
 մի հուր-հրեղէն, մի շարմաղ աղջիկ,
 ծառի ճիւղերին նազելի նստած՝
 նայում է ներքեւ լըռիկ ու մնջիկ:
 Ու ծառաները գառն ու աղջան
 առնում են բերում պալատն արքայի.
 «Ո՛վ ես դու, սիրուն, հարցնում է արքան,
 անբան գառան հետ ինչ ես ման գալի»:
 Կանգնում է աղջիկն էստեղ նորից նոր
 պատմում է, ինչ որ պատմեցի ես ձեզ,
 թէ ապրած կենաս, անեղ թագաւոր,
 մեր բանը, հապա, էսպէս ու էսպէս...
 Թագաւորն երբ որ լըսում է մին-մին՝
 և շատ ցաւում է և շատ հաւանում,
 անում է նրան իրեն թագուհի,
 եօթն օր, եօթ գիշեր հարսանիք անում:

Պայառումը կար նախանձոտ ու շար
մի պառաւ կնիկ, հընուց աղախին.
նախանձում է սա, թէ ոնց պիտի գոյ
մի որբ՝ թագուհի դառնայ սեր գլխին.
Մի օր էլ գալի, գըլուխ է տալի,
առաջը կանգնում կեղծաւոր գովաւ.
— Արի բեզ տանեմ, սիրուն թագուհի,
չըփ-չըփ յողացնեմ շարմաղ էն ծովում.
Խարում է, տանում, գցում ծովի մէջ,
շորերը առնում, ետ բերում քաղաք,
հագցընում իր սեւ, դարձւոր աղջկան,
պայառ ուղարկում թագուհու տեղակի
Երեսը ծածկած թանձր շղարշով
պայառ է մտնում էն սուտ թագուհին,
ու թագաւորն էլ կասկած չի տանում,
թէ ով է եկել բազմել իր գահին.
Բայց ինչ անում են, ինչ որ չեն անում,
չեն կարում էլ տուն բերեն գառնիկին.
բըզդում էս ափից էն ափն է վազում,
բըզդում էն ափից ետ գալի կրկին.
Ինչ անենք սրան, հնց անենք սրան.
Պառաւն ու աղջիկ շատ միտք են անում,
վերջը գալիս է դարձւոր թագուհին
անկողին մըանում, հիւանդ ձկանում.
— Վայ, աման, մեռայ... հայ, հարայ, մեռայ...
«Մ'րտեղդ է ցաւում, սիրուն թագուհիս,
ինչ կուզես, ասա», — խնդրում է արքան,
խնդրում, գըլխովը պտոյտ է գալիս.
— Ախորժակ չունեմ... ես բան չեմ ուզում...
Գառնիկի մըսից որ լինի կուտեմ...

Եւ թագաւորը մնում է սառած,
սառած, շրւարած, կանգնած կնոջ դէմ.
«Բայց չէ որ, Մանուշ, քո եղբայրն է նա,
հնց ես նըրա միսն ուզում դու հիմա»..
— Ի՞նչ անեմ, ինձից նա աղիգ հօ չի.
եւ որ մեռնում եմ, թող նա էլ կորչի...
— Վայ, հարաւ, մեռայ... հայ, հարայ, աման...
Ու թագաւորը տալիս է հրաման.

«Գրաւ վառեցէք,
դանակ սրեցէք,
բերէք մորթեցէք Ախալէր-Գառնիկին,
որ առողջ լինի իր բոյրը տիկին»:
Թագաւորն էսպէս պատւէր է տալի,
պատւէր է տալի ու գուրս է գալի,
գընում է ծովափ սաստիկ սրտնեղած,
թէ որքան Մանուշն անսիրտ է եղած...

Մայում է, լալիս Գառնիկ Ախալէրը,
լացացնում է ժեռ ծովի ափերը,



մի ափից բըռնած միւս ափն է թռչում,
մարդկային լեզուով բըրրի կանչում.

—Քուրիկ ջան, քուրիկ, կըրակ են վառում,
կըրակ են վառում, դանակ են սըրում:
Քուրիկ ջան, քուրիկ, լըսիր անդունդից,
հասիր անդունդից, սպանում են ինձ:
Լսում է արքան՝ տեղը քար կըտրած,
և ալիքների միջիցը յանկարծ
շատ ծանօթ մի ձայն հեռու, խնու ու խոր,
կանչում է քնքուշ, կանչում է անգոր.
«Ախպէր ջան, ախպէր, անհէր ու անմէր,
անքուր ու անտէր իմ Գառնիկ-Ախպէր,
դժուար է տեղըս, ձէնս չեն լսում,
ձէնքս չեն լըսում, ձեռքս չի հասնում:
Ախ, չար պառաւը սև արաւ օրըս,
այժմ էլ կը սպանի Գառնիկ-ախպօրըս»:

7.

Լսում է արքան, պալատն է վազում,
պատուում է քօղը թագուհու ղէմքի.
պատուում է, տեսնում... բայց ի՞նչ է տեսնում,
ո՞վ է իր գահին եղել թագուհի...
— Եկէք, ձկնորսներ, ուռկան ձգեցէք,
հանեցէք ծովից մեր լաւ Մանուշին.
Եկէք, գահիճներ, ծովը ձգեցէք
կախարդ պառաւին ու էս հըրէշին.
Էսպէս բարկացած գոռում է արքան,
ժողովուրդն ամեն թընդում է ցաւից,
գալիս է կանգնում, ձրգում է ուռկան,
անմեղ Մանուշին հանում է ծովից.
Գառնիկ-Ախպէրն էլ անչափ խնդումից
պատուում է անքան ոչխարի մորթին,
դուրս գալի, կանգում սիրուն պատանի,

ուրախ ու պայծառ՝ իր քրոջ կողքին:
Իսկ չար պառաւին, իրեն աղջկան,
որ խաբել էին աշխարհ բովանդակ,
վըղներէից կապում ջաղացի քարեր,
ձրգում են ծովի անդունդը անտակ:

Երկու որբեր,
քուր ու ախպէր,
առած պատիւ, գահ ու թագ,
աշխարհքն էի
խաղաղ ու լի,
չարը թագաւած ծովի տակ:

ամենի—ահագին:


ծառս—ծառս կանգնել—եռեի ստեղծի վրա կանգնել.
շարմաղ գեղեցիկ, արմազան:
անքան—չը խօսող, չը հասկացող:
դարձուր—դանազան կերպարանք ընդունել կարեցող:
խնդում—ուրախութիւն:
բովանդակ—ամբողջ, ողջ:

1. Քուր ու ախպէր—ուրիշ ինչպէս կասես, իսկ ոտնատեղ մի պուճուր:
2. Ինչո՞վ է դանազանում կճղակը սմբակից:
3. Անտէր, անլեզու. իսկ ինչպէս կասես աչք չունեցող, գլուխ չունեցող, մաղ, քիթ, հոդ, տուն չունեցող:
4. Խրխինջ ու քրքիջ. ձգեք են խրխնջում և ձգեք բըրբը ջուլմ:
5. Երբ ենք ասում ալիքն ջրել, ձիերը ջրել:
6. Գահին բաղմել—ուրիշ ինչպէս կասես:

7. Ինչ է նշանակում—շխույթը պտոյտ է գոյիս, պառաւր
սկ արաւ օրս:

8. Քողի տեղ վերե ինչ բառ է գործածւած:

9. Ուղկան, թոռ էլ ինչով են ձուկ որսում:



ՑԱՆԿ

1* Հաւատարմութիւն	3
2. Աստուծոյ սեղանը	4
✓ 3* Հոգիի հրաժեշտը Շիրէտեց	6
4. Ծիծեռնակների շուն	6
5* Ծիծեռնակ, Դողդիւսանի	8
6. Խելօք երեխաները	8
7* Դպրոցի ճամփան	10
8. Դասին	11
9* Գրիչ	12
10. Երանի	12
11* Կարգան, մի շուն	14
✓ 12. Սուտասանը	14
✓ 13* Փիսօն, ժողով	16
14. Փոքրիկ խանութպանը	16
✓ 15* Աշուն	19
16. Խոհանոցում	20
17. Զուրբ փախաւ	21
18. Ամպի երեխաները	22
✓ 19* Աշնան վերջը	23
20. Եկեղեցին կորել է	23
21* Եզենին	24
22. Կիկ տի մահը	25
23. Այոն ու Ոչը	29
24* Քամին ու մարագը, Ա. Խնկոյեանի	30
✓ 25. Կացին ախպէր	31

✓ 26*	Ուրազ և ողոց, ժողով	32
27.	Կրակը, Սիմանի	33
28.	Աւագ եղբայրը, ըստ Տաղորի	34
29*	Զմեռ պապին, Ա. Խնկոյեանի	34
✓ 30*	Շուկն ու կատուն	35
31.	Վաճառական, ըստ Տաղորի	38
✓ 32*	Ամպն ու սարը	39
33.	Շալակտարը	40
34.	Սղէտը բաժանարար	42
35.	Ինձ հով չի սիրում	43
36.	Իշուկի գանգառը	44
37.	Տուրաբ փչեց, Մ. Նալբանդեանի	46
38.	Ածխաբարն ու պարոնը, ըստ Ամիշի	46
39.	Փոքրիկ մշակը	48
39*	Աղւէսն ու իր պոչը, Ա. Խնկոյեանի	51
40.	Բրդոտ խաղընկերը	51
41.	Զմեռը	53
42*	Նկարիչ, Ա. Խնկոյեանի, փոփ	55
43.	Նամակ	55
44.	Համիկի աղօթքը	56
45*	Ծաղիկները	57
46.	Ոսկի իլիկը, Ա. Խնկոյեանի	58
47.	Մի բաց նամակ ամենքին	63
48.	Փող	64
49.	Վէճ	65
50*	Գարնան կարօտ, Գ. Բաթիպայի	65
51.	Կէս խնձոր	65
✓ 52.	Տաւարածի ճաշը, Ղ. Աղայեանի ✓	67
53.	Արգար մարդիկ, Ա. Խնկոյեանի	67
✓ 54.	Կանանչ ախպէր	69
55.	Տղամարդը, ըստ Տաղորի	70
56.	Թէ ինչու են ծաղկում մանուշակները	71

✓ 57*	Մարտ	72 ✓
58*	Մանուշակ	73 ✓
59.	Նշենու ծաղիկը, ըստ Տաղորի	74
60*	Կանաչիւր, այգի, Ա. Խնկոյեանի	75
61.	Մշտական ճամփորդ	75
62*	Ծիծեռնակին, Ա. Խնկոյեանի	78
63.	Արագիւններ, Անդրեւէնից	79
64*	Արագիլ	84
✓ 65.	Մոզուկը, ըստ Մ. Սեփրեանի	84
66*	Գարուն, Հ. Հայրապետեանի	87
67.	Ոչ ոք չը կայ	88
68.	Հատիկի զարթոնքը	88
69*	Աօր, Րաֆֆի, փոփ	90
70.	Զիւռ տրտունջը	91
71.	Գիւղացին ու արջը, Ա. Խնկոյեանի	92
72.	Քւրէ իմ արեւը	94
73.	Կրեկի հատիկ	96
74.	Վախկոտ հանէսը	96
75*	Աքլորն ու մարգարիտը, Ա. Խնկոյեանի	98
76.	Անվախ Մարիամը	98
77*	Ուլունք, ժողովուրդ	99
✓ 78*	Տղան ու արեւը	100
✓ 79.	Ճամփորդներ	101
✓ 80.	Երկրի շուրջը	102
✓ 81*	Թռչունի մաածմունքը	103
82.	Թղթէ նաւակները, ըստ Տաղորի	104
83.	Մոծակի մահը, ըստ Ա. Խնկոյեանի	104
84.	Թրթուրն ու խխունջը	106
85.	Անճոռնի ճուտիկը	108
86*	Սարդը	110
87.	Մըջնոց	110
88*	Փայտփորը	112

89.	Մեխի պատմութիւնը	113
✓ 90.	Հովի անկողինը, Ղ. Աղայեանի	114 ✓
91.	Վուշ	115
✓ 92*	Գետակը	116
93.	Խրաւիլակ	117
✓ 94*	Կաղնու վարձւորները	118
95.	Ոգնին և օձը, ըստ Յ. Ապրեսեանի	119
96.	Կարմրակապար	121
✓ 97*	Պօղոս-Պետրոս	122
✓ 98.	Զախչախ թագաւոր	125
✓ 99*	Գառնիկ-Ախպէր	132

Մեր հեղինակութիւնները, մեր կազմած յօդւածները, մեր թարգմանութիւնները ստորագրութիւն չեն կրում:

ՀԱՆՔԼՈՒԿՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Գիր ու թուղթ	11	8. Արտ.	90
2. Երկինք և աստղեր	15	9. Այգի	91
3. Սամափար.	21	10. Ճամփայ	102
4. Բերան, ատամներ	28	11. Ծով ու նաւ	103
5. Գետ ու ափեր	41	12. Մրջնոց	112
6. Գետ ու կամուրջ.	41	13. Գետ.	116
7. Պատրոյգ	65	14. Հոր	120

2013

3681

ՀՀ Ազգային գրադարան



NL0061232

